





# ՈՒՂԵԳԻՐՔ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ  
ԽԱՅՐԿ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ  
Հեղինակ-Մուսուխչ պարի




ՏՊԱՐԱՆ "ՇԱՆՐ"  
ՂԱԼԱԹԻԱ

ՄԱՐԻ ՈՒՂԵԳԻՐԲ

ՄԱՐԻ ՈՒՂԵԳԻՐԲ







ԽԱՉԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Մ. Վ. Վ. Վ.

669094

# ՊԱՐԻ ՈՒՂԵԳԻՐՔ

Ս. Բաասապրեց

ԽՍ. ՉԻԿ ԽՍ. ՉԱՏՈՒՐԵԱՆ

Հեղինակ - Ռուսոցիչ պարի



ՏՊԱՐԱՆ «ՇԱՆՔ»

Ղ. Ա. Լ. Ա. Թ. Ի. Ա.

1911

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Պարի ուղեգիրք մը հրատարակելու մեր նպատակը եղած է, անոր մէջ ամփոփել զգեսաւորման (tenue), վայելչագիտութեան (maintien), առողջապահութեան (hygiène) եւ դաստիարակութեան (éducation) մասին կարեւոր տեղեկութիւններ: Համառօտիւ պիտի բացատրենք ի՞նչ է պարը, պարին ծագումը, իր հետաքրքրաշարժ պատմութիւնը հին դարերու մէջ եւ հետզհետէ կրած բարեփոխութիւնները մինչեւ մեր օրերը: Այս գործին մէջ մեր սիրելի ընթերցողներուն պիտի ներկայացնենք սայօնի կեանքին, կենցաղագիտութեան, տիրոջ բարեբերու եւ սովորութիւններու ծանօթութիւնները, զորս անհրաժեշտ կը նկատենք ամէն անհասի, գլխաւորաբար *ամէն պարողի*: Ասով կը կարծենք լրացուցած ըլլալ զգալի պէտք մը մեր մէջ, որով անհասներ պիտի գիտնան ուղղապէս եւ առանց վարանման հետեւիլ նշանակուած պայմաններուն, կեանքի բոլոր պարագաներու մէջ: Անհրաժեշտ *ամէն անհատի* ըսինք, որովհետեւ վերջապէս պարը՝ գլխաւոր առաջնորդը կ'ըլլայ մեկու մը՝ իր կրթութիւնը կատարելագործելուն մէջ, սաստիկ իր ֆիզիքական զարգացմանը եւ մշակողը իր բարոյական կեանքին: «Անհաս մը առանց պարի անկատար է» (Sans la danse l'individu est incomplète): Հետեւաբար անհասը չի կրնար փայլիլ աշխարհի մէջ, այն է մարդկային ընկերութեան մէջ: Պարին բոլոր սկզբունքներուն եւ կանոններուն պատճառաբանեալ բացատրութիւններուն մասին մեր խորհրդ-



դաժուրիւնները հիմնապէս փառում են ամենէն նշանաւոր հեղինակներու, գնահատում երեւելի անձնաւորութիւններու եւ նշանաւոր փիլիսոփաներու ու գրագէտներու գործերէն: Անոնց շատագուրութիւնները վաւերացում են տեսական փաստերով:


Վերջացնելով այս յառաջաբանը, կը յայտարարենք թէ բոլորովին *նոր* և *գործնական* մեթոտի մը միջոցաւ մեզ դիմող բոլոր յարգոյ ուսանողները կամ պարի հետեւողները դիւրապէս եւ կարն ժամանակի մը մեջ պիտի ըլլան *վարժ*, *սահուն պարողներ*, դասընթացքի միջոցին ուսանելով զգեսաւորման, փառածի, շարժումներու եւ ողջունելու բոլոր կերպերը, որոնք անհրաժեշտ են ո եւ կ պարողի, քանի որ անոնք պարին լրացուցիչ մասը կը կազմեն:

Պարի ուսուցման կարեւոր պատճօնին մեջ 12 տարուան մեր փորձառութեան եւ երկար ու յարատեւ գործունեութեան միջոցին մեր բազմաթիւ երկսեռ ուսանողներուն մեզ քաջալերելուն համար ե որ այս գործին աշխատասիրութեանը ձեռնարկեցինք:

Խ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Հեղինակ-ուսուցիչ պարի

Բերա 6/19 Յունիս 1911



## ԻՆՉ Է ՊԱՐԸ

“ՊԱՐԸ ՇԱՐՃՈՒԱԾՔԻ ԱՐՈՒԵՍՏՆ Է,”

Պարը ոտքերու զանազան շարժումներու, մարմնի և ձեռքերու կերպ կերպ շարժումներու, դարձումներու հեղինակութիւն մըն է (composition): Այդ բոլոր շարժումները, շարժումները, կ'ընկերանան տարբեր տարբեր կեցումներ (attitude) ձեւերու, որոնք կը կատարուին կանոնաւոր չափերով և ներդաշնակութեամբ, ճայնի և երաժշտութեան զանազան չափերու (measure) պահանջումին համեմատ: Ամէն պար իր մասնաւոր անունը ունի, զոր օրինակ, վալս, բոլֆա, ևլն., խնչպէս ունի իր յատուկ եղանակը երաժշտութեան մէջ: Պարելու ձեւին հրապոյրը կրկնապէս կ'աւելցնեն ողջոյնի (salut) և խոնարհութեան (révérence) յարգական նշանները: Շնորհալի շարժումներու և դարձումներու մէջ երբեմնի թեթեւակի ոտտումները մեծ դեր մը կը կատարեն պարին շքեղութիւնը աւելցնելու մասին: Մարմնի, ոտքերու և ձեռքերու զանազան շարժումներով պարը իբրեւ մարմնամարդ և միանգամայն իբրեւ գեղարուեստ ընդունուած է մրէտայէլեան դրութեան մէջ: Պարը տալի մը և փավալիէի մը կողմէ կրկնակ, համանման շարժումներու ամփոփումն է: Ամէնէն աւելի տարածուած և արուեստագիտական հաճոյքներէն և ժամանցներէն մին ըլլալով պարը, փրկուէտ և զօրացուցիչ վարժութիւն մըն է, և մասնաւոր կը նպաստէ երիտասարդներու

մարմնոյ բարեձևութեան, պահպանման և զարգացման :

Պարը բժիշկներուն ամէնէն լաւ և զօրեղ դեղն է : Ան ամէն կերպով արմուկներուն կ'ստեղծէ ազատ շարժումներ և կուտայ մաքի հանգիստ և զուարթացում : Պարը հաճոյք մըն է որ աշխարհի վրայ սփռուած է : Քեղարուեստներու մէջ կը մրցի ան իր բազմակողմանի հանգամանքներով և ամէն ուրիշ ժամանցներէ աւելի գնահատուած է : Պարը չսիրել՝ կորով չունենալ կը նշանակէ :

Պարը կ'առաջնորդէ գեղեցիկ և սիրուն բաներուն : Ամէնէն գեղեցիկ արուեստն է, կրնանք ըսել պարը, որ մարդկային հանճարէն ծնունդ առած է : Առանց պարահանդէսի ո և է տօնախմբութիւն կամ ուրախութիւն նուազ հաճոյական է : Երեկոյթի մը անհրաժեշտ պէտքերուն զլխաւորը ըլլալով, առանց անոր շատ անհամ բան պիտի ըլլար տօնոյթ մը սարքել և հետեւաբար իբրեւ հաճելի և միանդամայն օգտակար զբօսանք մը մուտք գտած է ամէն դասակարգի վերաբերող ընկերային ժամանցներու, ուրախութիւններու մէջ : Պարը՝ ինչպէս ուրիշ արուեստներ, ենթակայ է միշտ յառաջգիմութեան և միշտ կը զարգանայ քաղաքակրթութեան ճամբուն մէջ, իբրեւ անվիճելի անհրաժեշտութիւն մը : Ան հաճոյքի սիրելի աղբււր մը եղած է : Պարը՝ տղայոց ֆիզիքական կրթութեանը մէջ մեծ ծառայութիւններ մատուցած է :

Երաժշտութիւնը՝ այսինքն նուազը, որ այս տեսակ գեղարուեստական ժամանցներու և զուարթ պարագաներու մէջ իր կարեւոր բաժինը ունի և որ իր հոգեթով թրթուումներով զիտէ սարսուացնել մեզ և վերացնել, յափրշտակել մեր հոգիները և մանաւանդ բարոյական մեծ ազդեցութիւնով գեղեցիկին ճաշակը ներշնչել մեզի. այո՛, նուազը ընկերանալով պարին ոչ նուազ բարոյապէս օգտակար և հրահանգիչ դեր մը կը կատարէ, որուն հան-

դէպ անկարելի է որ անզգայ գտնուինք և ուրան ոնք անկէ ըմբռնած հաճոյքներնուս հետ վայելած օգուտնիս ալ :

Պարը՝ երաժշտութեան քոյրն է, երկուորեակ ծնած . (La musique et le danse sont deux sœurs jumelles) : Ուրեմն ան ազգականութեան կապով մը մեր բարքերուն մէջ է այսօր : Պարը արուեստ մըն է, մեր գեղեցիկ ապրելակերպին համար, կինը անոր կը պարտի իր հրապոյրները, իր վարժունքի վեհութեամբ : Մարդը իր ոյժը, կորովը և իր շնորհքը կը պարտի պաշ միավանկ բառին :

Պարը ուրեմն, պէտք չէ երբեք սխալ ըմբռնումներու, մեկնութիւններու և անիմաստ քմահաճոյքներու առարկայ ըլլայ : Ընդհակառակը, անժխտելի ճշմարտութիւն մըն է թէ պարը ֆիզիքական հիանալի և անզուգական մարզանք մըն է, որ ընկերային բարոյականի վրայ ունի իր կարեւոր ու մեծ դերը և ազդեցութիւնը :

Արուեստ մըն է պարը, զոր ամէն ոք պարտի մշակել, ինչ դիրքի, կացութեան և միջավայրի մէջ որ ալ գտնուի : Պարը՝ իր օրինական ձևերուն և գործածութեանը մէջ մեծագոյն սատարն է ֆիզիքական և բարոյական մշակման : Պէտք է միայն հմտանալ անոր ճշմարիտ պայմաններուն և պահանջուած եղանակով մը պարել, որ ատեն կրնայ տալ այն գեղարուեստական վայելքը որուն կոչուած է : Ահա՛ այդ սկզբունքին և զաղափարին վրայ է որ յօրինուած են պարերը իրենց հեղինակներէն : Պարը՝ ինչպէս երաժշտութիւնը, մարդուն հոգիին մէկ պէտքը կը կազմէ : Ան որ կ'զգայ անոր ճաշակը, պէտք է հետեւի անոր սկզբունքներուն և պայմաններուն, կա՛մ հրաժարի անկէ : Առանց զիտնալու պար և գոնէ հասկնալու երաժշտութիւն, կարելի չէ ճաշակել անոնց պարգեւած

վայելքը : Այն պատրանքի աշխարհին մէջ, ուր կ'ապ-  
րինք, սուրբինք պարը, որ յաճախ կը կերպարանափոխէ  
մեզ և որ ծաղկաւէտ նրբուղի մըն է, մեզ կեանքի  
կրագներուն, անուրջներուն առաջնորդող : Կտքաւա-  
զրութեան (chorégraphie) արուեստին վրայ լրացնելու  
համար այս գնահատումը, մենք հոս կուտանք միմիայն  
պարին գեղեցիկ սահմանումը, յիշելով բանաստեղծ Սի-  
մոնիդէսի սա բացատրութիւնը . «Պարը համբ բանաստեղ-  
ծութիւն մըն է» :

## ՊԱՐԻՆ ԾԱԳՈՒՄԸ

Ո՞ՒՐԿԷ Կ'ՍԿՍԻ ՊԱՐԸ ԵՒ Ո՞Վ ԵՂԱՒ ԱՆՈՐ  
Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՀԵՂԻՆԱԿԸ

Բոլորովին սխալ է ենթադրել թէ պարը մէկ երկու  
հարիւր տարուան գոյութիւն ունեցող ժամանց մըն է :  
Պատմութիւնը իր փայլուն ու ճշմարիտ նկարագրու-  
թիւններով հետաքրքրաշարժ կերպով գեղեցկօրէն ու  
բնականօրէն կը պատմէ պարին գոյութիւնը, որ դարե-  
րու հնութիւն մը ունի, ճանչցուած և յարգուած ամէնէն  
հին ազգերէն և ժողովուրդներէն և ողջունուած եր-  
կրպագութեան զանազան ձևերով :

Ահա թէ ուրկէ կ'սկսի պարը և ո՞վ եղաւ անոր  
առաջին հեղինակը .— Բնութիւնը, որ պարով օժտեց նախ  
իրերը, յետոյ կենդանիները և է՛ն հոքը մարդը : Իրե-  
րը . . . այո՛, այսինքն ծովը, հովը, ծառերը և տերեւնե-  
րը, որոնք հովին ազդեցութեան և ճնշումին տակ ու-  
նեցան իրենց շարժումները, տատանումները, զանազան  
ձևերու բնական շարժումներով մը : Ծովը, ջուրը, հո-  
վին ներգործութենէն և երկնային ոյժէ մը ազդուած՝  
սկսան խայտալ, ծածանիլ և փքանալ, իրենց փոփո-  
զէզ ալիքներով ու կոհակներով : Ծառերը և տերեւները,  
հովին մեղմ շունչին տակ կը շարժէին և սաստիկ ընդհա-  
րումներ, մեծ շարժումներ առաջ կը բերէին : Բնութենէն  
առաջ եկած այս արեւելքական ազդեցութիւնը, ոյժը,

իրերու առաջ բերած, պատճառած շարժումները տեսակ մը անդրատակ և ընտանի պարերու տեսարան մը կը պարզէին:

Կենդանիներն ալ, իրենց կարգին, ինչպէս իրերը, ունեցան ընականօրէն օժտուած իրենց շարժուածքները, խաղերը, տարբեր տարբեր կերպերով: Կենդանիներուն մէջ ամէնէն աւելի թռչունները ներշնչուեցան այս պարզեւատուութենէն: Չէ՞ք դիտած որ ատեն ատեն հաւաքուած կարգով կամ բոլորչի ձեւերով, անոնք կ'երգեն ու կը պարեն երկինքի վրայ իրենց թռիչքովը և երկրի վրայ իրենց թեթեւ օտոտումներովը՝ թառելու ատեն: Նշանաւոր գրագէտ Ժիւլ Վէրն սապէս կը պատմէ իր դործերէն մէկուն մէջ. «Կուռնկները մեծ թռուով կը ժողվուին Սեւ Ծովուն եզերքներուն վրայ, այս թռչունները մեծ շրջան մը կը բոլորեն: Ժամանակ ժամանակ անոնցմէ մէկը կը բաժնուի, կ'սկսի պարել իր շրջանակ կազմող ընկերներուն մէջ, որոնք կը ծափահարեն իրենց ձեւով, կտուցի շառաչումով»:

Կապիկը, գրեթէ բոլոր կենդանիներուն մէջ ամէնէն աւելի ընածին յատկութիւնը ունեցաւ տեսածը շուտ մը օրինակելու, արբշիւ և ներշնչուած դիտեց ընտելեան պարզեւատուութիւնը ու հետաքրքրուելով անոր տիեզերական շարժումներէն, օրինակ առաւ, սկսաւ նմանութիւններ ընել, իրերու և կենդանիներու շարժուածքի ձեւերէն և ինքն ալ սկսաւ դառնալ և զանազան ձեւեր ընել: Խաղալու կամ շարժուածքի կապկոյնի մտնողուկ այս ձեւը օրինակ մը եղաւ մարդուն: Կապկոյնի ցեղին այս յատկութիւնը տեսնուեցաւ մարդուն մէջ ալ, որ օրինակ առաւ կապիկէն, ինքն ալ ընախօսական նմանութիւններ ունենալով անոր հետ: Իմաստուն Տարվին և Լիթրէ, ինչպէս ուրիշ գիտուններ, հաստատած են մարդկային ցեղին և կապկոյնի տեսակին

միջեւ գոյութիւն ունեցող կապակցութիւնը: Այս գիտուններուն կարծիքով, կարելի չէ կասկածիլ թէ մարդ կապիկէն կը սերի. կապկոյնի պարերը ուրեմն մարդուն պարին ծագման օրինակը եղան: Պարը ընտելեան սքանչելի մէկ ստեղծագործութիւնն է: Կապիկը ներշնչուած այս պարզեւատուութենէն, կ'սկսի պարել և մարդ կ'օրինակէ չորքոտանիին պարը և անկէ է որ կը մշտնջինաւորուի տարուէ տարի և կը հաղորդուի ազգէ ազգ:

Սրարչագործութիւնը, իրերէն և կենդանիներէն աւելի տարբեր զգացումով մը ներշնչել տուաւ մարդը, որ իր առաջին վայրկեաններուն զգացումի գոյութիւնը յայտնեց իր մէջ: Ի՞նչ կըլան մարդուն առաջին արտայայտութիւնները: Չայն և շարժում: Մարդ իր շնչած առաջին վայրկեաններուն, զգայութիւններ ունեցաւ, որոնք էին ձայնի հնչիւններ, դիմագծերու շարժումներ ու մարմնի շարժուածքներ: Բնապէս կան ձայնին մէջ հաճոյքի և վշտի բարբառներ. նոյնպէս կան մարմնիին և դէմքին շարժումներուն մէջ ամէն տեսակ արտայայտութիւններ: Չայնի զգայութիւնը՝ երգի սկզբնաւորութիւնը եղաւ մարդուն մէջ: Իսկ շարժումներու պէտքը՝ սկզբնաւորութիւնը եղաւ պարի: Այս տիեզերական բարբառը կը լսուի բոլոր կենդանիներէն ու ազգերէն: Չայն և շարժում տիեզերքի կողմէ արուած է՞ն նախնական բաները եղան մարդուն և կենդանի բոլոր արարածներուն, որոնք կը շնչեն երգի վրայ: Այս անյօդ, անորոշ հնչիւնները, որոնք երգին մէկ տեսակն էին և ընական երաժշտութիւնը, եթէ կրնայ այսպէս բացատրուիլ, քիչ քիչ զարգանալով ուղղակի նկարագրեցին հոգիին բոլոր տարբեր կացութիւնները: Թէեւ թերի կերպով, բայց մարդիկ ունեցան իրենցմէ առաջ և իրենցմէ վերջը այս բոլոր կացութեանց վերաբերող շարժուածքներ: Սապէս, մար-

մինք հանդարտ եղաւ ու շարժեցաւ, աչքերը բոցավառեցան և մարեցան, դէմքը գունատեցաւ ու ամբողջեցաւ, բազումները բացուեցան ու գոցուեցան, դէպի վեր բարձրացան ու դէպի վար ինկան, ոտքերը դանդաղ ու շուտափոյթ քայլափոխեր կազմեցին, ամբողջ մարմինը վերջապէս պատասխանեց ձեւերով, գիրքերու, ոստումներու և հնչիւններու թաւալումով և բոլոր ասոնք հոգին կը նկարագրէին: Երգն ալ զգացման նախնական արտայայտութիւնն է. ան է որ հրկրորդ վիճակ մըն ալ զարգացուց մարդուն մէջ, որ արդէն ունէր իր քով այդ զգացումը. և այդ արտայայտութիւնն է որ կոչուեցաւ պար:

Կը տեսնենք թէ երգ ու պար, առաջ եկած են ձայնէ և շարժումէ. քանի մը հեղինակներ և ուսմիկ ժողովուրդը զանոնք կարծեցին չափազանցեալ արտայայտութիւններ, բայց անիկա մարդուն համար այնչափ բնական է, որչափ շարժուածեւ մը, որչափ ձայն մը: Երկուքն ալ այդ երկու արուեստներուն գործիքն են, որոնք ծնունդ առին բնութենէն: Մարդուն գոյութենէն ի վեր անտարակոյս պարել ու երգելը գոյութիւն ունեցած են: Հետեւեցէք մտաղաշ աղաքներուն, իրենց մանկութենէն մինչեւ բանականութեան շրջանը, նախնական բնութիւնն է որ իրենց ձայնին մէջ երեւան կուգայ և կ'արտայայտուի իրենց գիմագծերուն վրայ, իրենց ակնարկներուն և բոլոր շարժումներուն մէջ:

Դիտեցէք այն ժպտուն, կրակոտ նայուածքը, շուտափոյթ շարժումները երբ ան յուզուած է ուրախութեան զգացումով մը: Դիւրաւ կրնաք համոզուիլ թէ մարդ երգեց և պարեց աշխարհի գոյութենէն մինչեւ այսօր և վստահօրէն նոյնը պիտի ընէ յաւէտ: Հոգիի տարբեր զգացումները շարժումքի սկզբնապատճառը եղան և պարը որ անոնցմէ կազմուեցաւ, առաջ եկաւ, արուեստն

է պահանջուածին համեմատ շնորհալի ու չափական կերպով պարելուն: Այս ճշմարտութիւնը պարը ջատագովող փիլիսոփաներու կողմէ ալ հաստատուած է:

Պարը շարժումքի արուեստն է. ան թէև բնական մարդուն համար, բայց միջոցներ ստեղծուած են շարժուածներու բարեշնորհութեան, որոնց ընդունակ էր մարդ: Բնութիւնը գիրքերը պատրաստեց, փորձառութիւնը՝ կանոնները տուաւ: Ուրեմն մարդ կրնայ պարել սովորիլ եթէ զխոնայ քայլափոխերը, որոնցմով պարը կը կազմուի, ինչպէս որ մարդ կրնայ սովորիլ երգել, երբ գիտնայ բոլոր ձայները որոնցմով կը կազմուի երգը, որովհետև մարդ արուեստին օգնութեամբ կը զարգացնէ բնութենէն ստացած իր ձիրքերը:



# ՊԱՐԻՆ ՊԱՏՄԱԿԱՆԸ

Պարի գեղարուեստին մասին, յետագայ պատմական ու շահեկան տեղեկութիւններուն ընթերցողը անշուշտ մեծ հետաքրքրութեամբ պիտի հետեւի:

Շատ հին դարերու մէջ պարը իր գոյութիւնը ունեցաւ և երեւցաւ իր սրոյ ձեւին և անուին տակ, ճանչցուած ըլլալով ամէնէն հին ազգերէն և ժողովուրդներէն:

Հին ազգերէն՝ Երրայեցիները, հին Եգիպտացիները, Սպարթացիք, Աթենացիք, Հռովմայեցիք տարբեր երկրագագութեամբ մը կը հետեւէին նուիրագործեալ պարին: Կրնան յիշուիլ նաեւ Հնդկիները, Չինացիները, հին Գաղղիացիները, որոնք այդ մասին պատմական անջինջ յիշատակներ ունեցած են: Պատմութիւնը յստակօրէն ցոյց կուտայ նաեւ նշանաւոր փիլիսոփաներու, իմաստուններու, զբաղէտներու կողմէ արտայայտուած գնահատականներ և ջատագովութիւններ, այնքան գեղեցիկ որքան բնական իրենց նկարագրութիւններուն մէջ:

Հին ժամանակներու մէջ պարը կրօնական պաշտամունքներու, ծէսերու մէջ կը գործածուէր: Կրօնքի մէջ անոր կիրարկումը դեռ կը շարունակուի զանազան տեղեր: Մեհեաններու, տաճարներու, աղօթատեղիներու մէջ արարողութիւնք և պաշտամունք շատ հին ժամանակներու մէջ չէին կատարուեր առանց մասնաւոր պարերու:

Պարը գլխաւոր և նուիրական ճակատագիրը եղաւ



կրօնքի երկրպագութեան: Իր ծագումը կ'երեւի առաջին եկեղեցւոյ ծէսերուն մէջ: Ամէն մարդ կրնայ գիտնալ թէ Եգիպտացիք կը պարէին Ապիս կովին առջև: Թէ Մովսէս և թէ իր քոյրը Մարիամ կը վարձէին խմբերգներ, մին մանչերու և միւսը աղջիկներու՝ պանծացնելու համար Կարմիր Մովուն անցքը:

665 0 10 5 6 9

Յետոյ պարը երեւեցաւ նաև Կեղտացիներու առաջին ժամանակներէն մինչև ժէ. դարու միջոցին՝ Աստուածային երկրպագութիւններու մէջ, ուր ան մաս կը կազմէր իր պերճութեամբ և չքեղութեամբ:

Պարին հնութիւնը նուիրագործեցաւ ուրեմն աւանդութիւնով մը և պատմական յիշատակարաններով: Իսրայելացւոց պատմութիւնն ալ պարին շատ հին ժամանակներու մէջ գոյութիւն ունենալը կը հաստատէ: Չէ որ Մովսէսի և իր քոյր կողմէն կատարուած պարերը՝ միացած իրենց հոգեւոր երգերուն, կը հռչակէին Կարմիր Մովուն անցքը, Աստուծոյ ժողովուրդին փրկութիւնը և Փարաւոնի բանակին փճացումը: Դարձեալ Իսրայելացիները չէին որ կը պարէին ոսկիէ հորթի մը առջև և Դաւիթ՝ տապանին առջև պարելով այս նորածին արուեստը կը նուիրագործէր, Դաւիթ որ իր ազգին օրէնագէտն էր: Սուրբ գիրքը նկարագրելով պարը Իսրայելացւոց մէջ, չափնարկեր կրօնական սովորական տօնախմբութիւններու մէջ կատարուած պարերուն:

Երուսաղէմի մէջ տապանին փոխադրութեան ժամանակ տաճարին բացումին առնելով պարերը ինքնաբերաբար երեւան եկան և ժողովրդական ցոյց մը եղան, հասարակաց զուարթութեանց մէջ, որոնց ամէն ոք մաս կը կազմէր իր հասկացողութեամբը: Երբայական գիրքերուն մէջ տեսնուած են միմիայն երիտասարդ աղջիկներէ կազմուած պարի խմբերգներ: Այս սովորութիւնը կ'ըսուի թէ դեռ

տիեզերական է և կուգայ խիստ հին ժամանակէ մը : Դասիր և ծնդակաները Հրեաներուն մէջ այդ աւիթներուն ամէնէն գործածական գործիքներն էին :

Ներկայիս մէջ պարը մաս չի կազմեր եւրոպական կրօնական արարողութիւններուն : Ան արուեստ մըն էր, ինչպէս ատենօք, բայց հեթանոս արուեստ մը, որուն պարահանդէսի սրահը եղած էր մեհանը : Մինչդեռ անկէ դուրս, ճոխասէր սրահներու մէջ, հասարակաց տեղերու և զիւզաքաղաքներու մէջ պարը զբօսանք մըն էր :

Եգիպտոսի և Հնդկաստանի մէջ գտնուող հին քանդակագործներ կը վկայեն իրենց քանդակագործութեամբ թէ՛ պարը անյիշատակ ժամանակներէ ի վեր գոյութիւն ունի այդ երկիրներուն մէջ : Ուշադրութեամբ քննելէ վերջ հին Եգիպտոսի յիշատակարանները, կը տեսնուի թէ՛ այդ երկրին բնակիչները պարած են երկու տեսակ պարեր, Միւմոսական և Թատերական : Վաւերական է սա շատ հին սովորութիւնը թէ՛ Եգիպտոսի քանդակագործներ շինած են Քէնըրիի ստորերկրեայ մեհանները խիստ հին ժամանակներու մէջ, որոնք կը ներկայացնեն պարողներ և պարուհիներ : Հին Եգիպտոսիներուն պարերէն կը յիշուի Ասքոսիքը, Զ. դարու պարը (Ն. Ք. զՔ.) :

Պարը հին ատենէն մեծ պատիւով յարգուեցաւ Յունաստանի մէջ, ուր հետզհետէ մաս կազմեց շատ մը շատուածներու տօներուն, գլխաւորաբար Բագոսի, ինչպէս թատերական ներկայացումներու և գլխուորական խաղերու :

Յոյները պարի աստուածութիւն ունէին. անոնք իմաստուն փիլիսոփաները իրենց տաճարին առջեւ պարերով կը պատուէին :

Առաջին ժողովուրդներուն պարին հանդէպ ունեցած այս յափշտակութիւնը մշտնջենաւորեց տարուէ տարի մարդուն մէջ բնածին բնագրը, զայն յաւերժացնելով գե-

ղագիտական նուիրագործութեամբ, որով պարը ամէնէն բեզմնաւորը և ներշնչուողը եղաւ :

Պարին պատմական յիշատակութիւնները Յունացքով անթիւ և հետաքրքրաշարժ են :

Գրագէտ մը կը յիշէ թէ հուշակաւոր Պրոտէոս, (որուն առակը կը պատմէ այնչափ հիացումով) վարժ պարող մըն էր. և իր քայլերուն շարժականութեամբը, իր եռանդին զօրութեամբը և տաղանդին շնորհիւ, ամէն մէկ շարժումի մէջ շնորհալի նոր ձեւ մը կը դնէր պարած ատեն : Յոյները ճշմարիտ սքանչացումով մը կը ծափահարէին, կնոջ նազանքով ուրիշ պարող մը, հուշակաւոր Անիիւսը, որ ճշմարտապէս տարօրինակ ձիրք մը, զմայլելի ճկունութիւն մը և մեծ դիւրաշարժութիւն մը ունէր, ամէնէն վարժ դիտողներուն աչքին : Ան կը թուէր աներևութանալ ստուերի մը պէս, կարծես ըլլար ուրուական մը, պարիկ մը, օդային ոգիի պէս երազ մը, անուրջ մը, որ ամէն անգամ կը դիտուէր սքանչանքի աւարկայ վիճակի մը մէջ :

Մինչ Յունաստան ունէր Ամիիւսը, այդ հուշակաւոր պարող դերասանուհին, որ գանձ մըն էր, Հուովմ իր կարգին ունէր նշանաւոր Թիմէլը, Դեմետրիանոսի իշխանութեան օրով, Յունաստան ունեցաւ նաև պատերազմական պարեր. կը յիշուին՝ Բիուիէն 280 թուականին (Ն. Ք. զՔ.), Արնաւուտ, Վալաք և ըն. :

Հուովմայեցիք, ինչպէս Քրիստոնեաները ընդունեցին հեթանոսութենէ նուիրագործուած պարերը և հուշակեցին զանոնք հանդիսական օրերուն մէջ : Հուովմայ մէջ միշտ արչաւանքի փորձերը պարերու հետ կը կատարուէին : Հուովմայ մէջ հին պարերէն կը յիշուին Պուժօն 671 թուականին (Ն. Ք. զՔ.) : Պէտք չէ մոռնալ Պիւզատոսը և Պաթիլը Հուովմայ մէջ, որոնք այս արուեստին

ամէնէն նշանաւոր դէմքերը կը ներկայացնէին իրենց տաղանդով : Այս երկու անձերը իրենց ծախքերով շինել տուած են թատրոն մը ուր իրենք կը ներկայացնէին նաև խեղկատակութիւններ ու ողբերգութիւններ վարժ ու բնական կերպով, առանց ուրիշ ու է օժանդակութեան, բայց միայն երաժշտութեան և պարի : Ինքնին վրայ օր մը երբ այս դերը կը կատարէին, Դեմեարիանոս չկրցաւ զսպել պօռալը, ըսելով . «Այս ներկայացում մը չէ, այլ իրականութիւնն իսկ է» : Իր գերին մէջ նշանաւոր ըլլալով, հանդիսականներէն ամէնէն կարծրասիրտներուն արցունքները կը խլէր և Պաթիլ ներկայացնելով Լէտայի սէրը՝ ժիւլիալի ըսածին համաձայն «Հռովմայեցիներուն կը պատճառէր ամենահրաշալի հմայքներ, որոնք զգայականութեան ամէն սահման կ'անցնէին» :

Պատմենք նաև Սալոմէին դէպքը :

Ժամանակակից համայնագէտներէն մէկը կ'ըսէ թէ Սալոմէ որ աղջիկն էր Հերովդէի աղայի և Փիլիպպոս Հերովդէի, սէրը գրաւեց իր հօրեղբորը՝ Հերովդէ Անթիբասի, այն չնորհալիութեան պատճառով զոր ցոյց տուած էր անոր առջեւ պարելով և իբր վարձատրութիւն անկէ պահանջեց Սէն Ժան Պաթիլի գլուխը :

Պէտք է յիշել նաև Հռովմայ մէջ Թերրսիքօրը, երաժշտութեան գեղուհի Իւսթերի ընկերը, որուն արձանը կը կերպարանէ նաև պարերը :

Հետաքրքրաշարժ է նաև պարին տեսուելը Հնդկաստանի մէջ ամէն ժամանակ, իբր երկինքի ամէնէն քաղցր պտուղը : Ահա թէ ինչ կ'ըսէ ժիւլ Թրուսէ, Հնդկաստանի այն կիներուն վրայ՝ որոնց ծագումը հին ժամանակներու մէջ կը կորսուի : «Աղջիկ կամ կին հնդիկ, որոնց կոչումն է պարել և երգել, կը կոչուին nautchies : Անոնք երկու գլխաւոր դասեր կը կազմեն, ստու-

րորաժանուած շատ մը կարգերու : Երբ անոնք ուխտած են աստուածներու ծառայութեան, Մեհեանի մը մէջ կը մտնեն և կ'ըլլան իրենց բառով սեվասասի (Աստուծոյ գերի) : Անոնք կ'երգեն և կը պարեն տօնախմբութիւններու և թափօրներու մէջ : Առաջին կարգի սեվասասիները կը վերաբերին առաջին դասակարգի ընտանիքներու և կը կազմեն յարգելի շարք մը : Երկրորդ կարգիները շատ աւելի աղատ են և կրնան մեհեաններէն դուրս ելլել մասնաւոր հարուստներու տուները երթալու համար, ուր կ'ողեւորեն տօնախմբութիւնները իրենց պարով և իրենց հեշտաւէտ գիրքերով : Իւրաքանչիւր մեհեան կը պահէ սեվասասիի խումբ մը : Անոնք, 10էն 12 հոգիանոց խումբեր, կը շրջին գաւառներու մէջ, զբամ կը ժողվեն երգելով ու պարելով :

Հնդիկներէն անոնք որոնք ունենոր էին, ունէին պալատներ ուր պարուհիներ կը գտնուէին : Բայց այս տեսակէտով ամէնէն աւելի նպաստաւորուածներն էին քահանաները այն երկիրներուն որոնք Պրահմայի այնչափ լայնամիտ, այնչափ ճոխ և այնչափ գեղեցիկօրէն արուեստագիտական դաւանանքին զմայելի գաղափարը կը պահէին :

Ահա թէ ինչպէս կը պարեն այդ պարուհիները : Սկըսելէ առաջ իրենց պարերուն, կը կենան խումբով, դէմքերնին գոց քօղով մը : Նուագները, ծնծղայ և ըն ., միաբերան կը նուագեն, նշանը արուելուն պէս բոլոր պարուհիները գլուխնին կը բանան և կ'երթան գրաւել իրենց տեղը, նուագածուներու առջեւ : Մասնաւոր արուեստով մը և զմայելի ներդաշնակութիւնով մը կը պարեն, արունքներնին երբեք չեն խաղցներ, ինչ որ մեր ձեւերուն մէջ գլխաւոր դերը կը կազմէ . ասոնք միշտ կը տեղափոխուին պարած ատեննին, բայց միշտ նուագներուն

հետ չափական և միօրինակ ձեւով . ատեն ատեն պարուհիները ոտքերնին գետին կը զարնեն (ինչպէս ասիական պարերու մէջ) . բազուկներնին կ'արտացոլացնեն ամէնէն փափուկ զգացումները , ձեռքերու , մատներու շարժումները ընելով : Արտայայտութեան ամէնէն մեծ մասը կը կազմէ դիտուն ձեւը , աչքերուն նայուածքը , որոնք մինչեւ հոգւոյն խորը կը ցոլացնեն Հնդկաստանի հուերը : Անոնք կը պարեն այնպէս որ իրենց ձեւին մէջ կը նկարուի երկրպագութիւնը՝ իր գերագոյն աստիճանին մէջ : Վիզին դնդերները և երակները ցոյց կուտան իրենց էութեան ներքին զրգուովը : Քաղցր , նուազկոտ աչքերնին վեր սեւեռած , վերջին ծայր ներշնչուած , կը սիւնն ամէնէն սիրուն ոգին և հեշտութեան ամէնէն քաղցր նրբերանդներ , եռանդոտ գիշումներ , արցունքոտ հառաչանքներ , շղաձգութիւններ , մտացնորք , մինչեւ որ վերջապէս հեշտութեամբ արբշիւ և միշտ սիրով բարախուն՝ կը թուին նուաղելով կրթուիլ հաճոյքին ծանրութեան տակ , որ կը հրդեհէ և կը վառէ իրենց բոլոր զգացումները :

Ոչ նուազ հետաքրքրաշարժ է գիտնալ չինական սովորութիւն մը՝ պարելու մէջ : Պարը շատ հին ժամանակներու մէջ և Եւրոպայէ շատ առաջ յուզած է Երկնային Կայսրութեան երկիրը՝ Չին : Եկարներու և պատկերներու մէջ չինական շատ հին պարեր կը տեսնուին : Չինացի փիլիսոփաներ ամէնէն գեղեցիկ ներբողները կ'ընեն այս արուեստին :

Անոնց պարերը մեր ասիական պարերուն պէս միմտասական են , այսինքն յաճախ ունին թեթեւ ցատքաուղիք և դարձուածքի ձեւեր , ձեռքերնին բարձրացած և գլուխնին թեթեւակի հակած , դառնալով երաժշտութեան ցոյց տուած նշաններուն հետ :

Չինական պարերուն կը ծառայեն թմբուկը (tambourin) և ծնողան (cymbale) , երաժշտութեան ամէնէն հին այս երկու գործիքները : Չինացւոց պարերը կ'առաջնորդուէին Քին անունով չինական երաժշտական գործիքով մը : Պարերը առաջնորդելու դերը յանձնուած է երաժշտութեան վարպետներու : Չինական պարերէն կը յիշուին Ֆուսկ-Հուսկ , որ կը նշանակէ «Խորհրդաւոր Թուշուն» :

Դեսպանաժողովի մը մէջ , Երկնային Կայսրութեան դեսպաններէն մէկը ըսած է թէ ինչ որ այսօր Եւրոպան կը յուզէ և կ'ազդէ անոր արուեստին՝ այսինքն պարը , խեղճ Եւրոպայէն առաջ Չինաստանի մէջ երեւան եկած է :

Անիրաւ պէտք է ըլլալ , հետեւաբար քանի մը տող չնուիրելու չինական պարերուն և անոնց կիրառութեանը մասին , որովհետեւ այդ յիշողութիւններուն զարթումը մեզ պիտի տայ ցոլացումներ , անդրադարձութիւններ , այն արուեստին վրայ որ մեզ կ'զբաղեցնէ : Պարը Չինացւոց միտքին մէջ չի զարթուեցաներ խենդ ու խելաւ ուտումներու , դարձուածքներու գաղտիարը : Ո՛չ երբեք , այլ զգացումներու արտայայտութեան գաղտիարը , առանց ձայնի օգնութեան և շարժուածքի և մեթոտի բարեշքը ջութեան միակ միջոցաւ : Հետեւաբար չինական պարերը , ինչպէս ասիական պարերը , էապէս երաժշտութենէ և մտածումներէ ծագում առած են : Նախապէս կ'երեւէր թէ չինական պարերը կ'արտայայտուէին հերկազորութեան աշխատութիւններու պատկերներուն մէջ , հունձքի ու բախութիւններու վայելքին ատեն , պատերազմի յոգնութիւններու և խաղաղութեան հաճոյքներու ժամանակ :

Ինչպէս երաժշտութիւնը , պարն ալ գործածութեան մէջ է Չինացւոց մօտ , իրենց պատմութեան ամէնէն հետաւոր ժամանակներէն ի վեր : Քանի մը տողով նկարա-

գրենք հոս չինական սովորութիւն մը : Չինու կայսեր պալատին մէջ 8 տարբեր պարեր կը ներկայացուին, որոնց իւրաքանչիւրին կը մասնակցին 8 անձեր, ինչ որ ընդհանուր հաշիւով 64 հոգիի խմբերգ մը կը ներկայացնէ : Չինու կայսրը այսպէս այս մեծ խմբերգին յատուկ իրաւունքը կ'ունենայ : Գալով նահանգապետներու, անոնք իրաւունք ունին 6 պարի, 36 հոգինոց խմբերգով մը . իսկ իշխանները և նախարարները իրաւունք ունին 4ական պարի՝ 16 հոգինոց խմբերգով մը . վերջապէս գրագէտները 2ական պարի, 4 հոգինոց խմբերգով մը : Չինացի խորհող մը իր գործերէն մէկուն մէջ սաստիկ կը խայթէր նախարարի մը հպարտութիւնը, որովհետեւ ան նահանգի պարզ կառավարող մը ըլլալով, կառավարութիւնէն կը թողատուէր 8 պարի 64 հոգինոց խմբերգով մը, իրաւունք մը որ միմիայն կայսեր կը վերաբերէր : Չին թագաւորական ցեղերու իշխանութեան օրով գործածուած պարերու անունները հետեւեալներն են : Լա Բօնք սէ Նիւ, երկնային հոգիներու ի պատիւ . Լա Կուան Թուրնանք, երբ կայսրը զո՞հ կը մատուցանէ տաճարին վրայ . Սիւմիլլաքան, երբ զո՞հ կը մատուցանէ քառակուսի տաճարին վրայ . Լա Գասանսէ, ինչ Չինաստանի ամէնէն չնորհալի պարը . Լա Վեռքիւկօզ, Նորին Վեհափառութիւնէն գնահատուած կարեւոր պար մը . Լա Պիեմքրզանգ, նախնի սերունդի կիներուն ի պատիւ . Լա Կուան Կեռիեռ, նախնի սերունդին այն մարդոց ի պատիւ, որոնք կը պարէին պատերազմաչունչ զգացումներ գրգռելու և ունէ յաղթութիւն հռչակելու համար . Լեկասիօն սէ Գ'0 որ կը ծառայէ զո՞հերու և նախնիքներու տօնախմբութիւններուն : Չինացի փիլիսոփաները այս պարերուն խիստ շքեղ ներբողներ կ'ընեն :

Նախկին Չինացիք ունէին 6 ուրիշ պարեր, որոնց

գլխաւոր միապետութեան առաջին ժամանակներէն կ'սկսէր : Այս պարերը մէյմէկ առարկայի անունը կը կրէին : Այս առարկաները ձեռքերին բռնած կը պարէին Չինացիները . զոր օրինակ Տուքօ, Տէ Բիլւմ, Տէ Ֆօանկ-Չօանկ, Քեօսր Պեօֆ, Տիւ-Տառ. վեցերորդը կ'առնէ մարդուն անունը Մարդ :

Սպանիա սլ պէտք չէ անմասն մնայ ինչ ժամանակներու մէջ իր պարի պատմութիւնով : Մանաւանդ կըրնանք ըսել թէ Սպանիոյ մէջ պարը ազգային գրողին լրացուցիչ մասը կը կազմէ : Սպանիական ինչ պարերէն կը յիշուին Էսքաներ 1084 թուականին (Ն. Ք. զՔ.) ինչպէս Սառապանք և մանանանդ Պոլեոօն, Սպանիացիներուն ամէնէն ազնիւ պարը, որ երկրին յատուկ մասնաւոր հագուստներով կը պարուի : Նաեւ Բավան Էսքաներ սիրուն պարը ևլն. :

Ահա թէ ինչ կ'ըսէ Աղեքսանդր Տիւմա իր երկար ճամբորդութեանը մասին զոր ըրած է Պօլեոօյի և Քասթանէթներու երկիրները, հետաքրքրաշարժ կերպով դիտելով պարին մէջ Սպանիացւոց ցոյց տուած սիրամուրթիւնը : «Այն ատեն սրտառուչ պատկերէ մը գրաւուեցայ, որ քանի մը մօտաւոր մանրամասնութիւններով ինծի յիշեցուց ինչ կրօնապետները : Խոհանոց առաջնորդող սրահի մը մէջ խորովուող կողիկներուն քով ծանրամարմին տանտէրը կը պարէր իր ազախինին հետ, որ իրեն չափ ծանրամարմին էր . անոնք կը պարէին ազգային Ֆանսանկօ պարը, իր ամէնէն պարկեշտ և պարզ ձեւին մէջ : Այս սրահին կամարը ամբողջովին զարդարուած էր շքեղ նուռերով, որոնք թելերով ձեղունէն կախուած էին և սահմանուած էին ուտուելու, աշունը եկածին պէս, եթէ երբեք կըրնաս ի մէջ աշուն կուգայ : Ընդարձակ օճախ մը, իր կրակովը, որուն վրայ կ'եռար pau-

chero մը, կը զարդարէր այս սրահը ասանձականօրէն: Այդ կրակին մօտ կապելային ախրուհին օրօրելով Անտաշուզիացի հրեշտակ մը՝ որ կը քնանար իր կուրծքին վրայ, ժպտաշուրթին կը դիտէր իր ամուսինին և աղախինին պարը:

Այդ տեսարանին կ'ընկերանայ մասնահնչեակներու դաշնաւոր աղմուկ մը, և արեւի հսկայ ճառագայթ մը, որ դուռնէն յանկարծուստ կը մտնէր, կ'անցնէր պարին վրայէն և կ'երթար խողտացնել աչքը շքեղ, ճերմակ կատուի մը որ երջանկօրէն ցերեկուան քունը կը քաշէր: Հասկնալի է որ երբ ես մուտ գործեցի, պարը ընդհատուեցաւ, բայց սպաններէն լեզուի տգիտութեամբս, որուն չէի կրնար գոհացուցիչ շեշտ մը տալ, նշան մը ըրի, որով պարը վերսկսաւ: Գլխու շարժում մը ընելուս վրայ, իրենց կարգին մօտեցան նաեւ բարեկամներս և ինծի պէս միջոց մը զբաղեցան դիտելու այդ ընտանեկան տեսարանը որ շատ սովորական էր երկրին համար և որուն ուշադրութիւն չընծայելու համար պէտք էր օտարական մը ըլլալ: Վերջապէս, աղախինն էր որ առաջին անգամ ամօթահար բաժնուեցաւ ընկերութենէն, կէս մը ժպտելով, կէս մը կարմրելով և իր տէրը մինակ մնալով բարեւեց մեզ ձեռքերէն հանելով մասնահնչեակները և զարմանալով այն հաճոյքին զոր կը թուէինք ունենալ բանէ մը որ շատ բնական զբաղում մը կը թուէր ամէն ուշիմ էակի:»

Ճարտնցիք ալ ունին իրենց հնաւանդ պարի սովորութիւնը. Լա Տաւն օ Ֆլամպօ ըստած պարը: Անոնք ջաները ձեռքերնին վստ բռնած կը պարեն. ունին ուրիշ պարեր ալ, ինչպէս Միքատօի զաւակներուն անունին ձօնուած պարերը:

Գաղղիա ալ ունեցաւ շատ մը պարեր հին ժամանակներու մէջ և Պուռժուա կոչուած համբաւաւոր ժԲ.

դարու պարը: Լուի ԺԴ-ի ատեն, ինչպէս Լուի ԺԵրդ-ի օրով, պարը մեծ կարեւորութիւն ստացաւ, որմէ ետքը սկսաւ հսկայաքաջ յառաջդիմութիւններ բնել: Մընիւէ, Էն. արքունիքի պար կը կոչուէին և մաս կը կազմէին արքունիքի մէջ կատարուած պարախաղերու:

Գաղաքակրթութեան յառաջացումը միծապէս օժանդակեց պարին կատարելագործութեան: Ճրանայի թագաւորները քանի՜ նրբացուցին իրենց ճաշակները և բարքերը, կազմակերպեցին պարահանդէսներ, հանդէսներ, պարախաղեր (ballet), որոնք անուր խրախճանութիւններու առիթ եղան: Այդ արքայական հանդէսներէն մէկը մինչեւ անգամ ծանր հետեւանքներ ունեցաւ: Կարոլոս Զ. թագաւորին օրովն էր. պալատին մէջ կազմակերպուեցաւ հանդէս մը, որ դիմակաւոր պարի բաժին մըն ալ ունէր: Այդ պարահանդէսին ներկայացան վայրենիներու պէս դիմակաւորուած վեց մեծամեծներ: Անոնք գլուխնին ծածկած էին խժուձէ կեղծամներով: Կատակասէր մը քմահաճոյքը ունեցաւ զանոնք բռնկցնելու և խեղճ վայրենիները, իրենց շղթաներուն և գործիքներուն մէջ նեղը մնացած, ողջ ողջ այրեցան, սարսափահար եղած պալատականներուն աչքին առջև: Կարոլոս Զ. թագաւորը այնչափ յուզուեցաւ այս աղէտէն որ խելքը կորսնցուց: Ռէժանի, Լուդովիկոս ԺԵ-ի, Լուդովիկոս ԺԴ-ի տուած պարահանդէսները աւանդական դարձած են: Այս վերջին թագաւորին օրով Վերսայը աշխարհի հմայքը դարձաւ: Այդ օրէն ի վեր պարը հետզհետէ ժողովրդականանալով անհունապէս բազմապատկած է իր սիրահարներու թիւը, սակայն առանց երբեք օրուան մեծամեծներուն կողմէ անտեսուելու:

Գաղղիա նշանաւոր անձեր, փիլիսոփաներ կը ներկայացնէ՝ իրբեւ մեծ պարողներ, պարի գնահատողներ:

Նարոյէնն Ա. քաջ պարող մըն էր : Վիքթոր Հիւկօ գնահատողը եղաւ պարին . ան յաւերժացուց էզուիալսան , այն պարը որ շատ հին ժամանակէ ի վեր գոյութիւն ունէր և Բարիդի պարասրահները անոր կենդանանալուն առթիւ անգամ մըն ալ զայն ողջունեցին :

Այդ աշխարհանուշակ գրագէտն էր որ իր գլուխ գործոցներէն մէկուն՝ Նօքր Տալ սր Բառիի մէջ հիացմամբ կը խօսի Ֆէպիւսի վրայ , անոր հրաշալի պարելու ձևը նկարագրելով , ներքոյններ ընելով ու գնահատական տողեր նուիրելով : Ահա թէ ի՛նչ կ'ըսէ Վիքթոր Հիւկօ Ֆէպիւսի մասին : «Ամբոխին և կրակին մէջտեղը մնացած արձակ վայրի մը մէջ՝ դեռատի աղջիկ մը կը պարէր : Կռնկուռ հակառակ սկեպտիկ փիլիսոփայ մը և հեգնաւէր բանաստեղծ մը ըլլալուն , առաջին ակնարկով չկըրցաւ որոշել թէ այդ դեռատի աղջիկը մարդկային էա՞կ մըն էր , հուրի՞ մը թէ հրեշտակ մը , այնչափ մոգուած էր այդ լուսաշող տեսիլքէն : Հասակաւոր չէր , բայց անանկ կ'երեւար . այնչափ իր նուրբ մարմինը խրոխտաբար կը ցցուէր : Թուխ էր , բայց անհունապէս կը փայլէր : Իր մորթը Անտալուզիացիներու և Հուովմայեցիներու ուկեգոյն աղուոր ճառագայթումը ունէր : Իր փոքրիկ ոտքն ալ Անտալուզական էր , որովհետեւ իր շնորհալի մուճակներուն մէջ կոկիկ և շատ հանգիստ էր :

«Ան կը պարէր , կը դառնար , կ'ոտոտաէր պարսկական հին գորգի մը վրայ , որ անփութօրէն իր ոտքերուն տակ տարածուած էր և ամէն անգամ որ իր ճառագայթուն զէմքը շրջըրջելով ներկաներուն առջեւէն կ'անցնէր , իր սև աչքերը փայլակ մը կ'արձակէին : Անոր յառած էին բոլոր ակնարկները և ամէնուն բերանը բաց կը մնար : Եւ իրաւցընէ , մինչ ան այսպէս կը պարէր , նուրբ , մանաորրտիկ և աշխոյժ պիծակի մը պէս , գլխուն վրայ երկու

կտր և ողորկ բազուկներով բռնուած թմբուկին ձայնին հետ , իր անծալ չփակովր , իր հովուոց շրջագեւատովր , իր մերկ ուսերովր և մերկ սրունքներովր , որոնք ատեն ատեն իր քղանցքէն դուրս կը նետուէին , իր սև մազերովր , բոցակէզ աչքերովր , կը թուէր գերբնական արարած մը : Իրաւ որ , մտածեց ինքնիրեն Կռնկուռ , Սալամանտր մը , յաւերժանարս մը , չաստուածուհի մը , Մոն Մէնայէէնի քրմուհի մըն է ան» :

Վերջը չպիտի գար թուելուն թէ բոլոր մեծ գրիչները ի՛նչեր ըսած են պարին և այն սովորութիւններուն մասին ուր կաքաւագրութիւնը ի պատուի է : Մարդիկ միշտ պարած են , կը պարեն և պիտի պարեն :

Քաղաքակրթութեան յեղաշրջումին ենթարկուելով , պարն ալ , ինչպէս ամէն գեղարուեստ , ստացաւ հետզհետէ իր կատարելագործութիւնը , ձեռնհաս և ճարտար հեղինակներու ձեռքին տակ : Եւ այսպէս , հին շրջաններէ անցնելով սկսաւ միջին դարու մէջ ալ իր դերը զգացընել : Միջին դարն ալ ունեցաւ կարգ մը սիրուն պարեր , մանաւորաբար Բալանը , Մրնիւէն , Կալօթը և ըն . արքայական կոչուած այդ շնորհալի պարերը :

Ամէնէն աւելի ժերդ . դարուն պարը սկսաւ մեծ յառաջդիմութիւններ ընել ու բարեփոխեալ ձևով մը ներկայանալ : Վերջին դարը՝ ամենէն աւելի արձանագրեց անունները բազմաթիւ պարերու , գլխաւորաբար եւրոպական զանազան երկիրներու մէջ ծագում առած : Սկիզբէն մինչև այսօր ծագում առած ընդհանուր պարերուն եթէ ոչ ամէնուն (քանի որ անկարելի է) գէթ մեծամասնութեան ծանօթանալ կարելի եղած է և ասիկա կ'ապացուցուի յատակօրէն վիճակագրութիւնով մը , որ տարակոյտ չի վերցնէր , քանի որ հիմնաւոր տեսութեան մը վրայ կը յենու :

Այդ հաշիւով մօտ 10,000 պարեր երեւան ելած են , որոնց գոյութեան շատ դիւրին կ'ըլլայ համոզուիլ , եթէ

ցոյց տանք նաև ճանչցուած անուէնները պարի բոլոր հեղինակներուն, ուսուցիչներուն 1900ի միջոցին: Բարիզ՝ 86 բուֆէսէօններ ունի, գաւառները ունին 167, Անգղիա 128, Իտալիա 83, Գերմանիա 327, Աւստրիա-Հունգարիա 115, Ռուսիա 203, Մոնթէնէգրօ 5, Չուրցերիա 21, Պելճիքա 17, Հոլանտա 80, Նորվեգիա 10, Սպանիա 48, Բորթուկալ 12, Տանըմարքա 15, Շուէտ 25, Թուրքիա 23, Յունաստան 191, Սերպիա 7, Ռուսմանիա 9, Պուլկարիա 11: Աշխարհի հինգ մասերուն մէջ 3258 բուֆէսէօններ ճանչցուած են: Սապէս. Ամերիկայի երկու մասերուն մէջ 720, Ասիոյ մէջ 223, Ափրիկէի մէջ 421, Ովկիանիոյ մէջ 311, իսկ Եւրոպայի մէջ միայն 1583 (մեծագոյն թիւը հո՛ս): Այսպէս պարզ հաշիւով մը, երբ ենթադրենք թէ 3258 բուֆէսէօններ Յակոն պար հեղինակեն, շուրջ 10,000 պար կ'ընէ, թէև լոկ ատով չէ որ կը հաստատուի անհուն թիւը պարերուն:

Հետաքրքրաշարժ չէ՞ որ միայն Բարիզի մէջ տարեկան 3126 պարահանդէսներ կը սարքուին 376 ընդարձակ պարասրահներու մէջ: Բարիզ՝ միայն 55 մեծ ու նշանաւոր պարասրահներ ունի:

Այս առթիւ պիտի ուզենք նաև գաղափար մը տալ մեր սալօններուն մէջ երեւցող ծանօթ պարերու ծագման թուականներուն մասին: Էն առաջ Վալսը, գերազանցապէս հրանալի ու ամէնէն սիրուն պարը, երբ ծագում առած է: Նշանաւոր գիրքի մը մէջ բուֆէսէօն մը հերքած է փաստերը ամէն անոնց որոնք գերմանական ծագում մը կը վերագրեն Վալսին: Բուֆէսէօնը յառաջ կը բերէ վաւերական պատմութենէ մը առնուած անժխտելի փաստ մը: Վալսը, կ'ըսէ, Գերմանիայէն ծագում առած չէ. հին ձեռագրի մը համեմատ՝ Վալսը ԺԲ. դարուն մօտ պարուեցաւ առաջին անգամ Բարիզի մէջ 9 Նոյեմբեր

1178ին, Վալթա անուէնին տակ: Ետքէն Գերմանացիները որդեգրեցին զայն, անուէնը փոխելով Վալսէր ձէրմանիկի: Այդ պարը հետզհետէ իր տեսակները ունեցաւ, որոնցմէ ամէնէն շնորհալին և դժուարը Պոսթըն-Վալսն է որ Ամերիկայի Պոսթըն քաղաքէն ծագում առած է և որ տիեզերական վալս մը եղած է, շատ մը օտար սալօններու մէջ խիստ յարգուած ըլլալով:

Բոլքան՝ բաւական վերջը կուգայ Վալսէն: Պահմացիներու այդ պարը ծագում առած է Աւստրիոյ մէջ 1830ին Ժողէֆ Նէրիւտայի միջոցաւ, որ պատրաստեց անոր քայերը ու եղանակը: Բայց այն ատեն չունէր դեռ իր անուէնը: 1835ին Բրակա մայրաքաղաքին մէջ երեւցաւ և հմն առաւ իր անուէնը Բոլքա, չորս տարի վերջը Վիեննա մտաւ, 1840ին Ռապ անուէնով Բրակացի պարող մը եկաւ Բարիզ և առաջին անգամ պարեց նշանաւոր Օտէոն թատրոնին մէջ:

Մագուրքան բոլոնիական ծագում ունի: Բարիզ մտաւ Բոլքաէն քանի մը տարի վերջը: Ատրիէն Թալիքսի եղաւ հեղինակը որ պատրաստեց նաև եղանակը և միացնելով Բոլքային, անուէնը դրաւ Բոլքա-Մագուրքա:

Թիրօլիէնը առաջին Մագուրքային յաջորդող երկրորդ հեղինակութիւնը եղաւ: Այս պարը, Աւստրիոյ Թիրոլ քաղաքէն ծագում առած է 1850ին: Մագուրքային տեսակներէն կը յիշուին բաւական տարիներ առաջ ծանօթ Բօլօնէզը, Վարչօլիէնը, Քրաքօլիէնը:

Աքօթիչը Անգղիայէ ծագում առած է: Անգղիացիները զայն քիչ մը ուստոտելով կը պարեն, այսինքն թեթեւապէս ցատկելով: 1847ին պարուեցաւ պարահանդէսներու մէջ, սակայն երկու տարի վերջը աւելի կատարելագործուած ձեւով մը պարուեցաւ:

Բժնթրտանա, որուն անուէնը Գատրի է, գիւղական

պար մըն էր նախապէս . Անգղիացիք Քընթըրիտէնս կը կոչէին զայն . 1688ին ծագում առաւ Նորմանտիա և Անգղիա անցաւ , յետոյ Իտալիա և Գերմանիա . երկար ժամանակ Բարիդի մէջ մնաց անխնամ : Վերջէն վերածանչցուեցաւ Շանթիլի մէջ , Պուրպօն դուքսին Քարօլին իշխանուհիին հետ ամուսնութեանը առթիւ և այդ պատճառաւ Քատրիլը գործածութեան մտաւ և սկսաւ ընդհանրանալ բոլոր պարահանդէսներուն մէջ գործածուելով : Իր անուաներովը տարբեր , իր շարժուձեւերովը կերպ կերպ , Քատրիլը 200է աւելի տեսակներ ունի :

Լանսիէն Անգղիացիներուն խմբապարը , այնչափ սիրուն որչափ շնորհալի , յարգուած է ու կրնայ նախընտրուիլ Քատրիլէ մը : Սաքսոնեան երկիրներու մէջ և Գերմանացիին համար Վալսէն վերջ , Լանսիէն է որ կը նախընտրուի և յաճախ կը պարուի : Լանսիէն այնչափ ՚ին պար մը չէ որչափ Քատրիլը , և սակայն ան ալ ունի 7-8 տեսակներ : Անգղիական բառով Լանսիէն The Lancer's կը կոչուի , որ նիզակաւորներու պար ըսել է :

Պարերը մինչև հոս շարունակուեցան առանց նորածնութեան : Մեր սալօնները սահմանափակ վիճակ մը ունէին ասոնցմով : 1880էն վերջը սկսան նորանոր պարեր երեւնալ մեր սալօններուն մէջ : Է՛ն առաջ երեւցաւ Բա աը Քաթուր , որ շուրջ 35 տարուան պար մըն է . ունի շնորհալի շարժուձեւեր և զուարթ պար մըն է , իր ոգեւորիչ եղանակով :

Քրէօյց-Բոլքան , գերմանական պարը , ծագում առած է 1897ին Պուէլիին մէջ , այս պատճառաւ կը կոչուի նաև Պէուլինէր-Քրէօյց-Բոլքա : Դիւրին , սիրուն պար մըն է :

Բա տէ Բաթիլէօուը 1894ին ծագում առած է , որուն Սքէթիլակ անունն ալ կուտան . այդ պարին մէջ միշտ ոտքերը սահեցնել պայման է :

Կալօթ Վալսը , մեր սալօններուն մէջ երեւցող ընդհանուր պարերուն (բացի Վալսէն) ամէնէն շնորհալին ու սիրուն տեսակն է : Թէև տանընթիւ տարուան հեղինակութիւն մըն է , սակայն Կալօթ անունով 27 տեսակներ հեղինակուած են : Կալօթը նոր պար մը չէ , առաջինը ծագում առած է 1756ին :

«Պատուա» անունով պար մըն ալ երեւցաւ , տղայական պար մը , բայց ատեն մը մեր սալօններուն մէջ մեծերուն ալ նախանձը շարժեց : Աւելի ծանօթ է մեզի Մընաս Բոլքա անունով : Յաջորդաբար երեւցան Ֆիլէ-ռիէնը 1896ին , Լէ Ֆոլէնը 1895ին , Վաշինկիթըն Բօսթը , Լընօքսը , Թու-Սթէքսը , մինչև այսօր գործածական պարը , ինչպէս նաև Բա տ'Էսքաներ սիրուն պարը , և յաջորդող քանի մը պարերը , Քէյք Ուօք , Լա Մալիչ , Լա Քրաքէթ , Լա Լիքէթ , ևն : Այս վերջին չորս պարերը չի յարգուեցան իրենց թատերական շարժուձեւերուն և սալօնի պարերու լուրջ վարմունքը չունենալուն համար : Իրենց հրապուրիչ հանգամանքովը ու շնորհալի շարժուձեւերովը յարգի պարերը գնահատուեցան : Եւ ՚իմա , մեր սալօններուն մէջ մեծ թիւ մը չեն կազմեր այն պարերը , որոնք երկու մասի բաժնուած են , առաջինները բարձր սրահներուն մէջ ընդունուածները , երկրորդինները՝ ընտանեկան հաճոյքներուն մէջ պարուածները : Առաջինները կը պարուակեն քիչ թիւով և սակայն միշտ սիրուն , յարգի և նախընտրուած պարերը , իսկ վերջինները՝ նուազ յարգի ժողովրդական դիւրին պարերը :

Պարին ծագումին , գոյութեան և պատմութեան վրայ այս տեղեկութիւնները կուտանք սկիզբէն մինչև այսօր պարին ըրած մեծամեծ յառաջդիմութիւններու ծանօթութիւններով , վստահ ըլլալով թէ՛ Ի . դարու պարին պատմութիւնը աւելի հետաքրքրաշարժ կերպով պիտի յուզէ մարդիկը , պարին մէջ ըրած զարգացումներով ու յառաջդիմութիւններով :

## Պ Ա Ր Ի Ն

### ԵՐԵՔ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պարին օգտակար արդիւնքները երեք են : Ֆիզիքական, բարոյական ու կրթիչ : Այս երեք հանգամանքներով կրնայ բուռի թէ անհատ մը կը կատարելագործէ իր առողջութիւնը, բարոյականը և բարեկայելչութիւնը :

Պարին գերազանց կիրառութեամբ մարտողութիւնը կը գործէ, ակորժակը կը բացուի և ջիզերը կը հանգարտին : Աւելի քան միւս վարժութիւններէ, պարը կը հանդարտեցնէ օրուան մտազբաղումները և հոգերը, միանգամայն զբաղեցնելով և զուարթացնելով միտքը : Շնչառութեան գործունէութիւնը փութացնելով, պարը կը կուռի անարիւնութեան դէմ և առողջ գոյն կուտայ անոնց որոնք տժգոյն են : Պարը կ'ուղղէ գէշ կեցուածքները (attitude) և մարմինը կը վարժեցնէ շիտակ մնալու և ոտքերը դէպ ի դուրս քայլելու : Պարը կը կուռի սաստիկ գիրութեան հակամիտութեան դէմ. մարդը կ'ուժովցնէ, տալով անոր գիրութիւն մը : Վիշտերէ դերձ կը պահէ մարդը, թեթեւաշարժութիւն և ճկունութիւն կուտայ անոր և վերջապէս կ'ապահովէ հանդարտ, կազդուրիչ քուն մը : Ընդհանուր կերպով Եւրոպայի բոլոր կառավարական վարժարաններուն մէջ մուտ գտած է պարը և տղաք օրուան մէջ միայն պարին յատկացուած ժամեր կ'ունենան :

Վերջացնելով, կ'աւելցնենք նաև թէ՛ վիճակագրութեան մը համաձայն պարի ուսուցիչներու մահուան միջին տարիքը 85-90 եղած է :

Ալ մի ըսէք ուրեմն դո՛ւք, ո՛վ պարոններ կամ օրիորդներ, թէ այլևս մանկամարդ 'չէք, երբ մէկը կը հրաւիրէ ձեզ պարի. մի՛ երթաք այն գէշ գաղափարներուն, որոնք, ծերութեան, գիրութեան վախով, ձեզ կը խրաչեցնեն պարին յոգնութիւններէն : Պարը աշխուժութեան և ժիրութեան ամէնէն լաւ միջոցն է : Այդ օգուտէն չզրկուելու համար, որչափ որ կարելի է պահելու է պարի վարժութիւնը : Մի՛ նայիք չափազանց հայելին մէջ, ո՛վ տիկիներ կամ օրիորդներ, զօրեղ ապրեցէք և շարունակեցէք պարել :

Շահեկան կը համարինք հոս ներկայացնել ֆրանսացի նշանաւոր բժիշկ Տօքթ. Մօնէի կարծիքը պարի մասին. «Պարին ազդեցութեան ներքև, մարմինին, միտին յղկուած կակղութիւնը պիտի անհրեւութանայ, տեղ տալու համար բարձև ուժեղութեան մը, առանց վտանգելու կազմերու պերճութիւնը, դնդերներու պինդութիւնով : Տժգոյն գոյները և այտերուն վատառողջ կարմիրը տեղ պիտի պատրաստեն կենդանի մեղղութեան մը : Շըրժութունքները պիտի թողուն իրենց մեղրամամի մորթը, հագնելու համար կարմրութեան լուսափայլ գոյնը : Մաղձաղալկութիւնը (chloro-anémie) փախուստ պիտի տայ» :

Կատարելագէտ համոզուելու համար այս ճշմարտութեան, տեսէք ինչ կ'ըսէ Մեծն Սօկրատ առողջապահական տեսակցութեան մը պահուան. «Իուք կ'ուղէք ծիծաղի՞ իմ շուայլութիւններուս, անոր համար որ ես կ'ուզեմ զօրացնել իմ առողջութիւնս պարի վարժութեամբ, իմ մնունդներուս տալով աւելի քաղցրահամութիւն և աւելի անուշութիւն իմ քունիս : Անոր համար որ կ'ուզեմ չի նմանիլ այն վազողներուն որոնք խոշոր, հաստ սրունքներ և նիհար, վատոյժ ուսեր ունին. կամ ըմբշամարտիկներու որոնց ուսերը միայն կը թանձրանան, և

ազդերները միայն կը ծուլատին: Որովհետև բոլոր իմ անդամներս համախուժը շարժելով է որ մարմնոյս կուտամ լաւ համեմատութիւններ: Ինչ որ ալ ըսէք պարի մասին, ես պիտի պարեմ, եթէ եղեամ տեղայ՝ երդիքի տակ, կամ ամառուան չափազանց տաքին՝ հովանիի տակ»:

Մեզ զբաղեցնող այս արուեստին վրայ խօսած ատեն նրա չենք կրնար մոռնալ Պղատոնի մէկ յափշտակեալ ներբողը. «Պարը վերարտադրելով մեր մամնոյն գործարաններուն բոլոր շարժումները, սահմանուած է տալու մարմնոյն և իր անդամներուն առողջութիւն, թեթեւաշարժութիւն, գեղեցկութիւն, վարժեցնելով ծով և կոխի ելլալ, մարմնի խիստ համաչափ շարժումներով անոր ամէն մասերուն համեմատական գորութեամբը: Բոլոր մեր նշանաւոր գեղերը կը համաձայնին ըսելու թէ պարը ամէնէն առողջապահիկ հրահանգն է, վարժութիւնն է, աւելի գերազանց, փրկաւետ, որ արեան կանոնաւոր չըջան կուտայ և կը կենդանացնէ, կը կակղացնէ դնդերները, վիշտերը կը ցրուէ, գուարթութիւն և առողջութիւն, շնորհ և դիւրակեցութիւն կուտայ և կը փարատէ երկչտութիւնը:»

Անցնինք հիմա պարին բարոյական արդիւնքներուն: Պարը ընկերութեան մէջ զիրար ծանօթացնելու միջոցն է, անծանօթը ծանօթացնելով և մէկէ աւելի անհատներ յարաբերութեան մէջ դնելով: Պարը որ կը վարժեցնէ մարդս գուարթ ու ընկերական ըլլալ՝ մարդկային ընկերութիւնը կը գրգէ նաև վայելչասիրութեան, ինչ որ միժօգտակարութիւն մըն է: Պարը մարդս կը դարձնէ հեզ և գուարթաբարոյ: Ան կը մեղմացնէ խստաբարոյ բնաւորութիւնները և կուտայ նոր բաղդ մը բոլոր անոնց, որոնք զայն կը մշակեն: Չկայ աւելի գործնական և աւելի ախորժելի սթափում քան պարը: Պարելու ձեւը

սրտին տխուր կամ գուարթ զգացումներուն և բարոյական զգայութիւններուն թարգմանն է: Ամէն բանէ վեր ունի անուոն գերազանցութիւն մը այն իմաստով որ իրեն համար չկայ ո՛չ եղանակ և ոչ ալ ժամանակ:

Պարը միշտ իր գոյութիւնը պահած է և պիտի պահէ իր առանձնաշնորհումներով: Որչափ ատեն որ գեղեցկութիւնը և սէրը՝ որոնք առաջնորդեցին մարդուն առաջին քայլերը աշխարհի բեմին վրայ՝ տեւեն, պարը չպիտի դադրի ըլլալէ ազդիւր մը առողջ և հեշտալի հաճոյքներու մարդկային ընկերութեան և ընտանիքներու մէջ, որոնք պէտք է գիտնան զայն ճաշակել:

Յրանոյայի մէջ պարը ամէն ժամանակ ճաշակուած է, քաղելով մարդուն քաղաքակրթութիւնը շաւղին հետ, զայն հետգհետէ աւելի իմաստուն և աւելի նրբամիտ դարձնելով:

Պարը նախ սկսած է պատերազմական ըլլալ, հետըզհետէ աւելի շնորհալի դառնալով մինչև Հոմերի Բ. ուրկէ ետքը սկսած է փայլիլ իր բոլոր շքեղութեամբ, Քաթէրլին տը Մէտիչիսի օրով արքունիքի սրահներուն մէջ: Անկէ ետքը հակառակ քաղաքային և օտար պատերազմներու, Քրանսական կնամեծարութեան համբաւը պարին հետ սկսաւ տարածուիլ աշխարհի մէջ:

Լուի Ժ. Դ. ի օրով, որ պաշտպանեց բոլոր գեղարուեստները, պարը մեծ յարգով ընդունուեցաւ և Կայսրը չէր արհամարհեր մաս կազմել պարախաղերու, որոնք կը պարուէին արքունիքի մէջ: Լուի Ժ. Դ. ի իշխանութեան օրով կաքաւազրութեան արուեստը տարածուեցաւ աւելի բարձր աստիճանով Վեսթփրիի միջոցաւ: Վերջապէս մեր օրերուն ան աւելի յարգուած է քան երբեք: Ան ունի միշտ իր համբաւը և այն որ կը յաւակնի ունենալ կատարեալ կրթութիւն մը և ընկերական մարդ ըլլալ, պարտի գիտնալ պարի:

Քննենք հիմա պարին մեծ առաւելութիւններէն եր-  
րորդը, որով կ'օժտուին անոր հմտացողները: Այդ առա-  
ւելութիւնն է ընկերութեան մէջ մեծարելութիւնը (dis-  
tinction): Գլխաւորաբար ոչ մէկը պիտի գիտնար ներ-  
կայանալ պէտք եղած կերպով ընկերութեան մէջ, եթէ  
չգիտնար պարել, որովհետեւ այդ գիտութիւնը մարդս  
կ'առաջնորդէ մարդկային ընկերութեան սովորութիւն-  
ներուն ուսումնասիրութեանը: Լուրջ պարի դասընթաց-  
քի մը մէջ, մարդ կրնայ սովորիլ թէ ի՛նչ են իր պարտա-  
կանութիւնները կեանքի բոլոր պարագաներու մէջ, կը  
սովորի ինքզինքը արժեցնել ընկերութեան մէջ, հիստ  
ու կացի, շարժուձեւերու և ողջունելու վայելչութիւնը  
ուսնենալով: Պարը կ'ընծայէ իրական օգուտներ քիչ  
աշխատութեան փոխարինութեամբ. հնորհիւ անոր եր-  
կու անձերու մէջ տիրող պաղութիւնը բարեկամական  
կապերու կը վերածուի և հաշտութիւն կը կնքէ այն եր-  
կու հոգիներու միջեւ, որոնք երբեք չպիտի համարձա-  
կէին թերեւս խօսիլ՝ առանց այդ պատեհութեան: Պարը  
շարժուձեւերու բարեշնորհութիւն կուտայ, ինչպէս հնորհ  
դարձուածքներու:

Կ'ըսուի թէ Կամպէթա կը կատարելագործէր իր  
ձարտասանական շարժուձեւերը՝ ուսանելով պարը: Պարը  
մին է այն շարժառիթներէն որոնք կը ծառայեն միացնե-  
լու երկու սեռերը: Ենթադրելով ըլլար թուել այն  
բոլոր պարագաները ուր մարդ կը պարէ: Ընդհանուր  
կերպով կարելի է հաստատել միայն թէ պարը տեղ ունի  
ամէն տեսակ տօնախմբութիւններու, արարողութիւննե-  
րու, ընտանեկան և հանրային զբօսանքներու մէջ: Կինը  
մանաւանդ գիտնալով կատարելապէս պարել, կ'աւելցնէ  
բան մը աւելի իր շարժումներուն մէջ, ըլլալով աւելի  
հնորհալի ու հրապուրիչ, այնքան գեղեցիկ որ կրնայ ըս-  
ուիլ թէ «Լաւագոյն պարուհի մը միշտ գեղեցիկ է»:  
«Une bonne danseuse est toujours belle»:

## Մ Ն Ջ Կ Ա Տ Ա Կ Ը

Մնջկատակը շատ հին ժամանակներէ ծագում առած  
է, դժբախտ սիրոյ մը տխուր առիթով: Ահա թէ ինչպէս:  
Մանկամարդ և գեղանի էրիֆանիս կը սիրէր Մենալք  
անունով որսորդ մը: Բայց Մենալք, երիտասարդ ու գե-  
ղեցիկ՝ անոր հանդէպ անտարբեր էր: Իր սիրոյ հրայրքէն  
մղուած, դժբաղդ աղջիկը կը հետեւէր անոր անտառնե-  
րուն մէջ, իր շինած ոտանաւորները երգելով, որոնց մէջ  
ան կ'աւաղէր անտարբերութիւնը գեղեցիկ այլ անգութ  
որսորդին: Իր եղերերգութիւնները, ափսո՛ս, ապարդիւն  
մնացին: Էրիֆանիս յետոյ մեռաւ սիրոյ հրայրքէն: Աղ-  
ջկան ընկերուհիները միտքերնին պահած էին անոր տը-  
խուր երգերը և շարժուձեւերը: Ու կ'սկսէին կրկնել  
զանոնք՝ և երբ կ'երգէին, անոնցմէ մէկը միմոսական  
պարի ձեւով մը կը ներկայացնէր տաժանելի սէրը, վիշ-  
տը և մահը դժբաղդ էրիֆանիսի: Մենալք որսորդին սի-  
րոյն զո՞հ գացող էրիֆանիսի եղերերգութիւնները ու  
շարժուձեւերը մնջկատակին ծնունդ տուին:

## ԱՇԽԱՐՋԻԿ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կենցաղագիտութիւնը և քաղաքավարութիւնը կեն կրնար բացարձակ ըլլալ : Անոնք կը փոխուին երկիրներու և ժամանակներու համեմատ, որովհետեւ բարքերու խորնդիւր մըն է այդ . բայց մարդ կրնայ ճշդել ընդունուած սովորութիւնները իր միջավայրին համեմատ (երբ խնդիրը իր երկրին վրայ է) : Շատ անձեր փափաքելով ըլլալ նշանաւոր և պերճ, կ'իյնան ծանր մոլորութեան մը մէջ և կ'ըլլան ցուցամոլ, արուեստակեալ : Մարդ չունենալով ճշմարիտ բարեվայելչութիւն, իր յաւակնոտ և արուեստակեալ կերպերը, իր անվերջ արուեստակութիւնը զինքը խիստ ձանձրացուցիչ և անտանելի կը դարձնեն՝ իր յոռեգոյն շարժուածքներուն կամ յոռեգոյն խօսքերուն մէջ : Ծշմարիտ բարեվայելչութիւնը չընդունիր յաւակնոտ և արուեստակեալ կերպեր, և մարդ շատ մը ջանքերէ յետոյ լաւագոյն փորձերով կրնայ ճշդել թէ որոնք են անոնք : Հարկ է միայն ուղղել իր մէջ ինչ որ կայ անխնամ ու եղծ : Պէտք է շեշտել հոս նաև թէ, կ'սոջ համար գլխաւոր շքեղութիւնը, պերճանքը, հագուածքին, վայելչագիտութեանը մէջ կը կայանայ : Երբ ան չունի շնորհալի ծնած ըլլալու բարեբաղդութիւնը, պարտի ջանալ բարեօքել իր շարժումները : Խոստովանինք թէ նուազ գնահատելի են մարմնակրթանքի տարբեր ձեւերը որոնց անձնատուր կ'ըլլայ կինը մեր օրերուն մէջ : Կիները յոռի սովորութիւնը ունին իրենց տալու չափագան-

ցուած ձեւեր որոնք աւելի արական հանգամանք մը ունին, ինչ որ բացարձակապէս կը հակառակի հետապընդուած նպատակը ձեռք բերելու :

Լարախաղաց (acrobatique) մարմնամարզը, մեր տեսութեամբ յանձնարարելի միջոց մը չէ մարմնակրթանքի : Միջոցներ կան որոնք ունին բոլոր պահանջուած բարեմասնութիւնները : Ասոնք են, իբր մարմնամարզ նկատուող տնարարութեան զբաղումները և պարելը : Զեռական աշխատութիւնները եթէ քիչ մը ձեռքերը կը սեւցնեն, փոխադարձաբար կուտան ոյժ և առողջութիւն : Պարը ախորժելի կազդուբուժ մը, հաճոյալի զբօսանք մը և միւսնոյն ժամանակ շարժուածքներու ներդաշնակութիւն մը կուտայ : Մարմնակրթանքի տարբեր միջոցները ինչ որ ալ ըլլան կը ծերացնեն կինը և զայն կը տղեկցնեն քիչ թէ շատ : Հագուագիւտ է գեղեցկութիւնը այն ազգերուն մէջ ուր մարմնամարզի ծանր վարժութիւնները ընդհանրացած են :

Խօսինք նաև ծխելու սովորութեան վրայ, իգական սեռին մէջ : Բնութեան մէջ ամէն ճաշակներ կան : Բայց իրապէս ծխելը գարշելի ճաշակ մըն է : Զեր միժ հրապոյրը, պշրանքը, ախկիննե՛ր, կին ըլլալն է . խոյս տուէք ուրեմն ինչ որ ձեզ կրնայ այլափոխել, կերպարանափոխել : Պարեցէք, և, ինչ որ ալ ըսես, անով է որ դուք պիտի ըլլաք աւելի հրապուրիչ, աւելի սիրուն : Նշանաւոր ըլլալու համար չի բաւեր ձանձնալ աշխարհիկ ամէն սովորութիւնները, այլ պէտք է որ ձեր գործերը ըլլան լիակատար, ազնիւ, շնորհալի և արուեստականութեանէ զերծ : Մարդ մը որչափ ալ կրթեալ ըլլայ, շատ անտանելի կը նկատուի, երբ ինքզինքը գո՛հ կ'զգայ իր թերութիւններուն մէջ :

Զանացէք միշտ ախորժելի ըլլալ և դուք պիտի սիր-

ուիք: Նեղսրտութիւնը և ձանձրոյթը աղետալի են բնաւորութեան վրայ, առողջութեան վրայ և հետեւաբար գեղեցկութեան վրայ. պէտք է քիչ մը կամքով մաքաւելի անոնց դէմ և մարդ կը յաջողի կատարելապէս: Կարգատէր մարդը խոյս կուտայ նեղսրտութեան շարժումներէն: Վշտին դէմ միակ դարմանը աշխատութիւնն է: Իւրաքանչիւր ոք պարտի աշխատիլ իր ոյժերուն սահմանին մէջ: Ինչ որ ալ ըլլան ձեր աստիճանը և ձեր վիճակը, բաղդը, զբաղում մը ստեղծեցէք, որուն միջոցն է երբեք չի նեղանալ: Եթէ ձեր մարմինը յոգնեցնող մտաւորական աշխատութիւն մը ունիք, զայն հանդարտեցուցէք ուրիշով մը: Եթէ ձեր աշխատութիւններուն համար չարաչար վատնէք ձեր ոյժերը, հանգչեցէք կարգալով և դուք ձեռք պիտի բերէք զբաղումներու կատարելալ հաւասարակչութիւն և լաւ առողջութիւն: Կին մը պարտի ըլլալ միշտ պատրաստ դէմ կենալու ամէն պատահականութեանց և պահելու իր անհատական դիրքը, ինչ կացութեան մէջ որ ալ ըլլայ:

Կենցաղագիտական սովորութիւններու վրայ խօսելով, քանի մը տող ալ նուիրենք պարահանդէսի հրաւիրագիրներ և նամակ զրելու կերպին, պարզելով անոր մասին ընդունուած սովորութիւնները: — Հրաւիրագիր կամ իրարու նամակ պէտք չէ գրեն անոնք որ խիստ քիչ ծանօթներ են, նաև երբ մէկու մը մեծ յարգանք կ'ուզուի ընծայել, անպատեհ է նամակ գրել պարզ կամ գունաւոր թուղթի վրայ: Այդ պարագային մէջ պէտք է ընտրել ընտիր և ողորկուած, զրկողին անունը տպագրուած չեղղը (armorié) թուղթ: Բարեկամներու և ազգականներու կրնան գործածուիլ ինչ ձեւ թուղթ և ինչ մեկան որ ըլլայ:

## ՏՂԱՅՈՑ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Պարին հետ սերտ կապ ունեցող պայման մըն է տղուն ֆիզիքական կրթութիւնը, որուն մէջ ուշադրութեան առնուելիք չորս կէտեր կան: Ասոնք են խնամք իմացականութեան, գեղեցկութեան, նկարազրի և սովորութիւններու ուսումնասիրութեան: Ծնողքներն են որ շատ դիւրին կերպով անոնց դաստիարակը կրնան ըլլալ, թէև տղուն մէջ այդ խնամքներուն հիմը բնազդապէս գոյութիւն ունի: Ծնողքները պարտին հրահանգել տղոց այն խնամքները, որոնք անհրաժեշտ են իմացականութեան մշակման և մարմնական կատարելագործութեան համար: Այս պայմանները յարգելով է որ մարմինը պիտի զարգանայ ուղղաձիգ կերպով և աշխատութեան անկարգութեամբ կամ չափողանցութեամբ իմացականութիւնը չպիտի տկարանայ:

Այս անսակէտով ամէն տարիքի մէջ պարը կրնայ ըլլալ մեծ օգնութիւն մը՝ կակղացնելու համար անգամները և շնորհալի շարժումներ ստեղծելու և ծանր զբաղումներէ հանգստացնելու համար: Եւրոպական կրթութիւնը կը պատուիրէ տղոց ֆիզիքական դաստիարակութիւնը սկսիլ զբօսանքներով, երաժշտութեան և պարի ուսուցումներով: Այս կարգի ժամանցներ անհրաժեշտ են ձեռք բերելու համար լաւ արդիւնքներ: Պէտք է տղուն տալ չափաւորեալ աշխատութիւն մը, իր ոյժերուն և տրամադրութիւններուն համեմատ: Չէ՞ մի որ գեղարուեստ

տական այդ ուսուցումները (երաժշտութիւն և պար) տղուն ապագային համար կարեւոր նկատուած ըլլալով, անոնք կանուխէն լրացուցուած կ'ըլլան: Եւրոպայի մէջ տղայոց պարահանդէսներ կը տրուին միշտ, որպէս զի անոնք կանուխէն վարժուին երաժշտութեան և պարին: Տղուն միտքը զարգացնելու, ճաշակները գեղեցկացնելու, ազնուացնելու կոչուած են անոնք: Եւրոպական վարժարաններու մէջ ուսուցչական մարմինը մտաւոր մարզանքներուն հաւասար կարեւորութիւն տուած է նաև երաժշտական ուսուցման և հաղուադէպ բան չէ տեսնել այդ վարժարանները յաճախող տղաք՝ որոնք առաւօտները իրենց թեւին տակ առած երաժշտական գործիք մը կը դիմեն այն յարկերը ուր մտաւոր ուսուցումներուն տաղտուկը կը փարատեն ատեն ատեն երաժշտութեան հոգեղութեամբ ու կենսապարար եղանակներով ու պարելու հաճոյալի զբօսանքներով:

Ինչո՞ւ նոյն բանը պակասի նաև մեր վարժարաններուն մէջ և տղաք հոն իրենց փոքրիկ տարիքէն չսկսին վարժուիլ, կրթուիլ գեղարուեստական մշակումով, ինչպէս մտաւորականով: Կարելի՞ է ըսել որ նոյնչափ կենսական չէ անոր պէտքը, որչափ երկար շարքերը մեծամեծ «ութ»-իւններուն: Դպրոցական սերունդին բարւոք կազմութեանը համար է որ կ'ուզենք ըսել թէ գեղեցիկ արդիւնքներ կախում ունին անկէ: Ծնողքներ պարտին ուշադրութիւն դարձնել տղայոց դաստիարակութեան կրթութեան այս կարեւոր պէտքին: Ծնողքներ պարտին ուշադրութիւն ընել իրենց տղայոց ուսմանց, արուեստի մէջ իրենց կարողութիւններուն և տրամադրութիւններուն չափովը աշխատցնել և հոգ տանիլ զանոնք մշակել տալու ո՛ր ճիւղին մէջ որ տրամադրութիւն և ընդունակութիւն ցոյց կուտան: Ծնողքները իրենց տղայոց առաջին դաս-

տիարակներն են և պէտք չէ թերանան իրենց այդ պարտականութեանը մէջ:

Թերի կրթութիւնը պատճառ կ'ըլլայ որ տղան չունենայ պէտք եղած կերպով յաջողելու միջոցը կեանքի ասպարէզին մէջ: Մարդկութեան դէմ չի կրնար ըլլալ աւելի աղետալի, աւելի մեծ ոճիր մը՝ քան երբ մէկը այդ մեծ պատասխանատուութեան դէմ կը գործէ:

# Պ Ա Ր Ի Ն

## ԱՌՈՂՋԱՊԱՋԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ

### ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ՔԱՆԻ ՄԸ ՎԱԻԵՐԱԿԱՆ ՎՃԻՌՆԵՐՈՎ

Իգական սեռին մէջ ծխելու սովորութիւնը, գործածութիւնը այրերէն աւելի գէշ անպատեհութիւն մը կը ներկայացնէ: Փափուկ սեռին բերնին մէջ այդ ծխաշունչ բուրմունքը և ժանտահոտութիւնը աւելի գէշ ազդեցութիւնը կ'ընեն դիմացինին վրայ: Ծխելը վտանգաւոր չարիք մըն է կնոջ քով. և այդ չարիքը անարիւնութիւնն է: Եթէ մարդ փնտռէ անարիւնութեան ծագումները, պիտի գտնէ թէ ան՝ ծխելու չափազանցութեան արդիւնքն է: Մարմնական վարժութիւնները փրկարար են մանկամարդ օրիորդներուն առողջութեան, եթէ սակայն խոյս չտան անոր պատճառած յոգնութիւններէն: «Ձղային հիւանդութիւնները (nevrose) խիստ տարածուած չպիտի ըլլային եթէ, մարմնամարզը կամ մարմնակրթանքը պատշաճապէս մուտ գտած ըլլային արդի կրթութեան մէջ»: Այս ուսուցումը իգական սեռին մէջ կ'անստուեր շատերու կողմէ, մոլորաբար կարծուելով որ ան սաստիկ, դժուարատար վարժութիւններու և մեծածախս գործիքներու կը կարօտի. ընդհակառակը:

Հաւազոյն մարմնամարզը, մարզանքը, կնոջ համար այն է ինչ որ կը կոչուի սենեակի մարմնամարզ: Շարժուձեւեր, շատ պարզ բան մը, միմիայն տան մէջ ձեռ-

նական և մարմնական ժարչումներ, և ահա ինչ որ պէտք է: Միւս վարժութիւնները, այսինքն մարմնա-մարդիբուն ձեւերուն մէջ գտնուող կախուիլը (ascention), և այլն կրնան պատճառել ծանր անկարգութիւններ: Մարմինը զօրացնելու և թեթեւաւարժելու յատուկ շարժումներու տեսակէտով, պարը կը բունէ առաջին տեղը: Խիստ այլազան փորձ մըն է պարը, որ գործունէութեան մէջ կը դնէ բոլոր դնդերները: Սիրուն վարժութիւն մըն է ան որ քիչ մը ջանքով անմիջապէս ճշմարիտ կազդուրում մը կը պարզեւէ և գուարճալի զբաղում մը կը դառնայ: Բայց քիչ ժամանակ յետոյ այդ շարժումները կ'ըլլան մեքենական և յոգնութիւնը՝ որ յառաջ կուգայ մեծ մասամբ մտածողութեամբ, կ'աներեւութանայ: Համառօտիւ, պարը, սկզբամբ՝ կը պահանջէ փորձերու փոքրիկ ճիգ մը, ինչպէս ո և է վարժութիւն, բայց ով որ դայն կատարելագործէ՝ կը գրաւուի անկէ:

Վարժ պարող մը լրջօրէն պէտք է հետեւի երաժշտութեան չափերուն, որպէս զի դնդերները գէշ չի գործեն: Այն ստեղծ լաւ պարողը միանգամայն հաճոյք և օգուտ պիտի գտնէ: Հաճոյք, որովհետեւ պարը անշուշտ ամէնէն ախորժելի զբօսանքներէն մին է և օգուտ որովհետեւ ան առողջութիւն կը պարզեւէ: Ստուգիւ այս վարժութիւնը մարմնամարզ մըն է:

Պարը գործունէութեան մէջ կը դնէ բոլոր դնդերները այն շարժուձեւերուն հետ որոնք կը պահանջեն անդամներու անհամար խոնարհումներ և վերացողումներ: Այս բազմակողմանի խաղը կուտայ յօգակձկուսներ, ճկունութիւն, դիւրաթեքութիւն և դնդերները կ'ստանան ոյժ և առաձգութիւն: Նաև երբ մէկը կը պարէ, միայն վարի անդամները չեն որ կը շարժին, այլ բոլոր մարմինը, գլուխը, բազուկները և իրանը կը մասնակցին այդ շար-

ժուճներուն : Երբ մարդ կը սովորի պարել , կը սովորի նաև քալել , լաւ դիրքով կենալ , ուղղութիւնը փոխելուն մէջ շնորհալիօրէն շարժիլ : Այսչափ տարբեր ուսուցումներ , այսչափ զքանչելի վարժութիւններ , ուսերը լայնցնելով , մարմինը համարձակ , ուղիղ կ'ընեն և կուրծքը կ'ընդլայնեն : Անոնք բարիքներն են պարին , որոնցմով ոյժը , շնորհքը և առուզութիւնը կ'աւելնան և կը պահպանուին : Չկայ կարծեմ վարժութիւն մը աւելի ակտիւնի , աւելի առողջապահիկ և աւելի զօրացուցիչ՝ քան այս փորձը :

## ՊԱՐԻՆ ԿՐԱՅ ԴԱՏԱՎՃԻՌՆԵՐ

- Պարը լաւագոյն բժիշկն է :
- Պարը կ'սթափեցնէ օրուան յոգնութիւններէն ու վիշտերէն , կ'անհրեւութացնէ թուլութիւնը (atomie) :
- Պարը կուտայ ոյժ և զօրութիւն :
- Պարը հոգին կը հանդարտեցնէ :
- Պարը աննսխարնթաց դեղ մըն է :
- Պարը ընկերական կ'ընէ :
- Պարը կը ստրվեցնէ համեստ ըլլալ ու սիրել իրմէ աւելի փոքրիկները :
- Պարը զուարթաբարոյ կ'ընէ , համարձակ դէմք մը կուտայ և մարմնի լաւ դիրք մը :
- Պարը մարդասէր կ'ընէ և համակրելի դիմագիծ մը կուտայ :
- Պարը չարերուն քաղցրաբարոյութիւն կուտայ :
- Պարը անհրաժեշտ է ամէնուն . կատարեալ ըլլալու համար :
- Գիտուն մարդիկ նոյնիսկ թերի են եթէ չեն ճանչնար պարը , անոր ձեւաբանութիւնը , ո՛չ ալ պարտականութիւնները որոնք իրեն յատուկ են , տարբեր միջավայրերու և տարբեր պարագաներու համեմատ :
- Պարը նոր բարեբազմութիւն մը կուտայ անոնց որոնք զայն կը մշակեն :
- Պարը բնական առաւելութիւնները կ'արժեցնէ :
- Պարը ներողամիտ , փիլիսոփայ և զիւանագէտ կ'ընէ :

Պարը հաճոյք մը ըլլալով մէկտեղ, ճաշակը կուտայ աշխատելու և աշխատութիւնը սիրելու :

Պարը մտաւորական կարողութիւնները կը զարգացնէ, կը սրէ և կ'ուսուցանէ սովորութիւններու և պատշաճութիւններու թերութիւնները :

Պարը ակտիւրը կը ջլատէ, նոյնպէս չար կիրքերը կ'ուզղէ :

Պարը մարդս միշտ կը հեռացնէ գէշ յաճախումները :

Պարը կը վարժեցնէ պարզ և հաճելի խօսակցութեան մը :

Պարը երկչոտներուն համարձակութիւն կուտայ :

Պարը զօրեղ, գրգռիչ դեղ մըն է :

Պարը միտքը կը զուարթացնէ և առողջ կը պահէ :

Պարը ընկերութեան մէջ լաւ դիրք մը կը պատրաստէ : Պարը կենցաղագիտութիւն կը սովորեցնէ և երեկոյթներու մէջ միշտ ակտիւրը կը թուի և կը գնահատուի :

Պահը յիշողութիւնը միշտ վառ կը պահէ և զարգացումը կը դիւրացնէ :

Պարը կը հանդարտեցնէ սեռային գրգռութիւնները :

Պարը կը սովորեցնէ ողջունելու բոլոր կերպերը ամէն պարագաներու մէջ :

Պարը կը վարժեցնէ շատ անձերու հետ ծանօթութիւններ ունենալու և բարեկամներ ստեղծելու :

Պարը երեկոյթի կամ պարահանդէսի ներկայանալու կերպին կը վարժեցնէ :

Լաւ կառավարուած պարի դասընթացքի սրահ մը լաւագոյն տեղն է մարդուն, իր կրթութիւնը ամբողջացնելու համար :

Պարը կը հանդարտեցնէ ջիւղերը և կը հանդատացնէ :

Պարը ակտիւրը կուտայ :

Պարը կը նիհարեցնէ, բոլորովին պակսեցնելով մարմնոյ ծանրութիւնը, որովհետեւ դնդերները կը զօրացնէ, անբեւութեանցներով ճարպը :

Պարը աշխուժութիւն կուտայ այն անձերուն, որոնք կը ձգտին խեղ ըլլալ :

Պարը զուարթ կը պահէ և ասով կ'արգիլէ ծերանալ :

Պարը արուեստ մըն է զոր պարտի ամէն ոք մշակել և ուսումնասիրել զայն :

Պարով մարդ կը ճանչնայ լաւ աստիճանի անձերը :

Պարը ճշմարիտ դեղն է միջառանջներու դէմ :

Պարը մարդուն հաճելի ընկերն է և ակտիւրը գրասանքը :

Պարը ամէնէն սաստիկ խորհրդածութիւններուն և սրտին ամէնէն ծածուկ զգացումներուն հաւատարիմ թարգմանն է :

Պարը կը սովորեցնէ ձեռքերու և ոտքերու շնորհալի շարժումները :

Պարը օգտակար է ո և է մէկու, իր ամէնէն մտազաշ տարիքէն խակ :

Պարը ինչպէս մտաւորական զարգացման նոյնպէս մարմնակրթութեան մէջ կարեւոր ազդեցութիւն մը ունի :

Պարը կը յաղթէ բարկութեան և մեղամաղձտութեան, որոնք էն վտանգաւոր և էն այլանդակ կիրքերն են :

Պարը գանձ մըն է ամէնուն համար և եթէ մէկը պարէ պիտի ճանչնայ անոր բոլոր բարիքները :

Թագուհիներուն պարն է Մընիւէն, որ միեւնոյն ժամանակ պարերուն թագուհին է :

Պարը բանաստեղծին ներշնչման աղբիւրն է :

Երաժշտութիւնը և պարը կը մտրակեն և կը ոգեւորեն պարողներուն արիւնը, ինչպէս մտրակի հարուածները ձին կ'ոգեւորեն :

Մեծն Սոկրատ ըսած է «պարի ակտրժելի վարժու-  
թիւն մը աւելի կ'արժէ քան ամէնէն նշանաւոր բժիշկ մը :»

Երզը երաժշտութեան խօսքն է, պարը շարժուած-  
քինն է :

Լաւ երաժիշտ մը կամ երաժիշտունի մը ըլլալու  
համար պէտք է պարել գիտնալ, ինչպէս դերասան մը  
կամ դերասանուհի մը իրենց դերին մէջ գիւրաւ կը յա-  
ջողին երբ գիտեն պարել :

Այն որ կը սիրէ պարը կը սիրէ ասպղան :

Յաճախ տղայոց մարդասպանները ծնողքներն են,  
որովհետեւ զանոնք կը կրթեն խիստ փակուած և խիստ  
առանձնակեաց վիճակի մէջ, ինչ որ կը բերէ արեան  
նուազութիւն :

Հաճելի թուելու համար պէտք է պարել գիտնալ :

Նաբոլէոն Ա. ըսած է. «Վեց ժամ պար երբեմն  
աւելի նախընտրելի է՝ քան վեց ճակատամարտներ,  
աստիճան և տխրոս շահելու համար :

Պարը լեզու մըն է :

Յուցուցէք ինձ ինչպէս կը պարէք պիտի ըսեմ ձեզի  
ինչ որ էք :

Պարը հոգւոյ վիճակի մը արտայայտութիւնն է :

Պարը շարժուածքներով է, ինչպէս բանաստեղծու-  
թիւնը արձակով :

Պատշաճութիւններու տիրապետութեան դէմ հաճելի  
հանգիստ մըն է պարը :

Խեղերը կը բամպասեն պարը :

Աշխարհի վրայ կան երեք սիրուն բաներ, ձիուն  
քառասմբակ արշաւելը, նաւուն առագաստաբաց սուրա-  
լը, կնոջ շրջապարելը (valsar) :

Պարողը ժամանակին նկարն է :

Պարը շարժուածքի բանաստեղծութիւնն է :

Զգայուն մարդիկ անգամ կը սիրեն պարը, անկէ  
հրաժարելէ վերջ իսկ :

Պարահանդէսի սրահը ծաղկաւէտ պատերազմի դաշտ  
մըն է :

Տկար կինը անգամ մասնաւոր հակում մը ունի  
պարի համար :

Պարահանդէսի ժամը հաճելի թուելու ժամն է :

## ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆՔԻ ՄԻՋՈՅՆԵՐ

### ՃԿՈՒՆ ԸԼԼԱԼՈՒ ԱՐՈՒԵՍԸ

Մարմնակրթութիւնը մարդուն առողջ և միանգամայն երկար ապրելու միջոցն է. ամէն մարմին, ամէն կազմուածք քիչ թէ շատ պէտք ունի անոր. այդ պէտքին դժբաղդարար նուազ կարեւորութիւն կը արուի շատերու կողմէ և շատ քիչեր են որ զգուշական միջոցներով կը կրթեն իրենց մարմինը, խնամք կը տանին անոր և կ'զգուշանան իրենց առողջութիւնը վտանգելէ: Մարմնամարզի (gymnastique) յատուկ և օրինական շարժուձեւերը որոնք այդ պէտքին ծառայելու կոչուած են, շատեր կը դանդաղին իրենց վարժութիւն ընել, գիտնալով հանդերձ անոնց օգտակարութիւնը առողջապահական տեսակէտով. անոր գործածութիւնը գրեթէ մեր մէջ գոյութիւն ունենալէ դադրած է: Մարմնամարզը, ոտքի, ձեռքի և մարմնին զանազան ժարժուձեւեր ունի, իրեն յատուկ չափերու ու կերպերու գործածութեամբ: Մեր վարժարաններուն մէջ ուր այս պէտքը աւելի կը շեշտուի, գրեթէ քիչ շատ խնամք կը տարուի փոքրիկները կրթելու զանազան խաղերու մէջ: Եւրոպական վարժարաններու մէջ այդ պէտքին աւելի մեծ կարեւորութիւն ընծայուած է և մանաւանդ աւելի ճոխ ու կանոնաւոր է ան: Մարմնամարզը մանկապարտէզէն պէտք է սկսի, ուր տղան շատ կանուխէն կը վար-

ժուի անոր: Իր ուսանողական երկար շրջանին մէջ տղան երկարատե նստողական ու մշտնջենական հանդարտ կեանք մը ունի, դատապարտուած մտաւորական աշխատութեան ծանր բեռին տակ ընկճուելու: Մարմնամարզ, զանազան ժամանցներ, զբօսանքներ՝ տղուն մտաւորական յոգնութեանց տաղտուկը փարատելու կոչուած են: Դիտեցէք օտար վարժարանները՝ ուր ամէն դասակարգի տղաք մարմնամարզի ու զեղարուեստներու աշխատութեամբ կը կրթուին ու կը լրացնեն իրենց պէտքը այս կերպով: Մարմնամարզ, երգ ու պար երրորդութիւն մը կը կազմեն, իրենց օգտակարութեանց տեսակէտով:

Անոնք կը կրթեն ու կը զօրացնեն տղոց միտքերը, կ'աղնուայնեն սիրտերը ու կը նրբացնեն անոնց ճաշակները: Տղուն թէ ներկային և թէ ապագային համար կրնան օգտակար ըլլալ: Չէ՞ մի որ այս տեսակ կրթութիւն ստացած աղաք մարդկային ընկերութեան մէջ իրենց դերը վայելչօրէն կրնան լրացնել: Օտար ընկերութեանց մէջ մեր թերի կրթութիւնը միշտ կը մատնանշուի: Հոն մեր քանի մը եւրոպական լեզուներու հմտութենէն աւելի պէտք է փայլի ընկերական վայելչութիւնը, խօսելու, վարմունքի, նիստ ու կացի, շարժուձեւերու ընդունակութիւնը: Մինչդեռ դիտուած է ընդհակառակը որ կը շարունակենք մեր այս մասին յետամնաց վիճակը, ինչ որ քննադատելի է: Վարժարաններու մէջ պարը տղոց համար աւելի կարեւոր է քան անկէ դուրս որովհետեւ հոն կեանքի ասպարէզը նետուող տղան ունի առիթներ՝ ձեռական կամ մարմնական զբաղումներով լրացնելու մարմնակրթանքի պէտքը, ինչպէս առանցիկ զբաղումները և ձեռարուեստները այդ դերը կը լրացնեն իրական սեռին մէջ: Դպրոցէն դուրս իրական սեռին համար նուազ շեշտելի է պէտքը մարմնակրթանքին՝

իրենց փափուք կազմուածքին հետեւանքով : Մանաւանդ կիներու , որոնք չեն կրնար ինքզինքնին ենթարկել շատ ծանր փորձերու , որովհետեւ մօրենական պարտականութիւնները արդեւք կ'ըլլան անոնց և յաճախ վտանգ ալ կը սպառնան դիւրահասկնալի պատճառներով : Իզական սեռին յատուկ փափկակազմութիւնը այս մարմնակրթանքի դժուար կիրարկումներով , կը կորսնցնէ կնոջ փափուքութիւնը ու գեղեցկութիւնը , պատճառ ըլլալով դէմքին նիհարութեան , տժգունութեան և մանաւանդ մաշումին : Կիները այդպէսով իրենց առողջութիւնը կրնան վտանգել : Իբր մարմնակրթութեան միջոց պէտք չունինք անպատճառ հետեւելու մարմնամարզի բուն շարժուձեւերուն , քանի որ շեշտեցինք նոյնչափ օգտակարութիւն ունեցող զանազան կրթական ու մարմնական աշխատութիւններու միջոցները , որոնց օժանդակութեանը կը դիմինք , զոր օրինակ բացօթեայ պտոյաներ , զանազան աշխատութիւններ , հողագործութիւն , մեքենավարութիւն , թուռցիկ թռցնել , լողալ , պարիւլ , երգել և այլն : Ասոնք ալ իրենց յատուկ ու չափաւոր գործածութիւններով կրնան օգտակար ըլլալ : Կ'ուզենք մեր դիտողութիւնները ընել այս մարմնակրթանքի միջոցներէն մէկ քանին շուրջը , քանի որ անոնց գործածութեան եղանակը կը տարբերի :

Պիտի ուզենք խօսիլ հեծելանորդութեան (vélocipédie) վրայ , որուն գործածութիւնը ընդհանրացած չէ այնչափ բարեբաղդաբար մեր երկրին մէջ : Հեծելանիւ վարելու մէջ չափաւորութիւնը անհրաժեշտ պայման է : Անիկա սկզբամբ օգտակար չէ նկատուած , քանի որ զուրկ է հաճոյք , զբօսանք մը նկատուելու առաւելութենէն : Հեծելանիւր շատ հեռու տեղ մը շուտ հասնելու պէտքին է որ կը ծառայէ իբր գործիք , խիստ մաքուր և ուղիղ ճամբու մը վրայ սակայն : Դիտեցէք անգամ մը պիսիքը ,

սրարչաւ ընթացքին մէջ , որուն վրայ մէկը բոլորովին ծռած (իր ձեւը այդ է) կոնակը կամարածեւ , վիզը երկարած դէպ առաջ , ոտքերը , մանաւանդ ալ կողմինը անիւր դարձնելու կամ շարժելու դատապարտուած , ա'լ աւելի վազցնելու հապճէպ դիրքը , միւս կողմէ հաւասարակշռութիւնը չկորսնցնելու մշտտեւ վախը , կ'ըզբաղեցնեն հեծելանորդին միտքը միշտ այդ կէտին կեդրոնացնելու , ուշադրութիւն ընելով ուրիշի մը , այսինքն դէմ եկողին չզարնուելու . այսպէս ան զբաղած է միշտ միտքով և շնչասպառ կը յատաճանայ քրտնաթաթաւ , ինքզինքը տալով աւելի շուտ և արագ վազելու , բանի աշխատութեան մէջ դատապարտեալի մը պէս : Ի՞նչպէս կրնաք ընդունիլ աշխատութիւն մը , կամ յոգնութիւն մը իբր առողջապահիկ որ իր կոչումը կը կորսնցնէ այդ կերպով : Մանաւանդ ուշադրութեան առէք այն սոսկալի վազքին մէջ հովին յարուցած սաստիկ դիմադրութիւնը որ իր վնասակար ազդեցութիւնը կ'ունենայ քրտնաթաթաւ մարմնին վրայ ու կը խափանէ կանոնաւոր շնչառութիւնը : Մեքենային վրայ մարդուն կոր ձեւը , մարմնին կեցուածքի բարեձեւութեան կը վնասէ . դէմքին երեւոյթը կը տգեղցնէ և ողնայարին այս մշտնջենական կորութիւնը մարմնին կազմութիւնը կը խանդարէ , գործարանները կը ճնշուին , թոքերը իրենց լաւ աճումը կ'սկսին կորսնցնել , շնչառութիւնը կարուկ և անկանոն կը դառնայ և օդին սաստիկ թափանցողութիւնը կը փութացնէ շնչահեղձութիւնը (suffocation) : Մէկ խօսքով , այս վարժութեան քիչ մը աւելին՝ կը ճնշէ ու կը տկարացնէ մարմինը . անոր մոլի գործածութիւնը վտանգ կ'սպառնայ : Եւրոպայի մէջ , մանաւանդ երկու սեռէ Բարիցիք այս նորաձեւութեան այն աստիճան մոլեռանդօրէն հետեւեցան որ ան իր չար հետեւանքները ունե-

ցաւ . աւելի հեծելանիւ վարող կար քան ձի : Վերջերս վիճակագրութիւն մը մեզի ցոյց տուաւ թէ մէկ տարուան միջոցին ինչ սոսկալի վնասներ պատճառած է , բժշկականօրէն հաստատուած :

Մինչեւ 2000ի կը բարձրանար թիւը հիւանդ կամ վիրաւորներու , որոնց 500ը մեռած են այդ չարաչար գործածութեան պատճառով : Կիներն ալ Բարիզի մէջ , մանաւանդ այդ տեսակ նորածեւութեանց հետեւելու այրերէն աւելի ունեցած իրենց մոլի սովորութիւններով , աւելի տուժելու ենթակայ եղան : Իգական սեռին յատուկ փափկակազմութիւնը ընդունակ եղաւ հեծելանորդութեան մէջ իր ծանր պատիժները կրելու : Եւ Ակադեմիայի առջեւ Փրանսացի նշանաւոր բժիշկ մը իր մէկ ճառախօսութեանը մէջ թէ և մարմնակրթանքի համար նորանոր յանձնարարականներ կ'ընէր , զանազան զբաղումներ , աշխատութիւններ , պտոյտներ , բացօթեայ զբօսանքներ , խաղեր , երգել ու պարել յանձնարարելով և շեշտելով անոնց օգտակարութիւնները առողջապահական տեսակէտով , սակայն կը վերջացնէ իր խիստ մէկ դիտողութիւնը հեծելանորդութեան վրայ , ակնարկելով մանաւանդ կիներու . « իգական սեռին մէջ հեծելանիւնին ընդհանրանալը Փրանսացի համար սերունդի նուազում մը կը նկատեմ » : Ան աօրինակ մը երկու սեռին համար , որուն վրայ կ'արժէ ուշադրութիւնը հրաւիրել նորածեւութեան կոչողութեան ու մոլի հետեւողներուն , թէ՛ ֆիզիքապէս և թէ նիւթապէս չի տուժելու համար :

Քանի մը խօսք ալ պիտի ուզենք ընել ծով մտնելու կամ լողալու մասին , որուն կիրարկումը աւելի բնդհանուր է և սակայն շատերու կողմէ չարաչար կը գործադրուի : Լողալու մէջ երբեք հաճոյք կամ ժամանց չկայ . իբր դեզ կամ դարման անոր նպատակը կ'արդարանայ .

լողալն ալ մարմնակրթանք մըն է , որուն չափը ու սահմանը պէտք է որոշուի : Այդ չափը կը արուի ո և է կազմի կամ առողջութեան վրայ քննութիւնէ մը յետոյ . պատճառը այն է որ ո և է ծով մտնել ուզող բժշկական խորհուրդի մը պէտք կ'զգայ :

Ծով մտնելու մէջ գլխաւոր պայմանը երկար ժամանակ մէջը չմնալն է , պայման մը ամէն մտնողին համար : Հակառակ պարագային կը տուժէ , գլխաւորաբար կարկամութեան պատճառ ըլլալով , ինչ որ չափազանց լողալու վտանգներէն մէկն է . լողալը ոտքերու և ձեռքերու միանգամայն շարժումներով պէտք է կատարուի : Հակառակ պարագային՝ բազուկները կ'աճին միայն ի վնաս սրունքներուն կամ փոխադարձաբար . բազուկներու չափազանց յոգնութիւնները բազդատմամբ սրունքներուն նուազ վնասակար է . սրունքներու սաստիկ յոգնութիւնը՝ գործարաններու , արգանդի տկարացման և մաշողութեան կ'ենթարկէ , տեսակ տեսակ հիւանդութիւններու պատճառ կ'ըլլայ , գլխաւորաբար արիւններթութիւն :

Մարմնամարզը , մարմնին առողջ , ուղիղ և վայելուչ ձեւ մը կուտայ , շարժուձեւերուն մէջ ճկունութիւն մը կը դնէ և կը վարժեցնէ թեթեւաշարժ ըլլալ՝ քալելու ու աշխատելու մէջ նուազ յոգնելով : Մարմնամարզը իր ճշգրիտ գործադրութեանը մէջ միայն պերճ է . մարմնակրթութիւնը առողջ կազմ , հետեւաբար երկար ապրելու կ'օգնէ և կեանքը որչափ ալ երկար ըլլայ ու սահմանաւոր , վայրկեանի մը կորուստէն իսկ պէտք է ազդուի մարդ : Պէտք է գիտնալ նաև թէ մարդկային ամէն մարմին կամ կազմուածք կարող չէ իր ուժէն վեր յոգնութեան ենթարկուիլ : Հետեւաբար մարմնամարզի և մարմնակրթանքի զանազան փորձեր՝ որոնց մէջ կը

դնենք զմեզ, պէտք է ուշադրութեան առնուին ու քննուին անոնց օգտակար ու վնասակար կողմերը և ընտրուին իրենց չափաւոր սահմանին մէջ, օգտուելու համար անոնցմէ, ունենալու համար առողջ կազմ, բարե-  
ձեւ մարմին, վայելչասիրութիւն, շարժուձեւերու մէջ շնորհք, չվնասուելու և շտուժելու համար անոնց սպառ-  
նացած վտանգներէն :

## ԿԵՆՅԱՂԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Սալօնի մը մուտքէն ներս հիւրեր ինքնին մուտք չունին : Այդ պաշտօնը կը յանձնուի հիւրամեծար ծառայի մը կամ շքադիր պարոններու : Այցելութեան եկող կին մը երբեք ոտքի չելլեր ողջունելու համար մարդ մը որ սրահ կը մտնէ . միայն տանը տիրոջը կը վերաբերի այդ յարգանքը : Տիկին մը կամ մանկամարդ օրիորդ մը երբեք պէտք չէ անհանգիստ ըլլայ օգնելու պարոնի մը, անոր վերաբերուն յանձնուելու առնն :

Ընդհանրապէս սալօնին մէջ տանտիրուհին, իր ազ-  
ջիկները և մօտ բարեկամուհիներն են որ կը ծառայեն թէյի, սուրճի, և շն . սպասարկութեան առնն, սրահին մէջ : Զուարթաբարոյ և միւսնոյն ժամանակ երեկոյթնե-  
րու մէջ վնասուող ըլլալու համար պարոն մը պարտի ճանչնալ գէթ ամէն բան, բայց մանաւանդ երաժշտու-  
թիւն և պար : Եթէ մէկը կ'ուզէ որ իր ազաքները գիտ-  
նան ընկերութեան մէջ ինքզինքնին արժեյնել, պէտք է սովորեցնէ անոնց սալօնի սովորութիւնները և կերպերը :

Պատանիներ պէտք է միշտ պատրաստ ըլլան տա-  
մերուն հանդէպ յարգանքի պարագաներուն մէջ : Տան-  
աէրն ու տիկինը պարտին ջանալ պարել տալ բոլոր տա-  
մերը, և մանաւանդ չթողուլ ոչ մէկը տեղը գամուած

մնալու . այդպէս ընելը կրթութեան ցոյց մը պիտի ըլլայ  
և տամբերը , որոնք այրերէն աւելի կը սիրեն պարել ,  
կրախտապարտ պիտի մնան իրենց հոգածու գտնուող-  
ներուն :

Պատանի անձեր կոչուած են զուարթութիւնը և ոգին  
կազմելու այն ընտանեկան հաւաքոյթներուն ուր  
հրաւիրուած են : Ուրեմն անոնք պէտք չէ վարանին  
սկսելու ցայգահանդէսները կամ պարահանդէսները և  
արիաբար պարելու մինչեւ վերջը , որով տուած կ'ըլլան  
իրենց կենցաղագիտութեան և նրբամտութեան սպառնալից :

Պատանի տղաքներ կրնան դուրսել . բայց ոչ մէկ  
պարագայի տակ պէտք չէ թողուլ զանոնք դուրսել փոք-  
րիկ աղջկան մը : Աղջիկը երբ մեծնայ , ակտրոսիկի չպիտի  
գանէ իրեն դուրսելը մանկամարդ անձերէ : Երբ մէկը  
պարահանդէս կ'երթայ պէտք է խոյս տայ համեմատոր  
կերակուրներ ուտելէ , ալքօլ չխմէ , չծխէ , մէկ  
խօսքով պէտք է զգուշանայ ամէն բանէ որ շունչը  
կ'անպակածէ , որովհետեւ այդ անպատեհութիւնը ենթա-  
կան սաղակալի կ'ընէ պարուհիներուն և փոխադարձա-  
բար : Պարելու միջոցին քալալիէն պէտք չէ խնջի . առ  
առաւելն կրնայ իր թաշկինակովը երեսը սրբել միայն :  
Լանսիէի մէջ , իր տամբ ձգելով ուրիշ տամբու հետ  
խօսիլ անպատշաճ է : Եթէ մէկը տամ մը անկաթէ ըրած է  
պարի մը , այն տամին հետ պէտք է պարէ այդ պարի  
միջոցին , մինչեւ որ տամբ բաւական նկատէ շնորհակալ  
ըլլալով : Սրահին մէջ , այր մը կրնայ սուաջարկել տամբ  
մը՝ անոր կօշիկին կապերը կապելու . կառք նստելու հա-  
մար , պարոնները պէտք է ձեռքերնին ներկայացնեն տա-  
մբուն անոնց օգնելու համար . տամբը կը բազմին պատ-  
ուոյ տեղերը , իսկ պարոնները դէմը կը նստին . պարոն-  
ները աջ ձեռքերնին պիտի ներկայացնեն տամբուն օգ-

նելու համար , որոնք կառքէն վար կ'իջնեն : Եթէ պա-  
րոնները տարիքոտ են , տամբը աւելի երիտասարդ ըլլա-  
լով անշուշտ պէտք է տան պատուոյ տեղերը այրերուն :

Երկարութիւի և հանրակատարներու մէջ նոյնպէս տամբը  
լաւագոյն տեղերը պէտք է հրամցնել և թող չտալ որ  
կին մը կենաց ոտքի վրայ կամ սպասէ տախտակամածին  
վրայ : Ամերիկացի մէջ սովորութիւն է որ ճամբորդները  
հանրակատարէն վար կ'իջնեն դուրսը սպասող տամբուն  
տեղ տալու համար : Անգղիոյ մէջ այդ սովորութիւնը  
խիստ յարգուած է : Շոգեկատարին մէջ պատանիներ տա-  
րիքոտ անձերու կը հրամցնեն լաւագոյն տեղերը . անոնք  
կրթութեան և ազնուութեան ցոյցեր են և քաղաքավա-  
րութեան պայմաններ , իրենց պատշաճութեանը մէջ :

Երբ տամ մը անդուլտէ կ'իջնէ , պէտք է անոր առջեւէն  
անցնիլ , բայց կողմնակի ձեւով մը , սխալ քայլի մը կամ  
էյնալու պարագային անոր օգնելու համար , ինչ որ ան-  
կարելի պիտի ըլլար , եթէ մէկը անոր հետեւելով իջնէր :  
Ելլելու միջոցին նսեւ պէտք է կանխել տալը , կողմնակի  
կերպով , թոյլ տալու համար տամին ազատորէն վերցնել  
իր քղանցքը , անզգոյշ նայուածքներու տեղի չտալու հա-  
մար : Իսկ եթէ մէկը ամառուիսին վրայ կը դիմաւորէ  
տամ մը , կամ իրմէ յարգելի անձ մը , սովորութիւն է ետ-  
քաշուիլ , ազատ թողլով վանդակապատի կողմը : Աւելի  
լաւ է սպասել դաւիթին վրայ , որ ան ազատ անցնի :  
Ինչ առիթի մէջ որ ալ ըլլայ . երբ մայր մը աղջիկը  
պարահանդէս կը տանի , նախ ինքն է որ պէտք է հրա-  
ւիրուի (եթէ կը պարէ) . ուսանող մը իր ուսուցիչին հետ  
խօսելու ատեն պէտք է ըսէ անոր միշտ . « սիրելու ու-  
սուցիչս , կամ սիրելի վարպետս » :

Մանկամարդ աղջիկներ կամ տիկիները պէտք չէ  
կրքը մարդու մը հետ խօսելու համար կենան փողոցին

մէջ : Բայց եթէ անոնք տարիքոտ ըլլան , կրնայ ներուիլ : Պարահանդէսին մէջ պարոն մը պէտք չէ բան մը հրամարնէ իր պարուհիին եթէ նշանածը չէ : Ուրիշ ինչիւր եթէ կը թողարուի իրեն ընկերացողին կողմէն : Մանկամարդ աղջիկ մը պէտք չէ երբեք դուրս ելլէ առանձին : Իր ծնողքը չըլլալու պարագային , վստահելի մէկը կ'ընկերանայ անոր : Փողոցին մէջ , դէմ դիմաց քալողները պէտք է միշտ իրարու աջ կողմէն անցնին : Երբ մէկը կը քալէ տամին քովէն , պէտք է միշտ շօսելի կողմէն ճամբայ առնէ : Պէտք չէ ամչնալ և կարմրիլ իր ծնողքներէն , անոնց ձախաւեր մէկ ընթացքին համար , ընկերութեան մէջ : Զրօսարաններու մէջ , սովորութիւն է միշտ որ տամերը պահեն իրենց գլխարկը , պարելու ատեն : Բայց քաւալիէի մը համար գլխարկը դրած երեւնալը անախորժ տպաւորութիւն կը գործէ , հետեւաբար նախընտրելի պիտի ըլլար բաց գլուխ պարել : Տամերը ճաշելու ատեն միայն ձեռնոցներին կը հանեն և նստած ատեննին . բան մը գրելու կամ երգում ընելու համար պէտք է հանել աջ ձեռքի ձեռնոցը : Այցելութեան մէջ մէկու մը ձեռքը սեղմելու համար , պարոններ պէտք է աջ ձեռքերուն ձեռնոցը հանեն : (Այդ է պատճառը որ շրջագայութեան մէջ աջ ձեռքի ձեռնոցը չեն կրեր) : Իսկ երկու ձեռքերն ալ ձեռնոց կրած ատեն , յանկարծ ձեռք թօթուելու պարագագային , ձեռնոց չի հանել ներելի է : Պէտք է շատ լաւ ճանչնալ տամ մը , անոր հետ կարենալ շրջագայիլ և խօսելու համար պարի մը ամբողջ տեւողութեանը միջոցին : Անքաղաքավար պիտի ըլլար բան մը հարցնել տամի մը , որ շատ քիչ կը ճանչնայ հարցնողը : Մանկամարդ օրիորդներ պարտին միշտ ընկերացած ըլլալ իրենց ծնողքներուն , որոնց չըլլալու պարագային , վստահելի անձ մը , եղբայր մը , քոյր մը կրնայ առաջնորդել ընտանեկան հաւաքոյթի մը :

# ԶԳԵՍՏԱԻՈՐՈՒՄ

Ե Ի

## ՎԱՅԵԼՉԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Պարր մարդկային ընկերութեան մեջ . — Երեկոյքներու եւ պարահանդէսներու մեկնելու ձեւ . — Ներկայացուելու , առաջնորդուելու , նրաւիբելու , պաբելու կերպերը եւ ողջուցելու ձեւերը :

Զգեստաւորում . — Պարոնայք պարտին սեւ հագուստով ներկայանալ պարահանդէսին մէջ . այսինքն պաշտօնական հագուստով , ֆրաք , սթամպուելին , սմօքինի , ատոնք պատշաճեցնելով իրենց տարիքին և դիրքին , պարահանդէսին համեմատ : Կօշիկները սեւ և փայլուն պէտք է ըլլան . գլխարկը ծաղափեղոյր (claque) , ձերմակ փողկաղ և ձեռնոց , այս վերջինը ինամտով դրուած : Պէտք չէ երբեք ձեռնոցը հանել երեկոյթին ամբողջ տեւողութեանը կամ պարին ժամանակ : Ֆես կամ ուրիշ ձեւ սեւ գլխարկներ նուազ կը պատշաճին և պէտք է յանձնուին հանդերձարան :

Ներկայացուելու եւ առաջնորդուելու կերպը . — Երեկոյթի գացող մը քաղաքավարօրէն պարտի ներկայացնել իր մեծարանքները տանտիրոջ և տիկինին , կամ

երեկոյթը կաղմակերպողներուն և շնորհաւորել իրենց առնախմբութիւնը: Հրաւիրեալները ընդունելութեան կամ պարի սրահը մտնելով պարտին ողջունել աջ ու ձախ, բոլոր ներկաները, գլխու թեթեւ խոնարհումով մը:

Պարի հրաւերը եւ ինչ որ պէտք է ընել պարէն առաջ. — Իւրաքանչիւր պարէ առաջ, քավալիէն իրաւունք ունի իր պարուհիին ընտրութիւնը ընելու, նուազին կոչէն առաջ: Քավալիէն կ'ողջունէ տամբ ոտքերը իրարու մօտ կրունկները միացած, ոտքերու ծայրերը բաց կեցուածքով, աջ ձեռքով ծալափեղոյրը կուրծքին վրայ բռնած, բայց եթէ գլխարկ չունի ձեռքը, երկու բազուկները վար կախած դէպ առաջ և բոլորածեւ, թեթեւաշարժ և համարձակ, շնորհալիօրէն գլուխը խոնարհեցնելով այն տամբն առջեւ զօր կ'ուզէ հրաւիրել, ըսելով անոր «Տիկիւնը կամ օրիորդը կը հաճի՞ր ինձ առաջին վալսին (կամ այնինչ պարին) պատիւը շնորհել»: «Madame (ou mademoiselle) veut-elle me faire l'honneur de m'accorder la première valse?, etc.»: Եթէ տամբ կ'ընդունի այս հրաւերը, քավալիէն կը ներկայացնէ աջ ձեռքը, յետոյ թեւը և զոյգ կը շրջագային՝ սպասելով նուազին սկզբնաւորութեանը: Իր պարուհին գրկելէ առաջ քավալիէն կ'ողջունէ զայն, յետոյ կ'սկսին պարել:

Կարեւոր յանձնարարութիւն մը. — Երբ քավալիէ մը պարի կը հրաւիրէ տամ մը, իր ընտրութիւնը պէտք է ընէ իր նստած տեղէն և ուղղուի դէպ անոր ուղիղ գնացքով և առանց վարանման: Երբ տամբ արդէն հրաւիրուած է, պէտք է զայն ողջունել ու կէս մը դառնալով իր տեղը գալ ուղղակի, առանց անոր շուրջը գլտնուողներէն ուրիշ մը փնտռելու, որպէսզի առաջին հրաւիրեալը գիտնայ քավալիէին միայն իրեն համար եկած ըլլալը: Երկրորդ ընտրութիւնը քավալիէն պէտք է ընէ

դարձեալ իր տեղէն: Առաջին ձեւը կը կրկնէ իր տեղը դառնալով, վերջապէս երրորդէ մը ընդունուած ըլլալով անշուշտ, գլխարկը աջէն ձախ ձեռքը առնելով, թեւը կուտայ տամբն, սրահին շրջանը ընելով: Անպատշաճ է միշտ միեւնոյն տամբ պարի հրաւիրել: Ծալափեղոյր գլխարկը դեր մը ունի կատարելիք և կը ձգուի պարուհիին աթոռին վրայ, որոշելու համար անոր տեղը, հոն վերադարձած պարագային աթոռը գրաւուած չըլլալու համար:

Պարի ժամանակ. — Քավալիէն աջ բազուկով կը գրկէ տամբ մէջքէն, իսկ ձախ ձեռքով տամբն աջ ձեռքը բռնելով երկուքն ալ դէպի աջ դիրքի մը մէջ իրարու աջ ուսերուն վրայէն կը նային գլուխին շիտակ բռնելով: Ուշադրութիւն պէտք է ընել տամբ չենթարկելու համար գլխի պոստի, հեւ ի հեւ դարձուածքներով:

Պարէն ետք. — Քավալիէն պէտք է թողու իր տամբ պարէն ետքը, գլխու պոստի պատճառաւ, կենալու պահուն, այլ զայն պէտք է բռնէ չկորսնցնելու համար հաւասարակշուրութիւնը: Պէտք է շնորհակալ ըլլալ անոր քաղաքավարօրէն, իր տեղը առաջնորդել, ողջունել դէպի ետ քայլով մը, և յետոյ ետ քաշուիլ:

Զանազան գիտելիքներ պարի մեջ. — Պէտք է երբեք յաջորդաբար միեւնոյն տամբ երկու անգամ պարի հրաւիրել: Ամուսնացեալ կնոջ մը հետ ներքի է սալօնին մէջ շրջաններ բոլորել և պիւճի առաջնորդել: Տամ մը առանց լուրջ պատճառի չի կրնար քավալիէի մը պար մը մերժել, ատիկա ոչ միայն վայելուչ է, այլ անիրաւում մըն է, որուն լուրջ պատճառը պարտաւորուած է յայտնել: Պարի ո և է մասնակցող քավալիէ մը պէտք է քիչ շատ վարժ ըլլայ և կարող՝ տամ մը արիւթէ ընելու: Պարող մը անհրաժեշտ կերպով պէտք է գիտնայ վալս և

բուքա, գատրիլ և լանսիէ, որոնք կարեւոր պարեր են : Քավալիէները պէտք է օգնեն իրենց տամերուն մուշտակը և վերարկուն հագնելու ատեն, և զգուշանան չի կոխել շրջագլխատներուն ծայրին վրայ : Այրերը պէտք չէ թե-  
րանան վերցնելու առարկայ մը զոր տամը գետին ձգած ըլլայ : Տանտիրուհին պարտականութիւնն է անխտիր պարի հրաւիրել ներկայ տամերը :

Պարաննէր, ամէն բան վարդագոյն չէ ձեզի համար պարահանդէսին մէջ : Երբ ձեզի ստաջարկուած է պարի հրաւիրել հիանալի պարող սիրուն կին մը, դուք պէտք է վայելչօրէն խոնարհիք անոր առջև և ձեր անկաժը մանր ընէք ամէնէն ներդաշնակ ձայնով : Շատ լաւ պարող օրիորդի մը, տիկինի մը կամ մտաուար անձի մը հետ է որ կրնայ փոխանակուել քանի մը խօսք : Պատշաճութիւնը կը հարկադրէ տամը իր տեղը դարձնել՝ զայն ողջունելէ ետքը : Քավալիէ մը պարաքը կատարած կ'ըլլայ եթէ նախ պարի հրաւիրէ տանտիրուհին (եթէ ան կը պարէ) և յետոյ ուրիշները : Տան տէրը և իր սղաքները զէթ անդամ մը պէտք է պարի հրաւիրեն բոլոր տամերը :

Օրիորդ մը կ'ընկերանայ իր հօրը, կամ տարիքոտ անձի մը և կամ մտերիմ բարեկամի մը պարահանդէս երթալու համար : Օրիորդը երեկոյթի սրահէն ներս կը մտնէ համեստ երեկոյթով մը, այդ պարադայնն բնական է որ կը շառագունի դէմքը, և իր անկեղծ նայուածքը կարծես սարսափով կը պարացնէ ներկաներուն վրայ : Ան նախ կը ներկայացուի տան տիրուհին, յետոյ կարգաբարեկամներու, և այդ արարողութիւնը կը կատարուի ուրախութեան և շնորհակալութեան արտայայտութիւններու մէջ : Օրիորդ մը իրեն պէտք է ընկեր ունենայ իր մայրը, չըլլալու պարագային՝ անդրանիկ քոյր մը,

հօրաքոյր մը, մօրաքոյր մը, պարահանդէսին մէջ պարելէն անմիջապէս ետքը դարձեալ գալով անոր միանալու համար : Մեր օրերուն պարուհի մը իր վրայ կը կրէ շատ մը դարդեղէններ : Ատենէ մը ի վեր պարահանդէսի ծաղկեկոտնջիլ արժէքը ինկած է : Անոր տեղը բռնած է աւելի օգտակար, թարմ ծաղկեպսակ մը, կողին, կուրծքին և մագերուն վրայ : Հովահարը կը մնայ միշտ, որովհետեւ ոչ միայն օգտակար այլ քնքոյշ առարկայ մըն է տամի մը ձեռքերուն մէջ, որ գիտէ վարժօրէն գործածել զայն :

Տամի մը ինչ դժկամակութիւնները և յիմարական ծիծաղները չեն ծածկուիր փետուրէ կամ տանթէլէ այդ փոքրիկ առարկային ետեւ : Տամը թաշկինակը ձեռքը կրած ատեն, պէտք է ձալուած ըլլայ, երբ ձեռքը չէ, զայն պէտք է դնել կողին վրայի փոքրիկ զրպանին մէջ : Անվայել է պարելու ատեն իր քավալիէին հետ խնդալ կամ խօսիլ հովահարին ետեւէն : Եթէ պարողը ու է անյաջողութիւն ունենայ մամին հազուատին կամ ոտքին վրայ կոխելով, պէտք է քաղաքավարօրէն ներում խնդրէ : Մանկամարդ անձինք և դեռատի օրիորդներ չեն յաճախեր խողի սրահներ, առաջինները միայն կրնան մտնել դիտելու նպատակով : Չանագան երկիրներու մէջ ինչպէս Չուիցերիա, Գերմանիա, պարահանդէս կը յաճախեն մանաւանդ պատանիներ և մանկամարդ աղջիկներ : Ամուսնացեալ կիներ քիչ կը պարեն հոն : Փրանսայի մէջ ընդհակառակն է . հոն տամնուկ տարեկաններ տղայ կը նկատուին : Այդ տարիքը ունեցողներ իրենց բարեկամուհիները կը հրաւիրեն ցերեկոյթներու և նախընթացներու : Այդ տարիքէն յետոյ անոնք կ'ընկերանան իրենց մօրը՝ այցելութիւններու ատեն : Մէկ խօսքով ամէն մարդ զանոնք ակնածութեամբ կը դիտէ : Պարահանդէսի

կամ երեկոյթի մը հրաւերը «տէր և տիկին» անունով կը կատարուի: Որքեւայրի կնոջ մըն ալ նոյն բանաձեւով պէտք է հրաւերը ուղղուի: Այդ հրաւերին կը պատասխանեն քառթով մը ուր հրաւիրեալներ կը յայտնեն իրենց ներկայ ըլլալուն կամ չըլլալուն պատճառները, չմտնալով շնորհակալ ըլլալ և ներողամտութիւն խնդրել: Ընտանեկան երեկոյթի մը մէջ տան տիրուհիին մեծ հաճոյք մըն է երբ հրաւիրեալ մը իր հետ կը տանի լաւ պարողներ: Անպատշաճութիւն չկայ որ տանտիրուհին հրաւեր ընէ այն անձին կամ ընտանիքին որ իբրև լաւ պարող ճանչցուած է: Նշանաւոր պարող մը այս հրաւերով կըրնայ իր կնոջը հետ ներկայ ըլլալ երեկոյթին: Պէտք չէ երբեք ներկայացնել փոխադարձաբար երկու անձեր որոնց ծանօթացուիլը պատշաճ չի նկատուիր զանազան պատճառներով: Անծանօթ մը որ բարեկամի մը կողմէ երեկոյթի մը տարուած է, յետոյ շնորհակալութեան այցելութիւն մը կը պարտի տանտիրոջը:

Զբօսարաններու և պաշտօնական պարահանդէսներու մէջ ընդհանրապէս ծանօթի մը և միեւնոյն ներկայացուած տամբրուն հետ կարելի է պարել, մինչդեռ մասնաւոր երեկոյթի սրահի մը մէջ տանտիրուհիին նախատինք պիտի ըլլար այսպէս պահանջել, հրաւիրեալներուն պատուաւորութեանը մասին կասկածներ արթնցնելով: Ըսենք ուրեմն թէ լաւագոյն է միշտ ներկայացուելով պարել, եթէ կարելի է: Մանկամարդ օրիորդ մը կրնայ ներկայացնել միմիայն իր եղբայրները կամ քոյրերը, պայմանաւոր իրմէ փոքր ըլլան. կրնայ նաև ներկայացնել իր մայրը իր բարեկամուհիներէն տարիքոտ եզոզի մը: Հայր մը իր բազուկը կուտայ իր աղջկան՝ պարահանդէս մը մտնելու համար. մայր մը իր բազուկը կուտայ տղուն, տիկին մը պարահանդէս կ'երթայ միմիայն իր ամուսնոյն կամ

շատ տարիքոտ կնոջ մը հետ: Երկու մանկամարդ օրիորդներ մտերմական երեկոյթի մը կրնան առանձին երթալ, միայն թէ պարահանդէսը սկսելէն առաջ, որպէսզի չի հասկցուի իրենց առանձին գալը:

Այրերը և տամբրը իրենց յատուկ հանդերձարաններուն մէջ զգեստնին ձգելէ ետքը կը միանան, թե թեւի սրահ մտնելով: Տանտէրը և տիկինը ընդունելութեան մեծ գրան առջև կ'ընդունին հետզհետէ հասնող հրաւիրեալները որոնք կը փութան ներկայացնել իրենց մեծաբանքները և յարգանքները: Տանտիրուհին պէտք չէ պարէ մինչև որ հրաւիրեալ տամբրը գէթ անգամ մը պարելու հրաւիրուած չըլլան: Անկամէ եղած տամբի մը հետ մոռնալով պարել, երթալ ուրիշ մը անկամէ ընել խիստ վիրաւորիչ կոշտութիւն մըն է: Փոխադարձաբար նաև տամ մը պէտք չէ մոռնայ քավալիէի մը հրաւերը և ուրիշի մը երթայ խօսք տալ. ասիկա անարգանք մըն է առաջին քավալիէին: Քավալիէն պէտք է պարելու ատեն ունենայ ուղիղ ձև մը, պարզ և առանց ծեք-ծեքումի և պարտի տամբին հանդէպ հոգածու ըլլալ: Տամբ պարտի համեստ և վայելուչ ըլլալ և ժպտիլ այնպիսի ձևով մը որ քաղաքավարութեան նշան մը կը նկատուի: Բարձրագոյ խնդուքը լաւ ընկերութիւններու մէջ անախորժ տպաւորութիւն կը գործէ: Պարահանդէս կամ պարանցիկ երեկոյթներ վախով կը սկսին և կը վերջանան քօթիլեծով, կալօբով, գօտորիով: Երեկոյթը վերջանալուն, բոլոր հրաւիրեալները պարտին շնորհակալ ըլլալ և ողջունել տանտէրերը կամ երեկոյթը կազմակերպողները:

## ՓՈՔՐԻԿ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Երեկոթներու և պարահանդէսներու մէջ անպատշաճ է որ երկու զոյգեր դէմ առ դէմ ըլլան ամէն անգամ գատրիկներու մէջ և չորս զոյգեր լանտիէներու ատեն միշտ միտոխն պարեն: Այս փոքրիկ կուսակցութիւնները դէշ ճաշակ մը կը ներկայացնեն, մանաւանդ մասնաւոր պարահանդէսներու մէջ անկատար կրթութիւն մը ցոյց կուտան: Ընդհակառակը կը յանձնարարենք որ պարողներ միշտ պարեն փոփոխակի, պարեն ամէնուն հետ: Սակայն բացառութիւն կը կազմեն հասարակաց պարահանդէսները, ուր վճարուած տոմսով կը մտնեն: Հոն ամէն բան ներելի է, հոն կարելի է ուզուած կերպով շարժիլ, առանց սակայն մոռնալու որ կարելի է պարել միայն այն անձերուն հետ որոնք այդ պարահանդէսին մէջ ծանօթացուած են:

## ՍԻՐԱՄՈՒՈՒԹԵԱՄԲ ՊԱՐՈՂՆԵՐ

Ե Ի

### ՊԱՐԵԼ ԶԳԻՏՅՈՂ ՊԱՐՈՂՆԵՐ

Պարել չգիտցող երիտասարդներու և առանց պարի դաս աննելու պարել գիտնալ յաւակնողներու կողմէ գիտողութիւններ եղած ըլլալով, ուրախ ենք պատասխանելու մեզ եղած հարցումներուն, որոնք հետեւեալներն են: Առանց ուսուցիչի կարելի՞ է պարել սովբիլ, կարելի՞ է լաւ պարող մը ըլլալ, զգեստաւորում և վայելչագիտութիւն անհրաժեշտ են: Ո՛չ, սիրելի ընթերցողներ և ապագայ պարողներ: Տառապէս անկարելի է պարել սովբիլ, ներկայացուելու կերպերը գիտնալ ևլն., առանց լաւ ուսուցիչ մը ունենալու, որ կ'ուղղէ այն սխալները որոնք միայն ուսուցիչին աչքին կը զարնեն, ինչպէս պարի, նոյնպէս պարին ձեւաբանութեան մէջ: Նայեցէք այն երիտասարդներուն որոնք սովորամոլութեամբ կը պարեն և զխտեցէք նաև զանոնք որոնք հետեւած են պարի դասընթացներու: Սովորամոլութեամբ և կամ ինքնակուշ պարողները ողբալի ձեւով մը կը մտնեն սրահէն ներս և կը պարեն: Պարի ձեւաբանութիւններու, տանտէրերու և պարողներու ընծայուելիք ողջոյններուն մէջ անոնք չեն կրնար հետեւիլ այն կանոններուն զորս ուսուցիչները միայն կրնան սովբեցնել: Նաև ուսուցիչ-

ներն են որ կը սովորեցնեն շնորհալիօրէն բարեւելու կերպը եւն: Հետեւաբար կրնանք անվախ կերպով ըսել թէ լաւ ուսուցիչի մը դասաւանդութեամբ ութը օրուան մէջ կարելի է քանի մը պար լաւ կերպով սովորիլ, մինչդեռ երկու տարիէն պիտի սովորէին ասոնք պարանանդէաներ յաճախելով: Բնաւ պարել չգիտցող երիտասարդները անմիջապէս կը ճանչցուին, երբ անոնք սրահէ մը ներս կը մտնեն, գիւրաւ կը հասկցուի անոնց անկատար վարժութիւնը: Այդ թերուաները չեն գիտեր լաւ քաղել կամ գէթ վարանող կամ անապտո՞ղ քալուածք մը ունին, ինչպէս նաև կապկպուած և երկչոտ դէմք մը, մէկ բառով չփոթանար վիճակ մը ունին:

Երբ պարել գիտեն շնորհալիօրէն, կը հրաւիրեն պարուհի մը, գիւրաւ կը գտնեն խօսակցութեան նիւթերնին: Լաւ պարող մը միշտ զուարթ և գոհ է և իր վրայ թերութիւն մը չի ցուցներ: Ան պէտք է տեղեակ ըլլայ տիրող բարքերուն և սովորութիւններուն, գիտնայ նորաձեւութիւնները և պարի նորութիւնները, որով կրնայ գիտակցաբար խօսակցիլ: Ըսելիք մը չունինք այն յարգելի սեռին որ պարասրահներու զարդը կը կազմէ. մենք անոնց հանդէպ յարգանք միայն կը տածենք և անոնց գիտողութիւն չենք ըներ: Կ'ուզենք սակայն ըսել թէ կիները միշտ գեղանի կ'երեւան երբ աղէկ պարել գիտեն: Լաւ պարուհիները և պարողները միշտ կատարեալ, ճիշդ և անսխեւեթ շարժուձեւեր ունին: Անոնք իրենց շարժումներուն, մարմնի թեքումներուն և խօսքերուն մէջ համարձակ են. անոնք կը նմանին այն մեծ արթիւթներուն, որոնք թատրոնի մը բեմին վրայ իրենց տունը եղածի պէս են:

Պարանանդէօի մը մէջ լաւ պարող մըն ալ նոյնպէս իր տունը եղածի պէս է: Բայց կը կրկնենք, ըլլայ

լաւ պարող մը: Կատարեալ պարողները և պարուհիները միշտ կը վնասուին և հրաւերներ կ'ընդունին պարոններու և տիկիներու կողմէ՝ պարանանդէաներու համար, որով անոնք երբեք չեն ձանձրանար: Պարը երիտասարդներու համար աշխարհիկ պարանանդէաներու մուտքի քանալին է:

## ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է

### ԲԱԶՈՒԿԸ ՏԱՄԻՆ ԸՆԾԱՅԵԼ ՊԱՐԻ ՀԱՍԱՐ

Պատասխանելով այն հարցումին թէ՛ քավալիէն ա՛յլ թէ՛ ձախ թեւը պէտք է տայ տամին, կրնանք ըսել համարձակարար թէ՛ ալ բազուկն է որ կը արուի տամերուն պարի համար: Թէ՛ ինչո՛ւ: Որովհետեւ բաւական կոշտ պիտի ըլլար ձախ բազուկը տալով հրաւիրել տամ մը պարի, որուն միջոցին քավալիէն կ'ուղէ խօսակցիլ և կ'ուղէ ցոյց տալ իր քաղաքավարական մեծարանքները:

Խոնարհութիւն ընելու ձեւին մէջ ալ ձախ բազուկը տալ կոշտ ու ձախողակ պիտի ըլլար: Քավալիէ մը տամին ալ թեւը տալով շրջան կ'ընէ սրահին մէջ, լաւ ուղղութեամբ մը: Չախ թեւը տալով սխալ ուղղութեան մէջ և սովորութեան հակառակ պիտի գտնուէր: Պարին մէջ տամին ալ կողմը կենալը շատ հին և լաւ սովորութիւն մըն է, որովհետեւ տամը ալ կողմը գտնուելով քավալիէին, աւելի լաւ դիրք կ'ունենայ իր արդուզարդով գմայեցնելու դիտողները, մինչդեռ հակառակը ընելով պիտի ծածկէր իր փայլը: Դիտեցէք նաև գատրիլի մէջ որ տամը միշտ քավալիէին ալ կողմը կը կենայ: Պիտի աւելցնենք նաև որ հովանարը ալ ձեռքը բռնելու վարժութիւնը՝ տամին քավալիէին ալ կողմը կենալուն պատճառներէն մին եղած է: Մինչդեռ ձախ ձեռքով հովանարի գործածութիւնը տձև պիտի ըլլար: Սալօնի մէջ

պարահանդէսէն առաջ կամ պարի միջոցին տամերը պէտք է լաւ դիտնան իրենց հովանարները գործածել: Շրջազգեստը կը բռնուի ալ ձեռքով. այն ատեն ուրեմն ազնիւ պարոններ, տուէք միշտ ձեր ալ թեւը ձեր պարուհիին, ինչ որ արդէն պայման է մեր օրերու սովորութիւններու մէջ: Այրը կնոջը կուտայ իր ձախ բազուկը, անոր ալ կողմը անցնելով և թե՛ թե՛ի կը մտնեն պտոյտներու միջոցին. իսկ ալ թեւը կուտայ տամին պարին միջոցին: Թուենք հոս թէ՛ ինչո՛ւ այսպէս պէտք է ընել. Ա. Քավալիէն որ կը գրկէ իր պարուհին ալ ձեռքով, եթէ չի շրջագայի անոր հետ ալ բազուկով, այն ատեն պիտի պարտաւորուի պարի սկսելու ատեն, գլխի պտոյտներու դէմ մաքսուելու համար միշտ տամը ձախէ ալ փոխադրել, կամ անցնիլ անոր առջև, պարելէ յետոյ շրջագայիլ սկսելու համար: Եթէ պարուհին ոտք կարթելու կամ հրմշտուքի հետեւանքով սահելու, իյնալու վտանգին մէջ է, անվիճելի է որ քավալիէն պէտք է ուժով մը ալ ձեռքով հաստատուն բռնէ զայն, քան թէ ձախով: Պէտք է մտածել նաև թէ՛ ուէ՛ վար ինկած առարկայ մը կրնայ դիւրաւ վերցուիլ ալ ձեռքով քան թէ ձախ ձեռքով, եթէ պարուհին բան մը վար ձգէ, պէտք է տամը վայրկեան մը թողուլ և առարկան վերցնելով, զայն ալ ձեռքով վայելչօրէն ներկայացնել գլխու թեթև խոնարհութիւնով մը:

Պէտք է գիտնալ թէ՛ ինչպէս թեւ տալու է պարուհիի մը, հրաւիրելու համար զայն պարի, ըլլայ գատրիլի կամ ուրիշ պարերու մէջ, իրենց տարբեր ձևերու պահուն: Քավալիէ մը լաւ ձաչակի տէր ըլլալու համար, պէտք է ձեռքը ներկայացնէ՝ մասնները իրարմէ քիչ մը բացուած ձեւով, ափը դէպի երկինք, բազուկը կէս մը երկարած և գլխու թեթև խոնարհումով մը: Տամը

իր ռեւը կը ներկայացնէ քավալիէին նոյն պայմաններուն մէջ, բայց ալը դարձուցած դէպի դեալին, քավալիէն տամին ձեռքը թեթեալէս սեղմելով, բութամատը տամին ձեռքին վրայ. այսպէս տամին չորս մատները միայն քավալիէին ձեռքին մէջ կը մնան, բութամատը ազատ և բաժնուած միւսներէն, քավալիէն տամին կուտայ, բազուկը կէս ծռած, և կը բռնէ տամին ձախ ձեռքը իր ուսին բարձրութեամբ, տանելով դէպի իր ժիլիէն վերի կոճակը: Քավալիէն տամը նստած տեղէն հրաւիրած ատեն դեմ առ դէմ գտնուելուն պատճառով աջ ձեռքը միշտ տամին ձախ ձեռքին կը հանդիպի:

## ՏԱՐԲԵՐ ՈՂՋՈՅՆՆԵՐ

### ՏԱՐԻՔԻ ԵՒ ԱՌԻԹԻ ՀԱՄԵՄԱՏ

Ողջոյնները երկու որոշ մասերու կը բաժնուին: Ողջուցելու կերպ. Ա. մարդոց, Բ. տամերու: Այս երկու տեսակները կը կրճուտին ուրիշներու խառնիճաղանձումով մը, անձերու և պատենութիւններու համեմատ: Պարի մէջ տամերը պարտին խոնարհութեան (révérence) ձեւը գործածել, շնորհալի և ձկուն, թեթեալէս գլուխը ծռած, սահեցնելով ոտք մը դէպի ետ, այսինքն մէկ ոտքը միւսին ետին դնելով, սրունքները խաչածեւուած և միւսին վրայ ծնրադրելով: յետոյ դէպի ետ շարժող սրունքին քով մօտեցնել առաջինը՝ ոտքի ծայրերը իրարմէ բաց ձեւով: Այս շարժումները բրած ատեն տամը իր շրջազգեստը կը վերցնէ մատներուն ծայրերովը թեթեալէս բռնած դէպ առաջ երկու կողմերէն: Իսկ Լանսիէի մէջ ռեվիտանսը դէպի աջ կ'ըլլայ. աջ ձեռքը երկարած և ձախը դէպի ետ, իսկ դէպի ձախ ռեվիտանսը բրած ատեն ձախ ձեռքը կ'երկարէ դէպ առաջ և աջը դէպի ետ: Մեծ ռեվիտանսները ընդհանրապէս դէպի ետ կ'ըլլան նուազին մէկ երկար չափովը (point d'orgue), տամը բռնած իր շրջազգեստը երկու ձեռքերով, զուգահեռաբար՝ փափկութեամբ:

Քավալիէները պարտին նոյնպէս ողջունել (saluer) շնորհալի ձեւով մը՝ բայց առանց սեթեւեթի: Քավալիէն ողջունելէ առաջ կը դիտէ այն անձը որուն կ'ուզուի ողջոյնը, յետոյ աչքերը կը խոնարհեցնէ, գլուխը կը ծռէ,

խոնարհելով կուրծքին, լանջապանակի վերի կոճակին նայելու ձեւով, միեւնոյն ժամանակ ուսերը կը ծռէ ողջոյնին տալու համար պերճ երեւոյթ մը. պէտք է յարգական և ուղիղ ըլլալ: Բոլոր ասոնք պէտք է ըլլան դանդաղօրէն և առանց շփոթութեան: Յարգանքը միշտ պէտք է պատշաճեցնել անձի և տարիքի: Ողջունելու պահուն քավարիէ մը միշտ դէպի աջ կամ ձախ քայլ մը կ'ընէ ոտքերը միացուցած, կրունկները իրարու մօտ, խկ ծայրերը իրարմէ բաց: Բազուկները պէտք է առանց կոշտութեան ազատ բռնել: Քավարիէն յարգանք կ'ողջունէ մեծ անձնաւորութիւն մը. սիրալիր կերպով բարեկամ մը. ընտանեւոր և համակրալից իրմէ վար մէկը. ուղիղ, պատուելու ձեւով՝ օտար մը. վերջապէս իր պարուհիին ուղղած ողջոյնը պէտք է ըլլայ երախտագիտական և յարգական:

Ողջունելու կերպը տարբերութիւններու համեմատ: Հինգ տարեկանին աղայ մը պէտք է ընէ սիրուն և ժպտուն ողջոյն մը. տասը տարեկանին շեշտել թէ յարգական է իր ողջոյնը. տասնընից տարեկանին՝ արտօյայտել ողջոյններուն նրբերանդները. քսան տարեկանին իր ողջոյնները պատշաճեցնել տարիքի, տեղի և անձնաւորութեան հանգամանքներու հետ, գիտակցելով ողջունելու բոլոր պարագաներուն. քսանէն յետոյ տարեկանին մարդ պարտիրաւական տեղեկակր ըլլալ ողջոյններուն, անոնց մէջ գնելով աշխարհային սովորութիւններու և նիստ ու կացի պատշաճութիւնները: Վերջապէս այդ տարիքէն ետքը մարդ կը գոհանայ իր յարմար դատած եղանակով ողջունելով իրմէ նուազ ձերերը: Փա՛նք ողջունելու պատեհութիւններուն: 1. Տուն մը մտած ատեն, 2. սրահի մը մէջ, 3. դասընթացքի մը մէջ, 4. դպրոցի մը մէջ 5. զբօսարանի մը մէջ, 6. հանրակառքի, երկաթուղիի,

շողենաւի մէջ, 7. ճամբուն մէջ, 8. տամի մը հետ խօսած ատեն, ներողութիւն խնդրած պահուն 9. սանդուխին վրայ մէկու մը հանդիպումի պահուն, և նրբանցքի մը մէջ, երկու անձեր եթէ անձանօթներ ըլլան խկ, պէտք է զիրար ողջունեն, 10. պարահանդէսի մէջ մէկը ներկայացնելու ատեն, 11. տամ մը պարի սկսելէ առաջ հրաւիրելու ատեն, 12. պարերը դադարելէ վերջ, 13. քավարիէն տամը իր տեղը վերադարձնելու ատեն, 14. իր մեծարանքները մէկու մը յայտնելու ատեն, 15. բարեկամի մը կողմէ մէկու մը ներկայացուելու ատեն, 16. գատորիներու և լանսիէներու մէջ, 17. բարեկամի մը հանդիպած ատեն, երբ ան ուրիշ անձերու հետ է շրջագայութեան կամ սրճարանի մէջ, նախ ծանօթը ողջունել, յետոյ անոր ընկերակիցները, 18. ողջոյնի ատեն պէտք է միշտ սիկառէթը շրթունքներէն վար առնել (սիկառէթը բերանը ողջունել անքաղաքավարութիւն է), 19. փողոցին մէջ ողջունելու համար տամերը թեթեւապէս կը խոնարհեցնեն զուլինին և պարոնայք գլխարկին կը հանեն (բացի ֆէսէ), աջ ձեռքով բռնելով գլխարկը և հեռացնելով բազուկը կողմակի և կիսաբոլոր, դէպի վեր բարձրացնելով այրերու, դէպի վար իջեցնելով կիներու դէմ, 20. պարոնները նաեւ կը խոնարհին երբ կ'ուզեն բարեկամական կամ յարգական ցոյց մը ընել, 21. միշտ պէտք է ողջունել մէկը որ ծանօթ է, ինչ որ սլ ըլլայ անոր հազուածքը, 22. պարահանդէսի մը կամ սրահի մը մէջ, տամը և պարոններ կը խոնարհին շնորհալիօրէն, ողջունելու համար զիրար, 23. երբ ուսուցիչ մը աշակերտին կուգայ խօսիլ, աշակերտը պէտք է ոտքի ելլէ ողջունելու համար, 24. եթէ բարեկամի մը հանդիպէ անձանօթներու ընկերացած, սպասեցէք որ առաջ ան բարեւէ ձեզի, 25. եթէ հանդիպէք առանձին եղող

ծանօթ տամի մը՝ մի ողջունէք. այդ պարագային սպասեցէք որ ինքը առաջնութիւն առնէ բարեւելուն մէջ. եթէ ան ընկերացած է անծանօթի մը՝ դարձեալ ինքն է որ առաջ կը բարեւէ, 26. Թատրոնին մէջ բարեկամներու հանդիպած ատեն բարեւը ձեռքի նշանով մը կը տրուի և այդ սլ միջնարարներու ատեն, երբ երկու ծանօթներ իրարմէ հեռու դիրքի մէջ են: Թատրոնին մէջ այրերու կամ կիներու բարեւներուն կը պատասխանեն գլխու շարժումով մը, առանց տեղէն ելլելով անհանգիստ ըլլալու, 27. տամի մը կամ մեծամեծ անձնաւորութեան մը հետ խօսելու համար պէտք է գլուխը բանալ զայն ողջունելով, մինչև խօսակցութեան աւարտումը գլխարկը ձեռքը բռնելով, մանաւանդ երբ մէկը խնդրանքի մը մէջ է, 28. երբ մէկը տամի մը կ'ընկերանայ՝ պէտք է դուռը անոր առջև բանայ. ետ քաշուի, ողջունելով և թող տալով որ անցնի ան, 29. գիւղերու մէջ սովորութիւն է ողջունել այն անձերը որոնք ճամբան իրարու կը հանդիպին, 30. լանսիէներու մէջ քաղաքիէն կ'ողջունէ նախ իր ձախի յետոյ աջի և էն ետքը դէմի տամը, 31. լանսիէն պար մըն է որուն մէջ ամենէն աւելի շատ ողջոյն և խոնարհութիւն ընելու պատահութիւններ կան: Լանսիէն պարող մը մեծ առիթ կ'ունենայ յարգանքի այդ նշանին ընտելանալու: Ստոնք Փրանսական բարքերու յատուկ ողջոյններ են: Հիմա որ մենք խօսեցանք Փրանսայի ողջոյնի ձևերուն վրայ, հետաքրքրաշարժ չպիտի՞ ըլլար զուգակշիռ մը ընել անոնց<sup>ը</sup> և Աննամական ողջոյնին միջև: Աննամի մէջ նշանաւոր անձ մը ողջունելու համար ձեռքերնին իրար միացուցած, մատներնին իրար կ'անցընեն և կը տանին գլուխնուն վրայ, մէջքերնին քիչ մը վար ծռելով: Երբ Աննամցի մը Մանտարիսի (չինացի պաշտօնատար) ներ-

կայութեանը կը գտնուի, բաւական հեռուէն ծունկի կուգայ, յետոյ իր ներկայացնել ուղած աղերսագիրը երկու ձեռքերովը գլխուն վրայ կը բարձրացնէ և այդպէս քաշքուտուելով կ'երթայ մինչև դատարան՝ բերնին մէջ խտի շիւղ մը ունենալով: Պաշտօնական այցելութիւններու միջոցին մեծ անձնաւորութիւն մը բարեւելու համար, Աննամցին գետնամած երկրպագութիւն կ'ընէ, և ոչ մէկ բան Աննամցիին համար այնչափ վիրաւորիչ է, որչափ զայն արգիլել սովորութեան համաձայն բարեւելէ:

Քավալիէին երեք գլխաւոր ողջոյններ Լանսիէի երրորդ ձեւին մեջ. — Առաջին ողջոյն. — Քավալիէն աջ ոտքը դէպի առաջ կը սահեցնէ դէպի աջ ծռելով, յետոյ ձախ կրունկը անոր կը մօտեցնէ ոտքին ծայրերը թիթեւապէս բացուած, գլուխը կը խոնարհեցնէ դէպի առաջ շնորհալի, ձկուն և ուղիղ ձևերու մէջ պահելով մարմինը:

Երկրորդ ողջոյն. — Նոյն շարժումները ձախ ոտքէն սկսելով:

Երրորդ ողջոյն. — Աջ ոտքը դէպի ետ կը սահեցնէ ձախ կրունկը աջին մօտեցնելով: Վերջին ողջոյնին համար պէտք է աւելի ծռիլ: Բոլոր գատրիլներու միջոցին և ներկայացուելու ատեն այս երեք ձևերը կը գործածուին:

Տամին երեք ողջոյններ, լանսիէի երրորդ ձեւին մեջ. — Առաջին ողջոյն. — Աջ ոտքը սահեցնել դէպի աջ, քիչ մը առաջ տանելով, ձախ ոտքին ծայրը քիչ մը ծռած և խաչած և աջին ետեւը դնել, աջ ոտքին վրայ ծռելով:

Երկրորդ ողջոյն. — Կրկնել սկսելով ձախ ոտքէն:

Երրորդ ողջոյն. — Աջ ոտքը դէպի ետ սահեցնել, սրունքը թիթեւապէս ծռած, ձախ սրունքը անկէ քիչ

ծուած, երկարած կը մնայ. տամը կ'ողջունէ քավալիէն երկա՛ր, յետոյ ոտքի կ'ելլէ մօտեցնելով ձախ ոտքը աջ ոտքին. այս վերջին շարժումները աւելի պէտք է շեշտուի: Տամը իր տեղին վրայ միշտ դէպի աջ կամ ձախ պէտք է մէկ ոտքը միւսին հետ խաչածեւէ: Քավալիէին և տամին համար ալ վերը ցոյց տրուածին ճիշդ նմանը պէտք է ըլլան անավանգօր, քուռաի, քարքի, սիւի, իւիի բոլոր ողջոյնները: Երբ մէկը սալօնի մը մէջ մէկու մը հետ շըրջագայութեան մէջ կը գտնուի և ծանօթ մը անոնց կը հանդիպի, բաւական է միայն թեթևապէս գլուխին ծուել, ողջունելու համար:

Պարահանդէսներու մէջ ողջունելու տարբեր կերպերը, էլիզէ Ծօռէն մինչև էլիզէ Մօնթմարթ բացատրելէ ետքը, կ'ուզենք քանի մը առողով ալ պարի հրաւիրելու կերպը ցոյց տալ:

Պարի դասընթացքի մը մէջ, ուսուցիչն է որ կը հրաւիրէ տամերը որպէս զի ընտրեն իրենց քավալիէները: Այս վերջինները կը ծուին և թեւերնին կուտան տամերուն: Հրաւիրելու համար սա ոճը կը գործածուի. «Տիկինը (կամ օրիորդը) կը հաճի՞ այս վալսը ինձի հետ պարելու պատիւը ընել»: Պարացուցակներու մէջ արձանագրուելու համար սա ոճը կը գործածուի. «Տիկինը կամ օրիորդը ինձ կը թոյլատրէ՞ (այս ինչ) պարին համար արձանագրուիլ իր տետրակին մէջ: Ըեզուսուելէ ետքը «տիկինը (կամ օրիորդը) կը հաճի՞ ընդունիլ բազուկս»: Պարանցիկ երեկոթիներու մէջ սովորութիւն է ըսել. «Օրիորդը կ'ուզէ՞ ընդունիլ (այնինչ) պարը»: Եթէ մէկը ուրիշ պարի մը համար ալ կ'ուզէ նոյն անձին հետ պարել, կը կրկնէ պարելու տտեն. «Օրիորդը կը թոյլատրէ՞ ինձի խնդրելու իրմէ այնինչ պարը»:

Տարբեր բանաձևեր. — Մտերիմ եւ արարողական

հրաւերներ. — Օրիորդը կ'ուզէ՞ ինձ շնորհել այս բալան. (Mademoiselle veut-elle m'accorder cette polka?): Օրիորդը կ'ուզէ՞ զիս պատուել այս գատրիով. (Mademoiselle veut-elle me faire l'honneur de ce quadrille?): Օրիորդը կ'ուզէ՞ զիս պատուել այս պարով. (Mademoiselle veut-elle m'honorer de cette danse?)

Բարեկամուհի քամի մը. — Տիկին Ն. կ'ուզէ՞ պատուել բազուկս առաջին պարին համար (Madame N. veut-elle honorer mon bras pour la première danse?). Օր. Հ. բարեկամութիւնը պիտի ընէ՞ր այս մազուրքան ինձ շնորհելու (Mademoiselle H. me ferait-elle l'amitié de m'accorder cette mazourka?). Օր. Ը կ'ուզէ՞ ինձ թոյլ տալ զինքը հրաւիրելու այս պարին (Mademoiselle veut-elle me permettre de l'inviter pour cette danse?).

Տանիրուհիի մը եւ անոր աղջիկներուն. — Տիկինը (կամ օրիորդը) պատիւը կ'ընէ՞ ինձ շնորհելու պար մը. Madame (ou mademoiselle) me fera-t-elle l'honneur de m'accorder une danse?).

Ամուսնացեալի մը. — Մատամ Գ. պիտի թոյլատրէ՞ իրմէ խնդրելու վալս մը (Madame X. me permettra-t-elle de lui demander une valse?).

Ատենով սովորութիւն էր որ քավալիէները՝ տամերը պարի հրաւիրելու համար անոնց ծնողքին հաւանութեանը կը դիմէին, թէև այդ սովորութիւնը վերցած է հիմա:

## ՊԱՐԻՆ ՄԷՋ

### ՊԱՐՏԱԿԱՆ ՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարոններու համար . — Պէտք չէ և երբեք սովորութիւն չէ որ քովալիէ մը պարի հրաւիրէ տիկին մը կամ օրիորդ մը, երբ ան ուրիշ քովալիէի մը թեւը կը գտնուի : Տամերուն հրաւերը պէտք է ըլլուի նստած ատեն կամ տեղերին՝ անոնց ոտքի կեցած պահուն : Ըլլա՛յ ընկերային, ըլլա՛յ ընտանեկան պարահանդէսներու մէջ, չափազանց անպատշաճ է ասոր հակառակ անկենցաղագիտական վարմունք մը՝ զոր շատեր կ'ունենան :

Տամերու համար . — Փափկանկատ տամ մը պէտք չէ մերժէ իրեն հաճոյ չթուող պարոն մը, միեւնոյն ատեն պարելով ուրիշ քովալիէի մը հետ : Տամ մը քովալիէի մը հետ պարած ատեն եթէ ուզէ դադարեցնել, պէտք է շնորհակալ ըլլայ քովալիէին :

## ՊԷՏՔ Է ՄԻԱՅՆ

### ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՊԱՐԵՆ

Պատասխանենք այս հարցումին : Պարը՝ մարմնական զբօսանք մը և զեղարուեստական ժամանց մը ըլլալով, անոր կրնայ մասնակցիլ ամէն մարդ : Ինչ նշանակութիւն ունի մազերուն, մօրուքին ճերմկած ըլլալը կամ սաթի սևութեամբ փայլիլը, երբ այդ ճերմակ թելերը կրողին սրտին մէջ կը վառի երիտասարդութեան տաք կրակը : Պարող անձ մը, բաւ է որ վարժ պարող մըն է, չպիտի կրնայ երբեք երաժշտութեան եզանակի պահուն հանդարտ կենալ և պիտի ուզէ իրեն անցեալի ձկուն շարժումները փորձել պահ մը այն մթնոլորտին մէջ, որ երիտասարդութեան վերջուշումներ մը կուտայ ենթակային : Սրան մը այն ատեն կ'ստանայ իր կատարեալ վեհութիւնը, երբ ամէն տարիքէ պարող դասակարգերուն երկայացուցիչներով կը փայլի : Անոնք ամէնքն ալ իրենց մասնաւոր հրապոյրը ունին և այս տեսակ կազմակերպուած պարահանդէսի մը մէջ կրնանք համոզուիլ թէ ծերերու կամ տղայոց ներկայութիւնը պարելուն մէջ երբեք անախորժ սպաւորութիւն մը չընեն և ո և է անպատշաճութիւն չի յարուցաներ :

Մեծ ու փոքր սրահներու մէջ կարելի է շատ վայելչօրէն պարել, բնականաբար, պայմանով որ, զոյգեր

իրար չբաղխելու չափ տեղ ունենան ու կարենան առանց շարժուձևերու խանգարում պատճառելու՝ դառնալ ու շրջապարել: Պարը իր օգտակարութիւնները չի կորսնցրներ երբեք տեղին հանգամանքէն, կը բաւէ որ պարի օրէնքները յարգուին: Պզտիկ սրահի մը մէջ, բոլոր ներկաները պէտք չունին պարի ելլելու միեւնոյն ժամանակ, այլ պէտք է յաջորդաբար սրահին առածին չափով զոյգեր ելլեն, յաճախ հանգիստներ տալով, քանի որ պէտք է նկատի առնուի թէ չի մասնակցողներ պիտի ուզեն պարել: Ամէնէն մեծ սրահներու մէջ անգամ վայելուչ չէ որ մէկը նուազին ամբողջ տեւողութեանը պարէ, հեւ ի հեւ դառնալով քրտինքներու մէջ և դարձնէ տամբ լայն տեղ մը գտած ըլլալուն համար: Աս չէ՞ պատճառը որ շատ անգամ տամբերու մերժումին կը հանդիպին պարողներ որոնք առանց ուշադրութեան առնելու այս պարագան, կ'երթան անկաժե(\*) ընել:

Քավալիէներ և տամբեր որոնք պարի կ'ելլեն, առանց զօրաւոր պատճառի պէտք չէ դադրին դառնալէ նուազին վերջանալէն առաջ: Մանաւանդ աններելի է որ միեւնոյն պարին մէջ քավալիէ մը մէկէ աւելի տամբեր պարի հրաւիրէ: Տամ մը շնորհակալ ըլլալով իր քավալիէին կրնայ խնդրել պարը բաւ համարել, եթէ քավալիէն գէշ կը պարէ, (հոս դիտել կուտանք քավալիէներուն թէ տամ մը պարի հրաւիրելու համար պէտք է իրենք վարժ ըլլան այդ պարին):

(\*) Անկաժե բառին տեղ հայերէսի մէջ կարելի է գործածել հրաւիրել բառը: Սակայն անկաժե կամ անկաժքման բառերը իբր արուեստական բառեր նուիրագործուած ըլլալով, կրնանք զանոնք պատշաճօրէն գործածել, ինչպէս անպատեհութիւն չենք գտներ քամ կամ քավալիէ ըսելուն մէջ:

Գէշ ճաշակ մը ցոյց կուտան այն պարոնները որոնք չափազանց փութկոտութիւն կը ցուցնեն հրաւէր ընելու մէջ:

Հրմեսուբի խնդիր. — Մեծ պարահանդէսներու մէջ, պարի ատեն զոյգերու խճողուած պարագային տեղի ունեցած բաղխումներու համար ամէն անգամ ներում խնդրել աւելորդ է. հետեւաբար երկու կողմի բաղխումներն ալ ներողամիտ աչքով կը դիտուին: Միայն թէ պարոնները պէտք է զգոյշ ըլլան կարելի եղածին չափ տեղի չտալու այդ պատահարներուն: Մինչդեռ ընտանեկան պարագաներու մէջ անքաղաքավարութիւն պիտի ըլլար ներում չի խնդրել:

Ներկայացուելու կերպերը. — Ահա այն սովորական բանաձևերը զոր պարոն մը իր հետ տարած բարեկամը տանտիրոջ մը, բուֆէսէօսի մը ներկայացնելու համար կը գործածէ, անոնց տունը պարահանդէսի գացած պահուն. «Թոյլ տուէք ինձ, պարոն, որ ձեզ ներկայացնեմ պարոն Բ. մին իմ լուսագոյն բարեկամներէս». փոխադարձ պէտք է պատասխանել անոր սապէս. «Պարոն, շատ ուրախ եմ ձեր կողմէ ներկայացուած բարեկամը ճանչնալու պատիւը ունենալուս համար»: Տանտէրերը կամ ուսուցիչները պարող մը պարուհիի մը կը ներկայացնեն հետեւեալ կերպով. «Տիկինը (կամ օրիորդը) կը հաճի ինձ թոյլ տալ ձեզ ներկայացնելու տիկին Բ. ը, որ ձեզմէ կը խնդրէ առաջին պարը»:

Պարի ուսուցիչներու ներկայացնելու կերպը. — Երբ հայր մը պարի դասընթացքի հետեւող իր աղջկանը դասաւանդութեան ներկայ ըլլալ կ'ուզէ, տեսնելու համար անոր յաջողութիւնները, աղջկան մայրը իր ամուսինը բուֆէսէօսին կը ներկայացնէ սա բանաձևով. «Պարոն ուսուցիչ, ձեզ կը ներկայացնեմ պարոն Զ.՝ ամուսինս»:

ուսուցիչը պարտի պատասխանել . «Պարոն Զ. , շատ ուրախ եմ ձեզ ճանչնալուս , կը շնորհաւորեմ ձեր զաւկին ձիրքերը» : Հայրը պէտք է պատասխանէ . «Ձեր լաւ դասերուն շնորհիւ» :

Հիւր ընդունող թիկինի մը ներկայացուելու կեպը . — Բարեկամ մը , ներկայացնելով իր բարեկամներէն մին տանտիրուհիին , կ'ըսէ . «Տիկին , կը ներկայացնեմ ձեզ պարոն Ք . իմ լաւ բարեկամներէս մին» : Տանտիրուհին կը պատասխանէ . «Ուրախ եմ , պարոն , ձեզ ճանչնալուս և կը խնդրեմ որ հոս ձեր տունը նկատէք» : Երիտասարդը կը պատասխանէ . «Տիկին , ուրախ եղայ ներկայացուելուս և շնորհակալ եմ ձեր լաւ հիւրընկալութեանը համար» :

Ո՞վ պէտք է ներկայացնել նախ . — Երրորդ մը երկու ուրիշ անձեր ներկայացուցած ատեն , անոնցմէ նախ երիտասարդն է որ տարեցին կը ներկայացնէ , նոյնպէս առաջ պարոններն են որոնք կը ներկայացուին տիկիններուն : Ներկայացնելէ ետքը նախ տարեց անձն է որ ձեռք կ'երկարէ , եթէ բազմայ որ իրենց բարեկամութիւնը տեւական ըլլայ : Նոյնպէս նախ տամերն են որ ձեռք կ'երկարեն պարոններուն :

Իր տունին մէջ երեկոյթ տուող ասնիւրոջ մը պարտաւարութիւնները . — Կանխաւ երեկոյթի հրաւերները պէտք է ուղղուած ըլլան , նուազախումբը ընտրուած , պարացուցակները պատրաստուած , պիւճեի կամ ընթերթի սեղանը յարգարուած , հանդերձարանը կարգադրուած , կարուհի մը և ծառաներ յանձնարարուած : Տանտիրուհին պարտաւոր է , նաև կառք զրկել արուեստագէտները տուն փոխադրելու համար : Պէտք է ծաղիկներ պատրաստուին տամերուն իրր զարդ տրուելու համար : Հրաւիրեալներ տանտէրերուն կողմէ կ'ընդունուին և պարահանդէսը կ'սկսի : Տանտէրը կը սահմանէ պարահանդէսը բա-

նալու և վերջացնելու ժամը : Տանտիրուհին կուտայ պարի սկզբնաւորութեան առաջնութիւնը ներկայ ամէնէն նշանաւոր անձնաւորութեան : Քավալիէի մը վայելուչ չէ որ իրեն ընկերացող տամին հետ շարունակ պարէ : Տանտէր մը այն ատեն կը պարէ իր կնոջ հետ , երբ միւս հիւրերը պարել տալու համար իր վրայ ինկող ամէն պարտականութիւն լրացուցած է :

Իր աղջիկներուն հետ պարահանդէսի գացող հայր մը անոնց հետ պէտք է պարէ՞ թէ ոչ . — Այո՛ , եթէ անոնցմէ մին հրաւիրուած չէ . մանկամարդ աղջիկ մը պէտք չէ պարահանդէսին մէջ լքուած մնայ :

## ԴԱՍԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՒՆ

## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՉԱՓԵՐԸ

Վալսին և Մազուրքային երաժշտական չափն է՝ երեք նուառ կամ վեց նոտ : Առաջինը արագ և վերջինը նուազին դանդաղ չափովը :

Բուքարին՝ երկու նուառ կամ չորս նոտ , իւրաքանչիւր չափին մէջ : Սքոթիչինը՝ երկու պլանե կամ չորս նուառ կամ ութը նոտ , իւրաքանչիւն չափին մէջ : Իսկ Քատրիլին և Լանսիէինը՝ չորս չորրորդ :

## ՎԱՍՍԵՑԷՔ ՕՐԻՈՐԴՆԵՐ

Մարմնամարզի ուսուցման այն նոր կանոնագրին մէջ որ մուտ գտած է Բարիզի գլխաւոր վարժարաններուն մէջ և որ նպատակ ունի ապագայ սերունդներուն միտքը որչափ կարելի է սուղը ընել, պարի զեղարուեստը առաջին տեղը կը բռնէ: Խնդիրը հրախաղական հին պարերուն վրայ չէ, ոչ ալ այն պարին զոր նաւապետ Բուքիր նաւազներուն կը հարկադրէր պարել, լիաթոք շունչ առնելու համար: Այդ պարերն են, դասական քայլերով բոլբան, մագուրբան և մանաւանդ յափշտակիչ վալսը:— Կանոնագիրը կը յիշատակէ նաև բոլորովին մասնաւոր նորութիւն մը, այսինքն սովորեցնել երկու ոտերու վրայ ուսուցելու արուեստը: Այդպէսով՝ ալ ամուսինները չպիտի տրանջան, քանի որ արդէն իրենք պարտաւորիչ կերպով կը սովորին պարը: Այդ կանոնագիրին համաձայն, պարերը չպիտի ուսուցուին ձախլիկ վարժուհիներու կողմէ, որոնց աշակերտները օր մը տգէտ Թ'երբըջիքօռներ միայն կ'ըլլան պարի մէջ: Այլ անոնք մասնագէտներու կողմէ պիտի ուսուցուին, որովհետև տգեղ սորվուած պարմը՝ մինչև կեանքին վերջը անսրբագրելի կը մնայ:

## ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Դասական պարերը հիմնապէս սովորելու համար պէտք է ճարտար կաքաւումներով և որոշ չափու շրջաններով վարժութիւններ (exercice) ընել: Ուսուցիչները պէտք է աշակերտներուն տրամադրութիւններուն համաձայն վարժութիւններ սահմանեն, անոնց կարողութիւնները լաւապէս մշակելու համար: Անոնք որ նուազ յարմարութիւն ունին, պարտին ընականաբար կրկնապատկել իրենց վարժութիւնները: Եւ ամէն տեսակ տրամադրութեան մէջ գտնուողներ պիտի հասնին միեւնոյն նպատակին: Թէև բացառիկ ձիրք ունեցողներ տարբեր հմայք մը կը դնեն իրենց պարելուն մէջ:

Վալսը, պարերուն ամէնէն գեղեցիկը, ամէնէն դժուարը և ամէնէն հրապուրիչը նկատուած է:

Կարելի չէ նկարագրել այն հմայքը երբ սրահի մը մէջ մէկը կ'արժանանայ սա գնահատումին. ընտիր վալստող մըն է. միակ միջոցը որով կրնայ ձեռք բերուիլ այս կարողութիւնը՝ լաւ ուսուցիչէ մը պար սովորած ըլլալն է:

Վալսը. — Այն վեց շարժմամբ պարն է որ տիեզերական եղած է և որ աշխարհի ամէն կողմը մեծ ընդունելութիւն գտած է: Այս Վալսը կը պարուի նաև թէ՛ առանց Պոսթընի և թէ՛ Պոսթըն Վալսի բուն ձևերով: Այս վեց շարժումով պէտք է շրջան մը բոլորել: Այս պարը կը պարուի նուազին երեք չափով: Իւրաքանչիւր չափով երեք շարժում կը կատարուի, և ամբողջ շրջան

մը նուազին երկու չափով կը վերջանայ : Մեթրաչափը եօթանասուներ վեց կը ցուցնէ : Նուազը մէկ վայրկեանի մէջ կը զարնէ ութսուն չափ, ինչ որ քառասուն շրջան ընել կուտայ : Ուրեմն մարդ հինգ վայրկեանի մէջ այս հաշուով երկու հարիւր շրջան բոլորելով և իւրաքանչիւր կէս չափի շրջանը մէկ մեթր հաշուելով, հինգ վայրկեան վաւոյց մը չորս հարիւր մեթր ճամբայ մը կտրած կ'ըլլայ : Բոլրան. — Դասական պարերուն ամէնէն պարզն է, նուազ յարգի և նուազ վարժութիւն պահանջող դիւրին պար մը : Մեթրաչափը 100 կը ցուցնէ. բուքան կը պարուի նուազին երկու չորրորդ չափով : Մէկ վայրկեանի մէջ բուքայի քառասուն շարժում տեղի կ'ունենայ. հետեւաբար հինգ վայրկեանի մէջ երկու հարիւր շարժում կը կատարուի, բուքա պարող մը հինգ վայրկեանէն երկու հարիւր մէթր ճամբայ մը կտրած կ'ըլլայ :

Մազուրեան. — Երկրորդական կարեւորութիւն ունեցող այս պարը երեք չորրորդ չափով կը պարուի. մեթրաչափը հարիւր երեսունըութը կը ցուցնէ : Մէկ վայրկեանի մէջ երեսունըչորս ոտք կամ շարժում կը կատարուի որով հինգ վայրկեանի մէջ հարիւր եօթանասուն ոտք կամ շարժում կը պարունակէ : Հինգ վայրկեան մագուրքա պարելով մարդ երեք հարիւր մէթր ճամբայ մը կտրած կ'ըլլայ :

Մօթիթը. — Դասական պարերէն էն նուազ գործածականը, բարձր դասու սրահներէն բոլորովին ինկած է : Այս պարը նուազին չորս չորրորդ չափով կը պարուի : Մէկ վայրկեանի մէջ քառասուն ոտք կամ շարժումի հաշիւով, հինգ վայրկեանի մէջ երկու հարիւր ոտք կամ շարժում կատարուած կ'ըլլայ : Մարդ մէկ վայրկեան սքօթիչ պարելով քառասուն ոտք կամ շարժում կ'ընէ, որով վայրկեանէն երկու հարիւր մեզր ճամբայ մը առած կ'ըլլայ :

## ՊԱՐԱՀԱՆԴԵՍԻ ԱՐԴՈՒԶԱՐԴ

Ինչ որ ալ ըլլան օրուան նորոյթը և անոր բարեփոխութիւնները, որոնք արդուզարդի նոր մանրամասնութիւններ երեւան կը բերեն, մարդ պէտք է միշտ ճաշակաւորին ընտրութիւնը ընէ : Պարահանդէսի համար տամին վայելուչ նկատուած զգեստն է հետեւեալը. բայց գոյն և լանջաբաց (տէքսթիլ) զգեստ՝ ուսերը և բազուկները մերկ : Մերկ թեւերը ծածկող խիտ երկար ձերմակ ձեռնոցներ, երեսը բայ նրբաձեւ կօշիկներ : Պէտք է նաև կրել հովահար և պարացուցակ : Պարացուցակը մարդ կրնայ վրան ալ կրել : Յարգի են փղոսկրէ կամ սատափէ հովահարները : Արդուզարդի այս ձեւերը հաւասարապէս պարտաւորիչ են ամէն աշխարհիկ պարահանդէսներու :

Գալով այրերուն, անոնք միշտ պէտք է կրեն սև հագուստ, ձերմակ փողկապ և ձեռնոց, փայլուն կօշիկներ : Կարճ տաքատ հագնողներ պէտք է լուսթրին կօշիկ կրեն, եթէ կ'ուզեն որ գուլպաները երեւան, բայց վայելուչ չի նկատուիր գուլպաները երեւոյց այդ կարճ տաքատով կիսակօշիկները : Կրնայ գործածուիլ ձերմակ բաճկոնակ, բայց այս ֆանթէզի տարազը սև հագուստէն նուազ նախընտրելի է : Անոր համար ձերմակ ձեռնոցները նախընտրելի են, որովհետեւ քրեւ և կրի բեռլ ձեռնոցները կրնան իրենց գոյնովը արտաւորել տամին իրանազգեստը : Պարահանդէս մտնելու համար զինուորականներ պէտք է թողուն իրենց թուրը : Յանձնարարելի

է որ չի կրեն նաև իրենց ուսնոցները որովհետև անոնք թէ՛ կ'անշքացնեն իրենց տարազը և թէ՛ տամերը կը խրտչեցնեն, պարահանդէսի պաշտօնական զգեստը անպաճոյճ սեւը ըլլալուն համար: Նոյն բանն է զինուորականներուն համար, երբ անոնք ճաշի կամ երեկոյթի հրաւիրուած են:

## ՇԱՐԺՈՒՁԵԻՆ,

### ՆԵՐԿԱՅԱՅՈՒՆԵԼՈՒ ԿԵՐՊԵՐ

Շարժուածիւրը ընկերն են ճարտարախօսութեան և զայն կ'ամբողջացնեն: Անոնք կը բարեւոքեն և կ'արժեցընեն ճառախօսութիւնը: Շարժուածիւր պերճախօսութիւնն է, ըսած է Դեմոստենէս: Թէև շարժուածիւր ճարտարախօսութեան հզօր օժանդակ մըն է, երբ կը կատարուի գիտակցաբար, սակայն ծաղրելի և կատակերգական կը դարձնէ նիթական, երբ չափազանցուած ըլլայ: Շարժուածիւր պէտք է չափաւոր ըլլայ, խօսակցութեան նիւթին հետ յաջողապէս պատշաճեցուցուած: Նոյնպէս ալ զիմաստղը, նայուածքները մեծ հրապոյր մը կ'աւելցնեն, երբ հասկացողութեամբ կը գործադրուին:

## ՊԱՐԱՆՅԻԿ ԵՐԵԿՈՅԹ ՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԶԵԻՆ

Իւրաքանչիւրին մտքին մէջ ձգելու համար ընտիր երեկոյթի մը յիշատակը, ո և է տօնախմբութեան առիթով սովորութիւնն է, ընտանեկան ճաշէ մը յետոյ կազմակերպել երեկոյթ մը, ցայգահանդէս մը կամ պարահանդէս մը: Այս տեսակ ծրագիր մը ամէն կերպով յաջողցնելու համար պէտք է երկար ժամանակ յատկացնել և կանուխէն ձեռնարկել անոր և յարմարիլ այն ամէն տեղեկութիւններուն զորս պիտի թուենք հոս իբր մեծ պարահանդէսի մը յատուկ պայմաններ:

Կանխապէս տանաէրերը իրենց հրաւերները կ'ընեն ըլլայ անձամբ կամ նամակով կամ տպագրեալ քառթերով: Տանաէրերը պարտին հրաւիրել բաւական թուով տամեր, որպէսզի քալայիկներ առանց տամի չմնան: Անոնք պէտք է խորհին նաև քօթիչեօնի պիտոյքներու, պարացուցակներու և պարահանդէսին յարակից մանրամասնութիւններուն վրայ: Պարահանդէս կազմակերպող մը պէտք է պատրաստէ նաև հանդերձարան մը, տրամադրէ կարուհի մը որ պարահանդէսին ամբողջ տեւողութեան սպասէ որպէսզի կարելի ըլլայ նորոգել տամերու շրջազգեստին վրայ պատահելիք ո և է պատուածք: Պէտք է նաև հայթայթել լաւ և յաջող երաժշտախումբ մը և զանազան ծառայութեանց համար սպասարկուներ:

Մեծ պարահանդէսի մը մէջ միշտ պատրաստուած կ'ըլլայ պիւճեկ մը : որպէսզի պարողներ երեկոյթի միջոցին կարենան բան մը առնել : Յաճախ նաև հրաւիրեալներուն համար պատրաստուած կ'ըլլայ ընթրիք մը : Մեծ սեղանի մը տեղ, կրնան բռնել փոքրիկ սեղաններ ինչ որ նորութիւն մըն է, աւելի դրօսեցուցիչ ըլլալուն համար : Պարոնայք պէտք է հրաւիրեն ամենքը և ընթրեն անոնց հետ : Ընդհանրապէս այր և կին միասին չեն ընթրեր ուրիշ բան եթէ տիկինը ուրիշի մը կողմէ հրաւիրուած չէ :

Ահա քանի մը տեղեկութիւններ անունդներու մասին որոնք կրնան պատրաստուիլ պիւճեկի կամ ընթրիքի մէջ : Յիսուն հրաւիրեալներու հաշիւով պէտք է ունենալ քսանըֆինգ մսի ջուրի անօթ և նոյնչափ թէյի, քսան շօքօլաթի փոքր գաւաթներ, քսան սուրճի և քսանըֆինգ շամբաների : Ընթրիքի մը համար սեղանին վրայ պէտք է գտնուին նաև մանր հացեր, ամէն տեսակ մսեղէն աղանթերներ, պաղ միս, եզան կողամաս (Ֆիլի), կալանթին (ձուկ մը) և ըն : Պուտոյի, Պուսկօնի, էսբաների ընտիր գինիները կ'ընկերանան այս ուտելիքներուն : Երբ խնդիրը բարեկամայ միջեւ տեղի ունեցող ցայգահանդէսի մը վրայ է, պիւճեկ կրնայ շատ դիւրին, պարզ և խնայողական կերպով պատրաստուիլ : Պէտք է պատրաստել մսի ջուր, շօքօլա, թէյ, լեմօնաջուր, սէնսալիչ, որոնք կրնան մատուցուիլ պիակ մը հացով : Սեղանը կրնայ զարդարուիլ նաև ժամպօնով, պարարտ թարմ կովի խորովուած լեզուով, պսիռով, շօթով, խնձորի քաղցրաւենիով և վերջապէս եղանակի պտուղներով : Հրաւիրեալները ընդունելու համար, ամեն աէրերը կը գտնուին սրահին մուտքին մօտ և կը հիւրընկալեն իրենց հիւրերը : Նոյնն է նաև մեկնելու համար :

Մեծ ընկերութիւններու մէջ, ծառայ մը կ'իմացնէ

հասնողները և պարոններ բազուկին կուտան քալալիէ չունեցող տամերուն և զանոնք կը մտցնեն սրահ : Պարահանդէսի միջոցին անոնք կը հսկեն որ ոչ մէկ տամ չի կենայ առանց պարելու : Տանտիրուհին պէտք է զբաղի անով և ի նարկին ներկայացնէ պարողներ : Առհասարակ գրեթէ հինգ վայրկեանի մը տեսողութեամբ կը վերջանան պարերը բացի դատրիկնէլէ որոնք կը շարունակուին մինչև քսան վայրկեան առառաւելն, ձեւընդմէջ մէկ վայրկեան դադարով : Երեկոյթի մը մէջ պարերու դադարներու միջոցին երաժշտախումբը կտորներ կը նուազէ, որ ատեն պարողներ պիւճեկ կ'երթան կազուսուսելու, բմպկիներ առնելու համար : Պարահանդէսի հրաւիրեալ պարոնները պարաին պարել նախ տանտիրուհիին (եթէ կը պարէ անշուշտ) կամ անոր ազջիկներուն հետ և ետքն է որ կրնան պարել ուրիշ տամերու հետ :

## Պ Ա Ր Ա Հ Ա Ն Դ Է Ս Ը

Պարահանդէսը, որուն վրայ պիտի խօսինք հոս, պարերու կամ պարելու հանդէս մըն է որ կը սարքուի ընկերական ժամանցի մը համար, անհատական նպատի մը կամ բարեգործական օգուտի մը նպատակով: Երկկոյթներու և ցերեկոյթներու մէջ սարքուած ցայգահանդէսները անոնց մանրանկարները կը ներկայացնեն: Սակայն դիտելի պարագայ մը կ'սյ զոր կ'ուզենք պարզել: Պարահանդէս անուշով սարքուած բոլոր պարահանդէսները գեղարդար չեն արդարացիներ իրենց անունը, որովհետեւ անոնցմէ ոմանք զուրկ են պարահանդէսի կոչումէն և բոլորովին կը տարբերին անոնցմէ, որոնք ճշմարիտ պարահանդէսներ են, բաւին իսկական առումով: Պարահանդէսները իրենց դասակարգութիւններով երկու ձեւ կազմակերպութիւններ ունին, մասնաւոր և հանրային: Ասոնց ընտրութիւնը ճաշակէ և սովորութիւններէ կախում ունի: Առաջինները՝ անդիմալ ներկայացուածները, ընտանեկան ըլլալով, լաւ կազմակերպութեամբ անհատական ձեւնարկներ են: Իսկ վերջինները, դիմապատը ըլլալով, գէշ կազմաւորութեամբ հանրային պարահանդէսներ են: Անհատական պարահանդէսները մասնաւոր յատկութիւն մը ունին իրենց լուրջ ու ընտանեկան պարկեշտ դրօսանքի հանգամանքով: Անոնք միշտ լաւ կը ներկայացունին պարին նրբաճաշակ կանոններով, պայմաններով և բոլորովին քաղաքավարական ձեւերով:

Հոն երեւակայութիւն կամ ցնորք չկայ: Հոն վայելչութիւնն է որ կը տիրէ: Անոնք հրապոյրէ չեն դադրիր երբեք իրենց ազնիւ, ծանրաբարոյ ու շնորհալի պայմաններուն մէջ: Հոն մթնոլորտը լուրջ է և պերճ: Ներկաներուն փափկանկատութիւնը վերաւորող անկարգութիւններէ զերծ են անոնք:

Իսկ հանրային պարահանդէսները «պարահանդէս» դիմակին տակ երբեք միւսներուն հանգամանքը կրող յատկանիշը չունին, քանի որ անոնք ամէն կերպ անկարգութիւններու առիթ կուտան իրենց բարոյականի հակառակ վարմունքներով: Հանրային պարահանդէսները ստորերկրեայ խաւերու պէս գարշելի սրահներ են որոնց մութ մթնոլորտին մէջ գտնուողներ կը համարձակին ընել ամէն ինչ որ գէշ նպատակներու կը միտի: Այսպիսի պարահանդէսէ մը ներս ակնարկ մը պիտի բաւէր ցոյց տալու թէ ի՞նչ դասակարգի մարդիկ են: Պարի աստուածը ամօթահար, պիտի ծածկէր զէմքը չդիտելու համար այն մթնոլորտը, ուր երեւակայութիւն և ցնորք կ'իշխեն բացարձակ տիրապետութեամբ և մաքուր գեղարուեստը կ'իջնէ երբեմն էն ստորին խաւերու մէջ: Այդ սրահներու մթնոլորտը ապականած է ոչ միայն սոսկալի միքրօպներով, այլ նաև ստորին և անպարկեշտ դասակարգի պատկանող երկսեռ բազմութեամբ մը: Այդ դասակարգի մարդոց ներկայութեամբ խճողուած ամբօխի մը մէջ մտնել, ուր տեսարանը դժոխային ժխտի մը երեւոյթը ունի և ուր անբարոյականութեան ամէն տեսակները կը տիրապետեն, երթալ թաթխուել այդ ապականութեանց, միքրօպներու ուլկէանին մէջ, տուժել է բարոյապէս, նիւթապէս և միանգամայն ֆիզիքապէս, և ճշմարիտ անկում մըն է:

Դիմակը, Բարեկենդանի օրերուն բացառիկ և ծայ-

բայեղ զբօսանքներու և զուարճութիւններու միջոցն է : Ինչպէս ամէն տեղ, նոյնպէս պարահանդէսներու մէջ աւելի չափազանցօրէն : Ղիմակաւորները ծածկած իրենց ինքնութիւնը, մեծ մասամբ կը պատկանին վար դասակարգի մարդոց, որոնք հանրային այդ տեսակ վայրեր կ'երթան զբօսնուլ և հաճոյք կ'ըզան կարգ մը անպատշաճ և աղտոտ վարմունքներէ : Այդ տեսակ զբօսավայր մը մտնել պատուոյ ու բարոյականի նախանձախնդիր սօր մարդն է որ պիտի զիջանէր և հոն զբօսնուր, կեանք վարէր, կեանք մը՝ որ չարիքներ ու վնասներ կ'սպառնայ և ոչ ուրիշ բան : Դիմակը ուրեմն պարահանդէսին լրջութիւնը խանգարող և ընկերութիւնը ապականող միջոցը կ'ըլլայ : Ոչ մէկ անղիմակ պարահանդէս կրնայ իր ամէնէն զիւրամատչելի մուտքովն իսկ այնչափ ստորնացընել ներկաները, որչափ զիմակաւոր պարահանդէս մը՝ շատ բարձր մուտքի գին մը ունենալով մէկտեղ : Ընտանեկան պարահանդէսներու աղնուացուցիչ դերը կարելի չէ չփոթել հանրային պարահանդէսներու անբարոյացուցիչ հանգամանքին հետ : Պարահանդէսներ յաճախողները իրենց դասակարգի ներկայացուցիչներուն կրնան հաճելի ըլլալ, որովհետեւ ամէն դասակարգի մարդիկ իրենց դիրքին, աստիճանին պատկանողներուն ընկերութենէն հաճոյք կ'ըզան :

Ընկերութեան մէջ կնոջ դերը, ինչպէս գիտենք, մեծ ազդեցութիւն ունի, մասնաւոր երբ խնդիրը տիպար աղնուականութեան և բարոյականի տէր կնոջ վրայ է : Իգական սեռին այդ տեսակ պատուաբեր ներկայացուցիչներովն է որ կը փայլին ու կը բարձրանան լաւ ընկերութիւններ, երեկոյթներ կամ պարահանդէսներ : Հոն, անոնց թողած տպաւորութիւնը անոնց ինչ կերպ բարոյականի տէր ըլլալէն կախում ունի : Իգական սեռին վար

դասակարգը կ'ապականէ, կ'ստորնացնէ ընկերութիւնները, մինչդեռ այն սեռին պատուախնդիր անդամները կը կազմեն լաւ ու հաճելի ընկերութիւններ և կը վստահացնեն զանոնք : Այս կարգի ընկերական զբօսանքներ և ժամանցներ անշուշտ հաճոյքով կը փնտռուին և կը գնահատուին : Ուրեմն մարդ պէտք է խոյս տայ չար ընկերութիւններէ, ջանալով միշտ լաւ ընկերութիւններ մշակել :

## ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ՊԱՐԱՅԱՆԴԵՍՆԵՐ

Բացի հարսանեկան կամ արարողական պարահան-  
դէսներէն շատ մը պերճ և շքեղ պարահանդէսներ կան .  
ուր հնարագիտութիւնը կամ նորութիւնը նոր զարկ մը  
կ'առնեն : Կ'ուզեմ խօսիլ պալ պլանի, պալ ոօզի,  
պալ Ֆլօռօի վրայ : Առաջինները կը սարքուին միմիայն  
երիտասարդներու և մանկամարդ աղջիկներու կողմէ ,  
անոնց մէջ միայն իրենք արտօնուած են պարելու : Պա-  
տանիներ որոնք բոլորովին սեւ հագուած կ'ըլլան , պար-  
տին իրենց բաճկոնակին վրայ ունենալ քամկիա մը ,  
կամ ուրիշ ո և է ճերմակ ծաղիկ մը : Օրիորդները կը կրեն  
ճերմակ շրջազգեստ, զարգարուած ճերմակ ծաղիկներով ,  
խնչպէս , մարգարտածաղիկ , վարդագոյն ճերմակ ծաղիկ ,  
եզրեւանի , հովտաշուշան , եւն . : Բացի այս «սպիտակ  
պարահանդէս»ներէ որոնք խիստ յարդի են , այսօր ուրիշ-  
ներ ալ գոյութիւն ունին , որոնք նոյն անունը կը կրեն  
և որոնք գրեթէ միայն Նիսի մէջ կը տրուին : Այս վեր-  
ջիններուն մէջ տամ և քափալիէ պէտք է հագուած ըլ-  
լան ամբողջովին ճերմակ : Այս միեւնոյն սկզբունքով  
Նիսի մէջ կը տրուին պալ պլեօ և պալ ոօզ եւն . : Հոն  
միայն ալլանդակութիւններ տեղի կ'ունենան : Բարիզի  
մէջ «պալ ոօզ» կը կոչուի այն պարահանդէսը , ուր ման-  
կամարդ կիներ ներկայ կ'ըլլան կրելով վարդագոյն ար-  
դուզարդեր : Իսկ պարոնները կը ներկայանան սեւ հա-

գուտով իրենց լամբակին վրայ ունենալով վարդագոյն  
ծաղիկներ : Տանտիրուհիին կողմէ կ'ուզուին հրաւեր-  
ները , որոնք հետեւեալ կերպով գրուած կ'ըլլան .— «Տի-  
կին Գ . պատիւը ունի ձեզմէ խնդրելու ներկայ գանուիլ  
վարդագոյն պարահանդէսին , զոր պիտի տայ իր տունը  
(կամ այսինչ սրահին մէջ)» :

Անոնք որ վարդագոյն հագուտի մասնաւոր ծախ-  
քեր չեն ուզեր ընել , կը դրկեն շնորհակալութեան գիր  
մը և ներում կը խնդրեն չկրնալ ներկայ գանուելնուն  
համար : Կան նաև «ծաղկաւէտ պարահանդէս»ներ , պալ  
Ֆլօռօ , ուր տիկիներ և մանկամարդ օրիորդներ մաս-  
նաւոր արդուզարդ մը կրելու պէտքը չունին : Տանտի-  
րուհին է որ կ'ընէ ծաղիկներու ընտրութիւնը , զոր օր-  
ոսկեծաղիկ (Քրիզանդէմ) և բոլոր հրաւիրեալները պար-  
տին երեւիլ այս ծաղիկով : Հետեւաբար այս փեսակ պա-  
րահանդէսներ կը գանազանուին եղանակին յարմար ծա-  
ղիկներով : Գարնանածաղիկ (բոխմըվէս) , յապոնափարդ  
(հօրթանսինտ) , շահողրամ (էօյեէ) , երկնագոյն շուշան  
(իոիս) , արքիթէս (արքիտէ) , (քամէլիա) հոն կը բերեն  
իրենց գոյները , անուշաճոտութիւնները և . . . իրենց լեզուն :

## ԸՆԿԵՐԱՅԻՆ ՊԱՐԱՋԱՆԴԵՍՆԵՐ

Չմեռը Բարիզի մէջ կը տրուին «Պալ տը Սօսիէթէ» անուեով մեծ թուով պարահանդէսներ : Բարեգործութեան, գթութեան, նպատի նպատակներով, նախաձեռնութեամբ վաճառականներու և պաշտօնատարներու : Կազմակերպութիւնը ստանձնող մասնախումբը պաշտօն ունի հանդէսը ամէն կերպով նպատաւոր, շքեղ ընելու, վառ պահելու և կարգապահութիւնը ճշգրիտ կերպով գործադրելու : Պարերը ինչպէս նաև քօթիյեօնի ձեւերը վարելը (diriger) պէտք է յանձնուի ճարտար, կարող ուսուցիչներու կամ փորձառու պարողներու : Վարիչը (տիրիփէօն) զոյգ պարերու ատեն պէտք է սրահին մէջ տեղը կենայ և հսկէ պարերուն, գատրիչներու ատեն, նուազախումբին աջ կողմը կեցած : Տիրիփէօնին ձայնը պէտք է առոյգ ըլլայ և ներկայ պարողներէն լսելի ըլլալու չափ բարձր : Տիրիփէօնին պերճահնչիւն կամ բարձրագոյ աղմուկը անյարմար է :

Մասնախումբը բաղկացած կ'ըլլայ 2էն 50ի չափ անդամներէ, երեկոյթին կարեւորութեանը համաձայն : Օրէնք է որ մուտքի միջոցին կը ժողվուին հրաւիրագրերը, մինչդեռ գանձապետը կը գանձէ մուտքի գինը : Երկրորդ անձ մը տամերուն կը ներկայացնէ պարացուցակներ, որոնց վրայ տօնախմբութեան մասին արձանագրութիւններ գրուած կ'ըլլան : Ստեն մը պարացուցակները քափալիէներուն կը տրուէին : Մասնախումբին անդամները

պաշտօն ունին սրահ առաջնորդել այն տամբը որոնք իրենց սպասարկող քափալիէ մը չունին քովերնին : Մայր մը իր աղջկան հետ սրահ մտած ատեն երբ դիպուածով միայն մէկ հիւրամեծար կը գտնուի, հիւրամեծարն է որ իր թեւը տիկինին պէտք է տայ և մանկամարդ օրիորդը պէտք է քալէ մօրը հետ աջ կողմէն :

# ԴԻՄԱԿԱԽՈՐ ԵՒ ԾՊՏԵԱԼ ՊԱՐԱՀԱՆԴԵՍՆԵՐ

Դիմակին գիւտը կուգայ շատ հին ժամանակներէ, երբ կը գործածուէր թատերական ներկայացուցմներու մէջ: Զուարճանալու համար անձանօթ ըլլալու գաղափարը ծագում կ'աւնէ հին ատեններէ և կ'սկսի արագօրէն ծաւալիլ: Իսկ գալով ծագեալ պարահանդէսներուն, անոնք երեւան եկած են Ժ. դարուն, իբր նորութիւն արքունիքներու մէջ, բայց այդ նորութիւնը վերջ գաւ միջադէպի մը հետեւանքով՝ Կարոյոս Զ. կայսեր օրով: Ֆրանսայի Խորհրդարանը 1535 Նոյ. 26ին հրովարտակով մը կ'արգիլէ դիմակին շինութիւնը և ներածութիւնը: Դիմակաւոր պարահանդէսներու մէջ պէտք է կրել սօմինս մը, եթէ մարդ չուզեր յայտնուիլ: Ամէն մարդ զիտէ այս կնգուզաւոր վերարկուն, որուն մէջ մարդ բացարձակապէս անձանօթ կը մնայ: Նոյնն է գայլադիմակը զլսուն համար: Ամէն գոյնով թաւիչէ և սնդուսէ գանազան տեսակ դիմակներ կան, որոնք կը ծածկեն միայն դէմքին վերի մասը՝ ժանեակի կտորով մը վարի մասը քողարկելով: Թուղթէ և թելէ դիմակները նուազ յարգի են: Պարահանդէսին բոլոր տեղութեանը միջոցին ոչ մէկ պատրուակով պէտք չէ թողուլ սօմինսն կամ դիմակը: Ծպտեալ պարահանդէսներու մէջ հազուսանները կ'այլազանին և զանոնք կրողները կը հետաքրքրեն զիրենք զիտողները իրենց բոլոր կերպարանափոխութիւններով: Խոշոր գլուխները, ինչպէս նաև կեղծ մօրուքը

և քիթը՝ ենթական բոլորովին կ'այլափոխեն: Մարդ պարզ սեւ հագուստով իսկ կրնայ անձանօթ մնալ, միայն այս դիմափոխութիւնները կատարելով:

Պարահանդէսի վրայ խօսելով, պիտի ուզենք քանի մը տող ալ նուիրել Պոլսոյ մէջ տեղի ունեցող պարահանդէսներուն, անոնց սրահներուն մասին տեղեկութիւններ ալ տալով:

Թուրքիոյ մայրաքաղաքին, ամէնէն ընդարձակ, հարուստ և օտարազգիներով լեցուն կեդրոնը Բերայի մէջ կը սարքուին հայ և օտարազգի բազմաթիւ պարահանդէսներ, մեծ ու պզտիկ 10-12 սրահներու մէջ: Մեր սրահները չեն կրնար մրցիլ անշուշտ բարիզի ընթարձակ ու պերճ սրահներուն հետ: Բերա Բալասը կրնայ նկատուիլ Բերայի համար բարիզի Օբերան: Բոլոր մեր օտար սրահներուն մէջ Բերա Բալաս առաջին տեղը կը բռնէ, ուր կը տրուին միմիայն բարձր դասու մեծ պարահանդէսներ: Անոր սրահները իրենց պերճութեամբ և շքեղութեամբ կը գերազանցեն Իւնիօն Ֆրանսեզիները, Թերոնիայիները, Սօչիէքա Օբերանա Իրալիանայիները, որոնց մէջ ալ կը տրուին մեծ պարահանդէսներ: Ասոնցմէ դատ կան նաև ուրիշ քանի մը սրահներ ուր ընտանեկան, դիմակաւոր և անդիմակ պարահանդէսներ տեղի կ'ունենան: Բրքի Շանի սրահները թատերական, երաժշտական և պարահանդէսի կազմակերպութիւններու վայր մը եղած են: Այս վերջինին մէջ յաճախ հանրային պարահանդէսներ կը տրուին: Օտէմն ալ ծանօթ է Պոսեցիներուն՝ իբր երկրորդական կազմակերպութիւններու վայր մը:

Թօքաթլեանը այն հայ սրահն է, որ օտար բարձր սրահներուն հետ կրնայ մրցիլ. կրնանք ըսել թէ Հայերուն Բերա Բալասն է, համբաւաւոր իր պերճութեամբ և անուշտովը: Հոն միշտ հայ և օտարազգի բարձր պա-

բանադէտներ և հարսնիքներ ու շքեղ ցայգահանադէտներ կը կազմակերպուին: Բազմաթիւ օտար պարահանդէտներու մէջ կը յիշուին երեք հայ պարահանդէտներ, որոնք ամէն տարի անխափան տեղի կ'ունենան բարեգործական նպատակով, ասոնք են. «Ազգանուէր Հայունեաց», «Միացեալ» և «Ազգատասիրաց»: Ասոնցմէ առաջինը իր կազմակերպութիւնովը կը տարբերի բացարձակապէս, անդիմակ ըլլալով: Միւս երկուքը դիմակաւոր ըլլալով, չեն ունենար անշուշտ առաջինին հրապոյրը: Միացեալ և Ազգատասիրաց՝ երկուքն ալ մեծ պարահանդէտներ ըլլալով, պէտք է անդիմակ ըլլան, արդարացնելու համար իրենց անուշը և հանդամանքը:

## ՊԱՐԸ ՏԵՍԱԿԱՆԱՊԷՍ

Մեր նախընթաց բացատրութիւնները լրացուցած պահուն, ինչո՞ւ զանց ընենք պարին տեսական գիտութեան մասին տեղեկութիւններ, որոնց թերեւս սպասեն մեր ընթերցողները: Մենք համաձայն չենք երբեք պարին տեսականապէս ուսուցուելուն, որովհետեւ այդ միջոցը կը ծառայէ միայն գէշ պարողներ պատրաստելու, ենթադրելով որ բոլորովին ապարդիւն չըլլայ: Այս պատճառով մեր սաղօններուն մէջ մինչեւ հիմա երեցող պարերու տեսական բացատրութիւններու մասին (այսինքն՝ ոտքի չափերու, կեցուածքի, շարժուձևերու և պարելու կերպին) որ և է յիշատակութիւն չենք ընել, լաւ համոզուած ըլլալով որ պարը յաջողապէս ուսանելու միակ միջոցն է՝ կարող ուսուցիչի մը կողմէ պատրաստուիլ: Միայն թէ բաւականանանք հոս զննելով այդ ծանօթ պարերէն գլխաւորներուն անունները և անոնցմէ երկուքը՝ քատրիլը և լանսիէն վարելու (diriger) յարմարագոյն բառերը Փրանսերէն և հայաստ. Փրանսերէն անուններով, որպէսզի պարի սիրահարներ կամ հետեւողներ զանոնք ճշգրտապէս սովորին և գիտնան անսխալ արտասանել:

Վալս  
Բոլքա  
Մազուրքա  
Սքոթիշ

Valse  
Polka  
Mazourka  
Schottisch

Գաարիլ	Quadrille
Լանսիէ	Lanciers
Բա աը Գաթորը	Pas de Quatre
Բա աէ Բաթինէօն	Pas des Patineurs
Քրէօց-Բօլքա	Kreuz-Polka
Թու Սթէքս	Two-Steps
Վաշինկթըն-Բօսթ	Washington-Post
Կավօթ վալս	Gavotte valse
Թիրօլիէն	Tyrolienne
Բա ա'էսպաներ	Pas d'Espagne
Լընօքս	Lenox

## Գ Ա Տ Ր Ի Լ

## QUADRILLE

(Գասրիլը վարելու բառերը)

ԲՈՂՄԻՆՈ ՖԻԿԻՆՈ	PREMIÈRE FIGURE
Շէն Անկլիէզ	<i>Chaîne Anglaise</i>
Պալանսէ, (Թուռ սը մէն)	<i>Balancer, (Tours de mains)</i>
Շէն սը սամ	<i>Chaîne de dames</i>
Ավան-գաբրը	<i>Avant-quatre</i>
Տըմի-չէն անկլիէզ	<i>Demi-chaîne anglaise</i>

ՏԷՕՋԻՄ ՖԻԿԻՆՈ	DEUXIÈME FIGURE
Ավան-սէօ, Թրավէրս	<i>Avant-deux, Traverser</i>
Շասէ, Ռըբրավէրս	<i>Chasser, Retraverser</i>
Պալանսէ, (Թուռ սը մէն)	<i>Balancer, (Tours de mains)</i>
Ավան-գաբրը	<i>Avant-quatre</i>
Տըմի-չէն անկլիէզ:	<i>Demi-ch. anglaise.</i>

ԹՐՈՒԱԶԻՄ ՖԻԿԻՆՈ	TROISIÈME FIGURE
Մէն սուսաբ, Մէն կօժ	<i>Main droite, Main gauche</i>
Պալանսէ, Շանժէ սը բլաս	<i>Balancer, Changer de place</i>
Ավան սէօ. Անօն, Սալիւ	<i>Avant-deux, Encore, Salut</i>
Ավան-գաբրը	<i>Avant-quatre</i>
Տըմի-չէն անկլիէզ:	<i>Demi-ch. anglaise.</i>

ԳԱԹԻՄ ՖԻԿԻՆՈ	QUATRIÈME FIGURE
Քօնսիլու լա սամ	<i>Conduire la dame</i>
Ավան-քոուս, Անօն	<i>Avant-trois, Encore</i>
Ավան-սէօլ	<i>Avant-seul</i>
Տըմի-նօն	<i>Demi-rond</i>
Տըմի-չէն անկլիէզ:	<i>Demi-ch. anglaise.</i>

ՍԷՆԲԻՄ ՖԻԿԻՆՈ	CINQUIÈME FIGURE
Կալօբ	<i>Galop</i>
Շէն սը սամ	<i>Chaîne de dames</i>
Պալանսէ (Թուռ սը մէն)	<i>Balancer, (Tours de mains)</i>
Ավան գաբրը, Անօն, Սալիւ:	<i>Avant-quatre, Encore, Salut.</i>

Վեցերորդին, այսինքն Ռօնի ձեւերուն վրայ չպիտի ուզենք խօսիլ քանի որ անիկա որոշ, սահմանուած ձեւեր չունի: Տիւրիթեօնը իր ուզած կերպով ձեւեր գործադրել կուտայ: Արդէն Գատրիլի այս վերջին մասը ետքէն հեղինակուած է, համախուժմբ ձեւով մը պարելու և ատոր համար Ռօն անունը կը կրէ: Ինչպէս Լանսիէն, Գատրիլն ալ նախապէս միայն հինգ ձեւերէ բաղկացած հեղինակութիւն մըն է:

Ծանօթ. — Գատրիլը կը պարուի երածշտութեան չորս չորրորդ չափով: Ան ունի հինգ ձեւ, որոնց իւրաքանչիւրը երեսուն երկու չափով կը պարուի, ինչ որ վաթսունը չորս օտք կամ շարժում կը նշանակէ:

Նուագախումբին նախապէս տուած կոչին (սիննալ) համաձայն քալալիէները իրենց տամբը թեւր առած կուգան կազմելու քառեակը (քառէ), որուն մէջ ամէն զոյգ իր դէմը կ'ունենայ իր առաջուց որոշած վիզալիները: Քալալիէները Գատրիլի համար իրենց տամբը ընտրելով պարտին իրենց վիզալիներն ալ որոշել, կարելի եղածին չափ շուտ կազմակերպելու համար Գատրիլը:

Գատրիլի իւրաքանչիւր ձեւը պարել սկսելէ առաջ նուագախումբը ութը չափ (measure) կըprosիսիօն մը կը զարնէ:

Գատրիլը սկսելէ առաջ տիւրիթեօնը պարտի պէտք եղած կարգադրութիւնները ընել ստպէս. — Առաջին ձեւին համար սուաջնութիւն տալով սրահին մուտքի կողմը շարք կազմող զոյգերուն և անոնց դիմացի կարգին: Իսկ հակառակ կողմը կեցողները ֆօնրը բառքի, կը յաջորդեն առաջիններուն, կրկնելով անոնց ըրած միևնոյն ձեւերը:

Սօռքի, Ռէսքի ըսելու տեղ աւելի վայելուչ է գոր-

ծածել Բուրիեռ, Տեօգիեմ, Թոուազիեմ և Քարիեմ բառերը:

Երկրորդ և երրորդ ձեւերուն համար սուաջնները կ'ըլլան մուտքի կողմը կեցող լուրջ քալալիէները իրենց վիզալի տամբով. երկրորդ եղանակը առաջին քալալիէներուն աջ կողմը կեցող ֆօնրը բառքիին քալալիէները, իրենց դիմացի տամբուն հետ. երրորդ քալալիէները առաջին քալալիէներուն դիմացը գտնուողները. իսկ չորրորդները առաջին քալալիէներուն ձախ կողմի շարքին մէջ գտնուող քալալիէները՝ միշտ իրենց վիզալի տամբով:

Չորրորդ ձեւը, սրահին մուտքի կողմը շարքէն սկսելով առաջին զոյգը կ'ըլլայ բուրիեռ, քօլինը՝ տեօգիեմ և յաջորդաբար: Քառեին ամբողջ չորս շարքերուն առաջին զոյգերը բուրիեռ կ'ըլլան:

Հինգերորդ ձեւը առաջին ձեւին կարգադրութեանը պէս պէտք է ըլլայ:

Գատրիլը քառակուսի կազմուած ըլլալով, առաջին և հինգերորդ ձեւերը պէտք է երկու անգամ կրկնուին, իսկ երկրորդ, երրորդ և չորրորդ ձեւերը չորս անգամ: Իսկ եթէ Գատրիլը երկու շարք կը կազմէ միայն, այսպինքն սրվի ֆառէ, այն ստան առաջինը և հինգերորդը մէկ անգամ, իսկ երկրորդը, երրորդը և չորրորդը երկու անգամ պէտք է կատարուի:

Քանի մը խօսք պիտի ուզենք ընել այն Գատրիլի մասին, որ անիրաւարար հանրաձայնօթ զարձած է մեր սալօններուն մէջ, մինչդեռ այդ Ֆրանսական Գատրիլը, (Գատրիլ Ֆրանսէ), Բարիզի սալօններէն զրկիլէ շատոնց վտարուած է և միայն գաւառական գեղըուկ միջավայրերու և երբեմն ալ հանրային պարահանդէսներու մէջ է միայն որ կը պարուի, քիչ մը բարեկրօնեալ ձեւով:

Բարեկցյին կը պարէ ուրիշ սիրուն և դժուարակնճիո Գատ-  
րիչներ, Գասրիլ Ամերիկէն, Լա Պուլանժէո, Գասրիլ Վա-  
րիէքէ Բարիզիէն, Գասրիլ Բոլօ Եւայն, մինչդեռ մեր  
մէջ կը շարունակեն դեռ նոյն տարակ և տղայական  
Գատրիլը պարել :

Ինչպէս ամէն ազգ, նոյնպէս մեր ազգն ալ ունեցած  
է իր հին ազգային պարերը, որոնք դժբաղդաբար մուտ  
գտած չեն ժամանակակից աշխարհիկ բարձրուն մէջ,  
այլ անոնց անդը գրաւուած են եւրոպական պարերը :

Փափաքելով որ Հայն ալ իր եւրոպական ճաշակով  
պարերը ունենայ, փորձած ենք հեղինակել զանազան  
պարեր, որոնց եւրոպական շնորհալիութիւնը ուրախ ենք  
որ պարի սիրահարներու կողմէ գնահատուած է : Այդ  
պարերէն մէկն է Հայկական Գատրիլը Գասրիլ Նասիօ-  
նալ Արմենիէն, որ ութնական զոյգերով պարուող և  
հինգ ձեւէ (figure) բաղկացած սիրուն պար մըն է :

Կը բաղձայինք որ Հայկական Գատրիլը ընդհանրա-  
նար ամէն կողմ և մուտ գտնէր մեր երեք ազգային  
ծանօթ պարահանդէսներուն մէջ ալ փոխանորդելով  
(Գատրիլ Ֆրանսէյն ծանօթ Գատրիլին :

Մենք մեր կողմէ կը յուսանք այդ փափաքին մղում  
տալ Հայկական Գատրիլը ընդհանրացնել աշխատելով,  
ազգային շրջանակներէ սկսելով զայն դասաւանդել մեր  
վարժարաններու մէջ և ուսուցանելով մեր պարի դաս-  
ընթացքին մէջ :

Հայկական Գատրիլը եւրոպական պարերու ձեւով  
հեղինակուած ըլլալով, ֆրանսերէն բառերով կ'առաջ-  
նորդուի և ունի իր մասնաւոր եղանակը, թէև կրնայ  
պարուիլ սովորական Գատրիլի եղանակով : Հայկական  
Գատրիլը կը պարուի երաժշտական չորս չորրորդ չափով  
և իւրաքանչիւր ձեւ ունի վաթսուընչ չորս չափ, ինչ որ  
հարիւր քսանը ութը ոտք կամ շարժում կը կազմէ :

ԼԱՆՍԵՒԷ LANCIEERS

(THE LANCER'S)

(Լանսիէն վարող բաւերը)

ԲՈՒՐՄԻԷՆ ՖԻԿԻՒՌ PREMIÈRE FIGURE

Ավան-սեօ, Անֆօն, սալիւ	<i>Avant-deux, Encore, Salut</i>
Լէ քիռուառ	<i>Les tiroirs</i>
Պալանս	<i>Balancer</i>
(Սալիւ և Ռեվիւանս) :	<i>(Salut et Révérence).</i>

ՏԵՉՁԻԷՄ ՖԻԿԻՒՌ DEUXIÈME FIGURE

Լէ սալիւ	<i>Les saluts</i>
Շասէ-քրուազէ	<i>Chassé-croisé</i>
Ավան-ուի, Անֆօն, Բլաս :	<i>Avant-huit, Encore, Place-</i>

ԹՌՈՒԱՋԻԷՄ ՖԻԿԻՒՌ TROISIÈME FIGURE

Ավան-սեօ, Անֆօն, Սալիւ	<i>Avant-deux, Encore, Salut</i>
Շէն քր սամ :	<i>Chaine de dames.</i>

## ՔԱԹՈՒԻԷՄ ՖԻԿԻՒՌ

## QUATRIÈME FIGURE

Լէ վիզիբ

*Les visites*

Շասե, Սալիւ

*Chasser, Salut*

Ռրեասե, Սալիւ

*Rechasser, Salut*Շէնց սր *sauit*, Բլաս:*Chaîne de dames, Place.*

## ՍԷՆՔԻԷՄ ՖԻԿԻՒՌ

## CINQUIÈME FIGURE

Կռան-շէնց

*Grande chaîne*

Էնվիբի

*Inviter*

Շասե, Սալիւ

*Chasser, Salut*

Ռրեասե, Սալիւ

*Rechasser, Salut*

Տեֆիլե

*Défiler*

Ավան-ուի, Անֆոն, Բլաս:

*Avant-huit, Encore, Place.*

Ծանօթ. — Լանսիէն՝ ինչպէս Գտարիլը, ունի հինգ ձեւ և կը պարուի երաժշտութեան չորս չորրորդ չափով: Իւրաքանչիւր ձեւ տարբեր տարբեր չափերով կը պարուի:

Առաջին ձեւը կը պարուի երաժշտութեան քսանը չորս չափով ինչ որ քառասունը ութը սաք կամ շարժում կը կազմէ: Թէև այս առաջին ձեւին մէջ Լէ քիրուարը, որ ութը չափի բաժին մը ունի, մեր սալօններուն մէջ այնչափ չի պարուիր:

Երկրորդ ձեւը կը պարուի նոյնպէս երաժշտական քսանը չորս չափով մը:

Երրորդը կը պարուի երաժշտական տասներ վեց չափով մը:

Չորրորդը կը պարուի երաժշտական քսանը չորս չափով մը:

Հինգերորդը կը պարուի երաժշտական քառասունը ութը չափով մը:

Լանսիէն չորսական զոյգով և քառակուսի կեցուածքով կը պարուի:

Լանսիէն իր յատուկ եղանակով պէտք է պարուի:

Լանսիէն վեց զոյգով ալ կը պարուի:

## Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Վերջացնելով մեր բոլոր խորհրդածութիւնները կ'եզրակացնենք թէ՛ պարը աշխարհիկ գեղարուեստական ժամանց մը և միանգամայն մարմնակրթանքի սքանչելի միջոց մըն է, որոնց անփոխարինելի օգտակարութիւնը ոչ ոք կրնայ ժխտել: Իմացական դաստիարակութեան մէկ անհրաժեշտ մասը կը կազմէ ան զոր ամէն անհատ պէտք է մշակէ: Պարը ինքնին չի սովորուիր ոչ ալ տեսական միջոցներով, դասագիրքով կամ համբակ թերուաներու միջոցաւ:

Մասնագէտ ուսուցիչի մը դերը մեծ նշանակութիւն ունի արուեստագիտական ճաշակով պար սովորելու մէջ, եթէ մէկը կ'ուզէ օժտուիլ այդ գեղեցիկ մարզանքին աշխարհիկ և առողջապահական առաւելութիւններովը և փայլիլ անոր հրապոյրներովը:

Երեւելի գրագէտներէ, իմաստուններէ, նշանաւոր անձնաւորութիւններէ, ինչպէս Մեծն Սօկրատէ, Պղատոնէ, Սիմոնիդէսէ, Նարոլէոն Ա. է ետքը մենք նոր ջատաղովութիւններու պէտք չենք տեսներ փառաւորելու համար պարին ժամանակակից կեանքի մէջ ունեցած արժէքը և դերը: Այլ մեծ հեղինակին հետ կը կրկնենք. «Առանց պարի անհատը անկատար է» «Sans la danse l'individu est incomplet»:

Վ Բ Ի Պ Ա Կ

Վ Բ Ի Պ Ա Կ

Էջ	Տող	Սիւալ	Ուղիղ
5	22	incomplète	incomplèt
9	4	le danse	la danse
24	25	այն մարդոց	այր մարդոց
28	13	կռէնկուռ	կռէնկուառ
50	9	յաճախու մները	յաճախու մներէն
50	18	պահը	պարը
59	19	արիւններթու թիւն	արիւններթու թեան
78	1	սեռքը	ձեռքը
94	վերջին	որով վայրկեանէն	որով հինգ վայրկեանէն

	Էջ
Նախաբան	5
Խնչ է պարը	7
Պարին ծագումը	11
Պարին պատմականը	16
Պարին երեք օգտակարութիւնները	34
Մնջկատակը	39
Աշխարհիկ սովորութիւններ	40
Տղայոց կրթութիւնը	43
Պարին առողջապահական հանգամանքը	46
Պարին վրայ դատաւճիռներ	49
Մարմնակրթանքի միջոցներ	54
Կենցաղագիտական կարեւոր գիտելիքներ	61
Զգեստաւորում և վայելչագիտութիւն	65
Փոքրիկ կուսակցութիւններ	72
Սիրամուրութեամբ պարողներ և պարել չգիտցող պարողներ	73
Խնչպէս պէտք է բազուկը տամբն ընծայել պարի համար	76
Տարբեր ողջոյններ տարիքի և սովորի համեմատ	79
Պարին մէջ պարտականութիւններ	86
Պէտք է միայն երիտասարդները պարեն	87
Դասական պարերուն երաժշտական չափերը	91
Վալսեցէք օրիորդներ	92
Վիճակագրութիւն	93
Պարահանդէսի արդուզարդ	95
Շարժուձևեր, ներկայացուելու կերպեր	96
Պարանցիկ երեկոյթ մը կազմակերպելու ձևը	97
Պարահանդէսը	100
Զանազան տեսակ պարահանդէսներ	104
Ընկերային պարահանդէսներ	106
Դիմակաւոր և ծպտեալ պարահանդէսներ	108
Պարը տեսականապէս	111

# ՏԻԿԻՆՆԵՐ, ՕՐԻՈՐԴՆԵՐ, ՊԱՐՈՆՆԵՐ

Կ Ո Ւ Զ Է Ք

ՆՇԱՆԱԼՈՐ պարոզ մը ըլլալ  
Հիանալի Վալս պարոզ մը

փուրացե՛ք

«Բերա, Սագրզ Աղան, «Էրմիս Սիլլօղոս»

Մեր պարի Դասընթացի շեղ Սալօնը :

Նախանձախնդիր թէ հայն ալ ունենայ պարի Դասընթացքի յատուկ, լաւ սրահ մը, վարձած ենք Բերա, Սագրզ Աղան, «Էրմիս Սիլլօղոս»-ի ընդարձակ և շքեղ սալօնը, ուր ոչ միայն տեղի պիտի ունենան կանոնաւորապէս մեր պարի դասաւանդութիւնները այլ նաև պիտի կազմակերպենք ընտանեկան շքեղ երեկոյթներ և պարահանդէսներ :

Մեր պարի դասընթացքի օրերը և ժամերը

Կ Ի Ն Ե Ր Ո Ւ Հ Ա Մ Ա Ր

Բշ . , Դշ . և Ուր . (ցերեկ) ժամը 2-5 (ը . և .)


Ա Յ Ր Ե Ր Ո Ւ Հ Ա Մ Ա Ր

Բշ . , Դշ . և Ուր . (գիշեր) ժամը 8-12 (ը . և .)

Մեր սրահին մէջ կ'առանձնենք դասախօսել առանձինն և հաւաքաբար դասեր թէ կէս օրերէ առաջ և թէ կէս օրերէ վերջ ինչպէս նաև գիշերներ մասնաւոր ժամադրութեամբ :

Պատրաստ ենք դասաւանդել տուներու մէջ մասնաւոր դասեր, ինչպէս նաև դպրոցներու, քօլեճներու, քրիւպներու մէջ :





Р. У.

№ 2690